ԱԲԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՐՈՒՍԵԼ

ՆԿԱՐԻՉ՝ ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 891.981-3 Միքայելյան
ԳՄԴ 84Հ7-4
Մ 394

Խմբագիր՝ Ֆելիքս Մելոյան

Մ 394 **Աբել Միքայելյան**
Կարուսել/_ Եր., «Զանգակ–97», 2006, 192 էջ:

Մ $\frac{4702080201}{0003(01)2006}$ 2006 թ. ԳՄԴ 84Հ7-4

ISBN 99930 - 2 - 019 - 7

© «Զանգակ–97», 2006 թ.

Այս գրքի բոլոր հերոսներն իրական են... Մտացածին եմ միայն ես

12 Նոյեմբերի, 1999

Պարոն վան Վիլետի ձեռքին կարմիր ճամպրուկ էր՝ անկյունում սպիտակով դրոշմված իր ընկերության անունը՝ "Events": Նույն անունը, սակայն, կարմիրով կար նաև նրա սպիտակ բաճկոնի օձիքին: Մենք գիտեինք, որ գործ ենք բռնել լուրջ ընկերության հետ: Պարոն վան Վիլետի արտաքինը նույնպես վստահություն էր ներշնչում. նա ուներ ճերմակ մազեր և հավանաբար երկար կենսագրություն:

Սակայն ներկայանալիս նա տվեց միայն անունը՝ Ֆլիպ, և իր կարմիր ճամպրուկը սիրով զիջեց Մկոյին: Այդ ժամանակ ես պատկերացում չունեի, որ դա Մկոյի առաջին ու միակ շփումն էր ընկերության գույքի հետ, այլապես կխնդրեի, որ ճամպրուկը վերցներ Ֆլիպին դիմավորելու եկած մեր մյուս գործընկերը՝ Վլադիմիրը, կամ թեկուզ կվերցնեի ինքս: Բայց գրողի ծոցը ճամպրուկը, Հայաստան էր եկել մեկը, որ առաջիկա մեկուկես տարվա ընթացքում մոտ մեկուկես միլիոն դոլարի ներդրում էր անելու այստեղ: Բայց այդ ժամանակ մենք դա չգիտեինք: Մեր խնդիրն էր հաջողությամբ ավարտել հոլանդացու հետ արդեն սկսած բանակցությունները և մեր երկրում բացել նրան պատկանող ընկերության ներկայացուցչություն:

Մենք Ֆլիպին տարանք լավ հյուրանոց, ուր նախօրոք նրա համար սենյակ էինք պատվիրել: Բայց հոլանդացին չէր շտապում քնել և առաջարկեց մեկական բաժակ խմել ֆոյեի բարում: Առաջարկն, անկեղծ ասած, անսպասելի էր՝ հաշվի առնելով գիշերվա ժամը և նրա դիրքը: Բայց, իհարկե, նաև հաճելի, գոնե ինձ համար. հարյուր գրամ օղին անդավաճան ընկեր է, առավել ևս, եթե այն կոնյակ է: Բայց և այնպես, բարմենը տեղում չէր. մեկ ժամ առաջ նրա կինը ծննդաբերել

էր: «Մի՞թե դա հիմնավոր պատճառ է աշխատատեղը թողնելու,– կատակեց Ֆլիպը: Եվ մինչ հուզված պորտյեն պատրաստվում էր զանգահարել ծննդատուն, մենք հրաժեշտ տվեցինք հոլանդացուն:

Ես ստիպված էի մի քանի րոպե սպասել, մինչ Վաղինակը կբացեր աշխատավայրիս դուռը: Երեսուն տարի աշխատելով ներքին գործերի համակարգում՝ նա ոչ մի աստղ չուներ, փոխարենն ուներ բազմաթիվ սիրուհիներ, որոնց ոչ մի կերպ չէր կարողանում ինձանից թաքցնել: Մենք աշխատում էինք միևնույն թանգարանում, ես՝ որպես տնօրեն, նա՝ որպես պահակ, ու թեև նա անմիջականորեն ինձ չէր ենթարկվում, այլ իր ոստիկան պետերին, իմ անմիջական պարտականությունների մեջ էր մտնում հիմնարկում կարգուկանոն հաստատելը:

Առաջին անգամ, երբ Վաղինակին թանգարանում բռնեցրի սիրուհու հետ, անակնկալի եկանք երեքս էլ՝ պահակը, որովհետև ինձ որևէ կերպ չէր սպասում գիշերվա կեսին, ես, որովհետև որևէ կերպ պահակից նման բան չէի սպասում, և սիրուհին, որովհետև որևէ կերպ չէր սպասում, որ թանգարանը կարող է Վաղինակից բացի այլ տնօրեն ունենալ: Անօրեն տնօրեն. դա, ճիշտն ասած, ինձ է վերաբերում, քանի որ ես, պարզապես մարդկայնորեն, միջոցներ չձեռնարկեցի, որ Վաղինակն աշխատանքից ազատվի ո՛չ առաջին անգամ, ո՛չ երկրորդ և ո՛չ էլ այս: Ավելին՝ հիմա համաձայնեցի մեկական բաժակ խմել հետները, որովհետև հոլանդացու հետ խմելը հիմնականում ձախողվել էր անօրեն բարմենի պատճառով: Հետո հանգիստ թողեցի մարդկանց, անցա սենյակս ու միացրի համակարգիչը:

Մեկ տարի էր արդեն, ինչ աշխատում էի թանգարանում, բայց դեռ չէի հասկացել, թե ինչու եմ աշխատում հատկապես այդտեղ: Ես շատ տեղերում եմ աշխատել, արել եմ տարբեր գործեր, տուժել եմ ու շահել, գովաբանվել ու քննադատվել, բայց հազվադեպ եմ հասկացել, թե ինչու եմ այդ պահին հատկապես այդտեղ և արդյո՞ք ճիշտ տեղում եմ ու ճիշտ գործն եմ անում: Բայց դա կարևոր չէ. վստահ չեմ, որ այսուհետ էլ նույնը չի լինելու: Համենայն դեպս, հիմա ինձ վստահվել էր

իր ունեցած արժեքներով երկրի կարևոր բանգարաններից մեկը: Վստահելու առումով ամեն ինչ կարգին էր, իմ տնօրինության ընթացքում բանգարանից ոչինչ չէր պակասելու, բայց ավելանալո՞ւ էր արդյոք: Ու հիմա էլ ես ձեռնարկել էի հոլանդական ընկերության հետ այս նոր գործը, որը հաջողվելու դեպքում ինձանից խլելու էր շատ ժամանակ և այլ ռեսուրսներ: Բայց նաև փող էր բերելու, որի մի մասը ես անկեղծորեն մտադրվել էի ծառայեցնել բանգարանի կարիքներին, որովհետև պետության կողմից սահմանված բյուջեն մի կերպ հոգում էր միայն ամենակարևոր վարձերը: Եվ համակարգիչն էլ, որ հիմա միացրել էի, ստացվել էր «բարեգործալրտեսական» մի կազմակերպության կողմից, ինչպես ասում էր մեր գործավար Վարդուշը:

Էլեկտրոնային փոստարկղումս մի քանի նոր նամակներ կային: Մեկում "Events" ընկերության կոորդինատորը նկարագրում էր պարոն վան Վիլետի արտաքինը՝ որպեսզի ճանաչենք նրան դիմավորելիս: Բայց նամակն ուշացած էր, հետևաբար և անպետք: Մյուս նամակում լեհ բարեկամս տեղեկացնում էր իր նոր հրատարակված գրքի մասին, երրորդում գովազդային մի փաթեթ էր ինչ-որ BJQ ընկերությունից, իսկ չորրորդ նամակը Մարուսյայից էր:

Նա պատմում էր իր շան ու դեղձանիկի մասին: Ասում էր, որ առավոտյան շատ վաղ է արթնանում, որ շանը տանի դիմացի այգում գբոսանքի, ուր քսանհինգ համարի տրամվայի վերջին կանգառն է: Շունը վազում է վագոնների հետևից ու հաչում, ապա թեթևակի ջրում է խոտերն ու սպասում հաջորդ տրամվային: Ապա հայտնվում է հարբեցող Վլադկոն, որ հավաքի նախորդ գիշերվանից այգում մնացած դատարկ շշերը, և շունը սիրով օգնում է նրան: Հետո գալիս է թմբլիկ Զլատինան և բացում կանգառի մոտ գտնվող իր փոքրիկ խորտկարանը: Վլադկոն շտապում է այնտեղ և կոնծում առավոտվա իր բաժինը՝ համապատասխան շան հետ հավաքած շշերի քանակի:



Հետո Վլադկոն գնում է, և գալիս է Միխայլո Կիցևսկին՝ հարգարժան դոկտորը, որ առավոտները՝ մինչև աշխատանքի գնալը, սովորություն ունի սուրճ խմել Զլատինայի մոտ, թեպետ սուրճ երբեք չի սիրել: Հարգարժան դոկտորին շունը տանել չի կարող, բայց և վախենում է հաչել վրան, որովհետև Մարուսյան դա խստիվ արգելում է: Շունը քթի տակ գռմռում է, աչքի տակով նայում տիրուհուն ու, թե պատահի՝ այդ ընթացքում մի տրամվայ անցնի, ոգևորված հաչում է: Երբեմն Մարուսյան ինքն էլ է մի բաժակ սուրճ խմում թմբլիկ Զլատինայի մոտ, և վերջինս հուզված միացնում է Մարուսյայի երգերը ու նոր ստացած մի բուլկի հյուրասիրում շանը, որը կենդանին երբեք չի ուտում: Հետո քսանհինգ համարի տրամվայի վերջին կանգառը սկսում է լցվել աշխատանքի գնացող սոֆիացիներով, և Մարուսյան ու շունը քայլում են տուն: Մինչդեռ դեղձանիկը մնում է տանը ամբողջ այդ ընթացքում և այդուհետ էլ:

12 նոյեմբերի, 1999

Ես չպատասխանեցի Մարուսյայի նամակին: Հենց այնպես որևէ բան գրել չէի ուզում, իսկ որևէ այլ բանի համար գլուխ չկար:

Անջատեցի համակարգիչն ու հագա բաճկոնս: Աստիճաններով իջա ներքև ու տեսա, որ պահակակետում Վաղինակը մենակ է: Այսքան արա՞գ՝ մտածեցի անկախ ինձանից և ձայն տվի նրան, որ գա ճանապարհելու: Պահակն առաջարկեց մի բաժակ էլ խմել: Բացատրեց, որ աղջկան արդեն տուն է ուղարկել և, ինչպես միշտ, խոստացավ, որ նման բան այլևս չի կրկնվի: Հրաժարվեցի խմել ու դուրս եկա թանգարանից: Մի քանի քայլ արեցի, հետո կանգ առա ու դարձա դեպի պահակը.

– Քանի՞ տարեկան ես,– հարցրի:

Նա շփոթվեց անսպասելի հարցից և մի պահ մտածեց: Վստահ եմ,

որ միառժամանակ մոռացավ տարիքը: Հետո մտաբերեց ու կմկմաց.

– Հիսունչորս:

– Եվ դեռ որքա՞ն ես մտադիր շարունակել:

– Ծառայությո՞ւնս,– նորից կմկմաց նա՝ կարծես մի քիչ վախեցած:

Ես ծիծաղեցի: Չնայած այն, ինչ նկատի ունեի, նույնպես յուրօրինակ ծառայություն էր, եթե հաշվի առնենք, որ մենք մեր օրվա և կյանքի զգալի հատվածը ծառայում ենք մեր և տարբեր կանանց:

– Հակառակը՝ ժամանցը,– ճշտեցի ես,– ժամանցը ծառայության ժամին: Ե՞րբ ես թոշակի անցնելու:

Բայց նա միևնույն է՝ չհասկացավ և ընդամենը ասաց.

– Այլևս չի կրկնվի:

– Կարևոր չէ,– ես փոշմանեցի հարցիս համար,– պարզապես հետաքրքիր էր: Բարի գիշեր:

Վաղինակը փակեց թանգարանի դուռը, և ես քայլեցի դեպի մայթի մոտ կանգնած մեքենաս: Եվ պատահեց այն, ինչը բոլորովին պարտադիր չէր, որ հենց ինձ հետ պատահեր:

Այս պատմության շատ դրվագներ հավանաբար կարող էին պատահել ուրիշ մարդկանց հետ էլ: Ոչ բոլորի, գուցե, բայց տարբեր մարդկանց: Իմ առավելությունը, սակայն, այն է, որ ես այդ դրվագներն ամբողջացնում եմ, երբ գործը հասնում է այս, նախորդ կամ հաջորդ գրքերին, այլապես կգերադասեի լինել տրամվայի վարորդ: Դա, անկեղծ ասած, եղել է իմ մանկության մի երազանքը, որը դեռ, անշուշտ, կարող է իրականանալ: Այսինքն՝ դեռ ոչինչ կորած չէ, բայց, այնուամենայնիվ, կա մի խանգարող հանգամանք: Բանն այն է, որ միշտ չէ, որ այնտեղ, ուր պետք է կանգնել, ես կանգնում եմ և, առավել ևս, այնտեղ, ուր պետք չէ կանգնել, ես չեմ կանգնում: Իմ սիրած դրվագները միայն տրամվայի կանգառները չեն, և ամեն տրամվայի կանգառ չէ, որ իմ սիրած դրվագն է: Եթե ես տրամվայի վարորդ լինեի, կարծում եմ, երկար չէի դիմանա, և ինձ գործից կազատեին, որովհետև կարող էր լինել հետևյալը. ես կարող էի տրամ-

վայը կանգնեցնել կանգառից դուրս ամենևին տրամվայի չսպասող մի գեղեցկուհու մոտ և կարող էի չկանգնեցնել հենց կանգառում, եթե այնտեղ տեսնեի փոխգնդապետ Կիրակոսյանին: Այդ ծեր սրիկան մեզ ռազմագիտություն էր դասավանդում համալսարանում և առիթը բաց չէր թողնում ինձ անառիթ դասից հեռացնելու: Կան, անշուշտ, շատ ուրիշներն էլ, որոնց ես չէի տեղափոխի իմ տրամվայով, բայց լավագույն թեկնածուն, այսուհանդերձ, սրիկա փոխգնդապետն է, որի պատճառով իմ մեջ անհաղթահարելի հակակրանք առաջացավ թիկունքային զինվորականի կերպարի հանդեպ:

Ուրեմն հրաժեշտ տալով մանկության իմ մի երազանքին՝ անդրադառնամ հասունության շրջանի մեկ այլ երազանքի, որն արդեն այս պատմության հետ ավելի կապ ունի:

Տասնվեց տարեկանում ես առաջին անգամ կանգնեցի ֆինանսական խնդրի առջև: Երիտասարդական պալատի լողավազանում, ուր հաճախում էի օրը մեջ, հանդիպեցի ինձանից տասը տարով մեծ մի ձկնիկ Նազիկի: Շատ շուտ մենք ընկերացանք և ջրում անընդհատ միասին էինք: Բայց բավական էր լողի ժամը ավարտվեր, իմ ձկնիկը դառնում էր թիթեռնիկ և թռչում: Ես գիտեի՝ դրսում ամեն անգամ նրան էր սպասում կրկնվող համարներով մի սպիտակ «Վոլգա»: Կանգնում էի մուտքի աստիճանների մոտ, ողորմելի հայացքով ճանապարհում մեքենան ու երազելով քայլում տուն: Ու մի օր էլ «Վոլգան» չեկավ: Նազիկը, սակայն, անտարբեր էր: Նրա միակ դժգոհության պատճառն անձրևն էր, որ բացարձակ սխալ օր էր ընտրել գալու՝ հաշվի չառնելով, որ ուշ աշնանը դրսում դեռ կարող է թիթեռնիկ մնալ: Կարող է՝ պարզվում էր: Մենք նստեցինք երկրորդ հարկի սրճարանում, մինչ անձրևը կդադարեր: Այն հիսուն կոպեկից բացի, որ ծնողներս մեծահոգաբար տալիս էին որպես ճանապարհածախս և որից քսանը ես արդեն ծախսել էի, ինձ մոտ կար ևս քսանյոթ ռուբլի՝ խնայողաբար հավաքված ականջակալներով մագնիտոֆոն գնելու նպատակով: Սրճարան մտնելուն պես ականջակալներով մագնիտոֆոնը ես, իհարկե, անմիջապես մոռացա: Առաջին անգամ սեփական փողով պիտի հյուրասիրեի գեղեցիկ աղջկա և ինձ շատ լավ էի զգում: Գրպանիս քսանյոթ ռուբլին՝ հինգ երեք ռուբլիանոցներով և տասներ-

կու թաքանոցներով, դրա համար հիմնավոր պատճառ էին: Ի՞նչ իմանայի, որ մեկ շիշ շամպայնը, մեկ ափսե կտրտած միրգը, «Երևանյան լույսեր» շոկոլադը և մեկ տուփ «Սալեմ» ծխախոտը, որ անշտապ պատվիրեց Նազիկը, պետք է արժենային հենց այդքան: Բայց նրա համար ես այլևս կավալեր էի, և աղջիկն առաջարկեց տաքսիով գնալ դիսկոտեկ: Հիմա չեմ հիշում, թե ինչ հիմար պատճառ գտա հրաժարվելու, բայց հիշում եմ, որ լաց լինելու աստիճանի հուզված էի և շատ լավ հիշում եմ, որ հենց այդ պահին ձևավորվեց իմ մյուս երազանքը՝ ունենալ շատ փող: Հասկանում եմ, որ այս երազանքը ունի մարդկության առնվազն կեսը, բայց միևնույն է, ինձ շատ փող է պետք:

12 Նոյեմբերի, 1999

Վաղինակը փակեց թանգարանի դուռը, և ես քայլեցի դեպի մայթի մոտ կանգնած մեքենաս: Ժամը մեկն անց էր, և փողոցը դատարկ էր: Միայն ներքևից, հեռահար լուսարձակները միացրած, մեծ արագությամբ գալիս էր մի միկրոավտոբուս: Երբ ավելի մոտեցավ, տեսա, որ երթուղային տաքսի է: Ո՞ւր էր շտապում: Առջևում աջից հատող ճանապարհ էր, ու քանի որ լուսաֆոր չկար, միկրոավտոբուսը պիտի գիջեր, եթե աջից մեքենա գար: Իսկ աջից մեքենա գալիս էր ու նույնպես չափազանց արագ ու նույնպես հեռահար լուսարձակներով:

Երկու մեքենաներն էլ վերջին պահին կտրուկ արգելակեցին, թեպետ պիտի արգելակեր միայն երթուղայինը, բայց, այսպես թե այնպես, արդեն ուշ էր: Արգելակող անիվների ճռռոցին հետևեց ուժեղ շխկոց, ապա՝ կոտրվող ապակու ձայն, կանացի ճիչ ու լռություն: Դեռևս ընթացքի մեջ գտնվող միկրոավտոբուսը առջևով բախվել էր արդեն կանգնած «Մերսեդեսին», մի կողմ հրել ավելի թեթև մեքենան, քիչ առաջացել ու կանգնել:

Հարվածը հասել էր «Մերսեդեսի» ձախ կողմի երկու դռներին, և դրանցից ոչ մեկը չէր բացվում: Իսկ հակառակ կողմի հետևի դուռը բացվեց մինչ ես կհասնեի, և մեքենայից իջավ բարձրահասակ մի աղջիկ:

– Նաստյա, Նաստենկա, ո՞ղջ,– գոռում էր նա ռուսերեն:

Նաստյան, ըստ երևույթին, նա էր, ով նստած էր առջևում և, բարեբախտաբար, ողջ էր: Միայն ճակատն էր քերծվել, որովհետև բախվել էր դռան ապակուն: Ես բացեցի դուռը, Նաստյան ինքնուրույն, բայց զգուշորեն դուրս եկավ ու փաթաթվեց ընկերուհուն:

– Զինա, Զինոչկա, այս ի՞նչ էր, հը՝,– ասաց նա նույնպես ռուսերեն:

Այդ պահին հայտնվեց Վաղինակը, և ինքն էլ փաթաթվեց ընկերուհիներին: Չգիտես որտեղից հայտնվեց նաև բարձրահասակ մեկը՝ տարօրինակ գլխարկով, մի պահ կանգնեց մեր կողքին, հետո վազեց դեպի երթուղայինը ու քիչ անց վերադարձավ՝ ասելով, որ մյուս վարորդին նույնպես օգնություն է հարկավոր: Բայց նախ մենք փորձեցինք օգնել «Մերսեդեսի» վարորդին, քանի որ նա ավելի մոտ էր: Պետք էր հուսալ, որ նա էլ աղջիկ չլինի: Դատելով մարմնից՝ տղամարդ էր, վարորդի գլուխը չէր երևում: Աշխատել էր «Մերսեդեսի» ղեկի վրայի անվտանգության բարձիկը, կարելի է ասել՝ լրիվ անտեղի, որովհետև հարվածն առջևից չէր, և վարորդի գլուխն ամբողջությամբ թաղվել էր բարձիկի մեջ: Ես փորձեցի զգուշորեն ազատել այն: Գլուխը, կարծես, վնասված չէր, բայց տղամարդն անշարժ էր: Պետք էր նրան դուրս բերել մեքենայից: Բայց դա դժվար էր. նախ՝ որովհետև տղամարդը գեր էր, ու հետո էլ՝ հարվածից տեղաշարժված ղեկն ու նստատեղը սեղմել էին մարմինը: Օգնության հասան Վաղինակը և քիչ առաջվա բարձրահասակը, որը, մտածեցի, թե երթուղային տաքսու ուղևորն է: Վաղինակին ուղարկեցի թանգարանից շտապօգնություն զանգելու: Աղջիկները դեռ կանգնած էին նույն դիրքով՝ իրար փաթաթված և թերևս դեռ չէին հասկանում, թե ինչ էր կատարվել: Քանի որ գեր տղամարդուն ազատել չէր հաջողվում,

ուղևորի հետ գնացինք մյուս վարորդին օգնելու: Նա կարծես թե կենդանի էր, մանավանդ որ խոսում էր: Անընդհատ կրկնում էր, որ ինքը մեղավոր չէ, խնդրում էր միլիցիա չկանչել ու իրեն տուն տանել: Հնարավոր է, որ նրա վիճակը ծանր էր, որովհետև գլխով հարվածել էր դիմապակուն, իսկ փորով՝ ղեկին: Դուրս բերեցինք նրան մեքենայից ու նստեցրինք ուղիղ գետնին, քանի որ կանգնել չէր կարողանում:

«Մերսեդեսի» մոտ իրարանցում էր. վարորդն ուշքի էր եկել, և հիմա էլ աղջիկներն էին փորձում ազատել նրան: Ես նրանց մի կողմ տարա ու մտա մեքենան: Վարորդը հայհոյեց ինձ ու փորձեց միակ ազատ ձեռքով հարվածել: Մտածեցի, որ ինձ երթուղայինի վարորդի տեղն է դրել, և ասացի, որ սխալվել է:

– Դե լավ,– կմկմաց նա,– դու ինձ ճանաչո՞ւմ ես:

Դեմքն իսկապես ծանոթ էր, միայն թե դա ի՞նչ կարևոր էր: Ասացի, որ շտապ օգնությունը հիմա կգա, և տեսա, թե ինչպես նա ցնցվեց:

– Միլիցիա էլ եք կանչե՞լ,– կրկին կմկմաց նա,– այսինքն՝ դա ի՞նչ կապ ունի, շտապօգնությունից նրանց կտեղեկացնեն:

Նա ամբողջ մարմնով շարժվեց, ապարդյուն փորձեց ազատվել ու սկսեց հայհոյել: Ես կրկին նայեցի նրա դեմքին: Առանձնահատուկ ոչինչ. խիստ, կլոր և միաժամանակ տափակ դիմագծեր: Այնուամենայնիվ, դեմքը չափազանց ծանոթ էր: Ինչո՞ւ էր նա կարծում, որ իրեն պետք է ճանաչեմ: Հավանաբար... Եվ հանկարծ հասկացա, թե ով է իմ առջև. դե իհարկե, Կոնստանտին Բալյան, ավելի հայտնի որպես Ցիտ Կոստո, մեծահարուստ գործարար, Աժ պատգամավոր, հանրապետության բարձրագույն պաշտոնյաներից մեկի հովանավորյալ կամ գուցե հովանավոր:

– Ո՞ւր է հեռախոսս,– Կոստոն կրկին փորձեց շարժվել,– քեզ մոտ հեռախոս կա՞:

Ինձ մոտ հեռախոս չկար և ժամանակն էր հեռանալու: Շուտով կգային բժիշկները և ոստիկանները, և ես այլևս անելիք չունեի:

Չնայած հանուն ճշմարտության պետք է ասել, որ գլխավորն անձերի խնդիրն էր: Համոզված էի, որ երկու վարորդներն էլ վերջացած սրիկաներ էին, և այն, ինչ կարող էի անել նրանց համար, արդեն արել էի:

Ու, թերևս, պարզաբանման անհրաժեշտությունն էլ կա:

Երթուղային տաքսու վարորդ՝ հրպեսների մի տեսակից, որ կարծես մի մորից ծնված լինեն: Անդեմ, անուղեղ, անթոք, որ իրենց մեքենայի դիմապակուց նայելով, իրենց ուղևորներից բացի ուրիշ ոչինչ տեսնելու ընդունակ չեն: Եվ չեն էլ ուզում: Իսկ ուղևորները նրանց համար պարզապես բեռ են:

Պատգամավոր՝ հրպեսների մի տեսակից, որ կարծես ցուլ լինեն: Բութ ցլեր, որ բուծված են մի նպատակով՝ սեփական ցեղին բռնաբարելու: Նրանց ուղեղի փոխարեն կոտոշներն են, և հայրենիքը վերջանում է այնտեղ, ուր վերջանում է արոտավայրը:

Մի խոսքով՝ իմ գնալու ժամանակն էր, բայց, դժբախտաբար, արդեն ուշ էր:

Վալենտին Բարենցևը երեք տարի պայմանագրով աշխատել էր հարավ-աֆրիկյան SATA ավիաընկերությունում՝ իրականացնելով Պրետորիա տարբեր ուղղություններով բեռնատար չվերթեր: Մինչ այդ մի քանի տարի աշխատել էր «Բալկան» ավիաընկերությունում և առաջին բուլղար օդաչուներից էր, որ ժիվկովյան ժամանակաշրջանից հետո առաջարկ էր ստացել տեղափոխվել Աֆրիկա՝ եռակի բարձր աշխատավարձ ստանալու պայմանով: Միջնորդ ընկերությունը, որ կրում էր գուցեղ «Ռադուգա» անունը, ղեկավարում էր նրա նոր ծանոթը՝ «Բալկանի» նախկին կառավարչի տեղակալ Միրոսլավ Լոսկին: Երեսունմեկ տարեկան այդ ճարպիկ երիտասարդը, որ նախ առաջ էր գնացել սոցիալիստական նոմենկլատուրայի իր ազդեցիկ բարեկամների շնորհիվ, նոր նոմենկլատուրայի օրոք իրեն բոլորո-

վին չէր կորցրել: Վերակազմավորվող «Բալկանի» օդաչուների և անձնակազմի այլ անդամների դժգոհությունները ներկա պայմաններից Միրոսլավին հուշել էին սույն պրոֆեսիոնալների հմտություններն օգտագործել այլ շուկաներում: Եվ ահա մի քանի անձնակազմեր «վարձով էին տրվել» աֆրիկյան ավիաընկերություններին:

Վալենտին Բարենցևը, որ անձնակազմի հրամանատար էր, երեք տարվա ընթացքում բավականաչափ գումար էր աշխատել և արդեն մտածում էր Սոֆիա վերադառնալու մասին: Գեղեցկուհի կինը՝ նախկին ուղեկցորդուհի Եվգենյան այդպես էլ չէր կարողացել հարմարվել Պրետորիայի պայմաններին՝ չնայած լավ աշխատանք ուներ Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում Բուլղարիայի դեսպանատանը: Իսկ տասնվեցամյա դուստրը՝ Մարուսյան, հաճախում էր դիվանագիտական կորպուսի աշխատողների երեխաների դպրոցը և չտեսնված ընդունակություններ էր դրսևորում երաժշտության բնագավառում: Թերևս հենց սա էլ Բարենցև ընտանիքի Սոֆիա վերադառնալու որոշման գլխավոր պատճառն էր, որ Մարուսյան կարողանա սովորել կոնսերվատորիայում: Սակայն հազար ինը հարյուր հինգսունվեց թվականի մարտին Եվգենյան մահացավ կաթվածից, իսկ Վալենտին Բարենցևի դիակը դրանից երկու շաբաթ առաջ գտել էին Կալահարի անապատում ընկած նրա ինքնաթիռի մեջ: Ինքնաթիռում գտել էին նաև անձնակազմի մյուս երկու անդամների դիակները, բայց չէին գտել բեռը՝ ոմանց պնդմամբ հսկա քանակությամբ ուրանը, իսկ այլոց կարծիքով՝ չմշակված ադամանդը, որ ուղևորվում էր անհայտ ուղղությամբ:

Դեռատի Մարուսյայի խնամակալությունը ստանձնեց Միրոսլավ Լոսկին, որ այդ ժամանակ հասցրել էր արդեն միլիոնատեր դառնալ: Նա տեղավորեց աղջկան Մեծ Բրիտանիայի մի հեղինակավոր համալսարանում: Լոսկին ինքն ընտրեց Մարուսյայի ապագա մասնագիտությունը՝ կառավարում, ամենևին տուրք չտալով աղջկա երաժշտական շնորհքին: Աղջիկն ինքը տխուր էր ու լրիվ անտարբեր և մե-

խանիկորեն հետևում էր իր բարերարի կարգադրություններին:

Լոսկին, որ իր բիզնեսը մասամբ տեղափոխել էր Լոնդոն, հաճախակի այցելում էր աղջկան, իսկ երկու տարի անց ամուսնանալու առաջարկություն արեց: Մարուսյան, սակայն, որ երկու տարվա ընթացքում հասցրել էր ապաքինվել ծանր վերքից, հասցրել էր նաև աստիճանաբար վերադառնալ երաժշտի իր կոչմանը և, որ կարևորն է, սիրահարվել Լեդ Զեփլինի մի երիտասարդ հետևորդի: Այնպես որ, նա ստիպված էր գլխիկոր մերժել իր բարերարին: Որոշ ժամանակ Լոսկին լռեց, հետո կրկին փորձեց, հետո կրկին լռեց ու փորձեց և ապա հրաժարվեց բարերարի իր տիտղոսից՝ դադարեցնելով աղջկա ուսման ֆինանսավորումը: Մարուսյան նույնիսկ ուրախ էր. նա այլևս ապագա մենեջեր չէր, այլ երգչուհի մի ռոք խմբում: Բայց որոշ ժամանակ անց երգչուհին որոշեց, որ իր ուղղությունը ռոքը չէ: Դրա հիմնական պատճառը Մայքն էր՝ Լեդ Զեփլինի երիտասարդ հետևորդը, որ պարզվեց այնքան էլ տաղանդավոր և, որ կարևորն է, ազնիվ չէր: Մարուսյան բաժանվեց Մայքից, ինքնուրույն մի քանի հաջող համերգներ տվեց և թողարկեց առաջին անհաջող ձայնասկավառակը: Դրան անմիջապես հետևեց բուլղարական մի ֆիրմայի առաջարկը՝ ապրել և աշխատել Սոֆիայում:

Ֆիրման Մարուսյային տրամադրեց ժամանակակից բնակարան և առաջարկեց աղջկա չհաջողված ձայնասկավառակի համար ապահովել լայնամասշտաբ գովազդ, ինչին, սակայն, երգչուհին չհամաձայնեց՝ գերադասելով աշխատել մեկ այլ՝ նոր ալբոմի վրա: Ֆիրման չառարկեց, պայմանագիր կնքեց՝ գնելով նոր ձայնասկավառակի հեղինակային իրավունքը և համբերատար ֆինանսավորեց Մարուսյայի կեցությունը: Ամեն ինչ, հավանաբար, այդպես էլ կշարունակվեր, եթե մի օր Մարուսյան պատահաբար չհանդիպեր իր ծնողների վաղեմի բարեկամին՝ Սոֆիայի ազդեցիկ թերթերից մեկի մշակութային մեկնաբան Լյուբոմիրա Խիտրովսկային: Վերջինս հեշտությամբ բացահայտեց, որ հոգատար ֆիրմայի հետևում կանգնած

է Միրոսլավ Լոսկին: Եվ հենց Լյուբան էլ պատմեց ինձ այս պատմությունը, երբ մենք միասին գնացել էինք Մարուսյայի առաջին մենահամերգին:

12 նոյեմբերի, 1999

Ծիտ Կոստոն ինձ էր նայում այնպիսի հայացքով, ինչպես գործատուն՝ գործառուին, որին դեռ չգիտի՝ արժե՞ վստահել պատասխանատու աշխատանքը, թե՞ ոչ:

– Դժվար թե մեռնեմ,– հանկարծ ասաց նա ու սկսեց հազալ:

Հազում էր ու հայհոյում, միայն թե պարզ չէր, թե ինչը և ում: Հետո, երբ դադարեց, շարունակեց.

– Մի անգամ որոշեցի տեղ գնալ առանց թիկնապահների, և տեսա՞ր, թե ինչ եղավ:

Թե ինչ պիտի անեին թիկնապահներն՝ անհասկանալի էր. կրա՞կ էին բացելու վթարի վրա:

– Ուրեմն դու ինձ պիտի օգնես, ես մի կարևոր հարց ունեմ, հասկանո՞ւմ ես:– Նա նորից սկսեց հազալ, այս անգամ ավելի երկար, կարծես ինձ ժամանակ տալու հասկանալ իրեն: Աղջիկներից մեկը փորձում էր գլուխը խցկել ներս, բայց Կոստոն կարգադրեց, որ սպասի դրսում ու կրկին դարձավ ինձ.– Պետք չէ, որ այս աղջիկներին ինձ հետ տեսնեն: Նրանք այստեղից չեն, Մոսկվայից են: Ես նրանց օդակայան էի տանում: Հիմարի պես որոշեցի ինքս տանել: Ես հիմա փող կտամ, դու նրանց նստեցրու ինքնաթիռ թող գնան:– Նա ազատ ձեռքը տարավ շալվարի ազատ գրպանը, բայց փողն, ըստ երևույթին, այնտեղ չէր: Ուզում էր ինչ-որ բան ասել, բայց ես կանխեցի:

– Ես կարող եմ զանգահարել և կանչել ձեր թիկնապահներին, այդպես ավելի լավ չի՞ լինի:

– Այդպես ուշ կլինի և...

Նա չհասցրեց վերջացնել, որովհետև այս անգամ աղջիկը ներս մտավ հետևի դռնից ու կիսալացելով, կիսագոռալով ասաց.

– Ո՞ւր է շտապօգնությունը, Նաստյայի գլխից արյուն է գալիս:

– Կանչիր Նաստյային,– կարգադրեց օլիգարխը:

Ես զիջեցի իմ տեղը վերջինիս ու այլևս չիմացա, թե ինչ խոսեցին: Մի կողմ քաշվեցի՝ հուսալով, որ շտապ օգնությունը վերջապես կգա:

Երկու ուրիշ մեքենաներ էին կանգնած, ու մի քանի նոր մարդիկ էին հավաքվել՝ երկու տղամարդ և մեկ կին: Տղամարդն ու կինը տեղեկանալով, որ մարդկային զոհեր չկան, նստեցին մեքենան և հեռացան: Մյուսը սկսեց ինձ հարցեր տալ, բայց ես չհասցրի պատասխանել, որովհետև «Մերսեդեսի» մոտ նոր իրարանցում սկսվեց: Աղջիկները մեքենայի բեռնախցից ինչ-որ պայուսակներ հանեցին, և Ջինան մոտեցավ ինձ:

– Դե՛, գնացինք,– վստահորեն ասաց նա,– որտե՞ղ է քո մեքենան:

Վաղինակը, որ կանգնած էր կողքիս, ոգևորվեց:

– Կուզե՞ք ես տանեմ, ո՞ւր է պետք սրանց տանել:

Չգիտեմ ինչ կլիներ, եթե չմիջամտեր Վաղինակը: Համենայն դեպս, ասացի նրան, որ ուղեկցի աղջիկներին մինչև թանգարանի մոտ կանգնած իմ մեքենան, և ինքս մոտեցա Կոստոյին:

– Իմ հիմնարկը գտնվում է այստեղ, ես դրա տնօրենն եմ,– բացատրեցի,– կարող եմ աղջիկներին պահել իմ աշխատասենյակում մինչև դուք կանչեք ձեր թիկնապահներին կամ չգիտեմ, թե ում:

Նա դարձյալ նայեց ինձ արդեն ծանոթ հայացքով, որն այս անգամ ասում էր՝ տնօրենը ոչ թե դու ես, այլ ես: Հետո կրկին ձեռքը տարավ գրպանը ու ասաց.

– Դու պետք է օգնես ինձ, ես քեզ փող կտամ, շատ փող:

Ես թքեցի ասֆալտին ու հեռացա:

Ինչո՞ւ մարդիկ չեն վախենում Աստծուց կամ ժամանակից, կամ ինչ-որ բանից, հանուն որի կամ ինչի կարող են անարդար չլինել, դաժան չլինել, եթե անգամ բնատուր սրիկաներ են:

Շատ մարդիկ պահում են Աստվածաշունչը մահճակալի գլխավերևում: Ոմանք գնում են եկեղեցի կիրակի օրերը: Շատերն անգիր գիտեն և երբեմն արտասանում են «Հայր մերը» քնելուց առաջ կամ առհասարակ: Եվ քրիստոնյա են: Շատ մարդիկ պարզապես կնքված են և դարձյալ քրիստոնյա են: Հավատում են կամ չեն հավատում Աստծուն: Ուրիշները կնքված չեն, չունեն Աստվածաշունչ, եկեղեցի չեն գնում և չգիտեն «Հայր մերը», բայց հայ են, սերբ կամ շվեդ: Հավատում են և կամ չեն հավատում Աստծուն: Եվ քրիստոնյա են, որովհետև հայերը, սերբերը և շվեդները քրիստոնյա ազգեր են: Ես չեմ կարծում, որ այս գիրքը երբևէ կարդան ճապոնացիները կամ չինացիները, բայց ես նկատի ունեմ նաև նրանց: Եվ չգիտեմ, արդյոք նրա՞նք էլ քրիստոնյա չեն և բուդդայական կամ կոնֆուցիական չեն քրիստոնյաները: Բայց ես գիտեմ, որ Արարիչն իր արարչագործության ժամանակ չսահմանափակվեց հինգերորդ օրով:

Չէ՞ որ գոյություն ունեն Տիեզերքը, Արեգակը, Երկիր մոլորակը, քարը, ամպը, օվկիանոսը, ջրիմուռը, այծը և մարդը, և գոյություն են ունեցել այն օրվանից, երբ ստեղծվել են: Գուցե Արարիչը օ՞րն է, տարի՞ն կամ վայրկյա՞նը: Եվ կամ Արարիչը ժամանա՞կն է: Չէ՞ որ արարչագործությունը շարունակվում է: Ո՞վ կարող է բացատրել, թե ինչի հաշվին է բաբախում մարդու կամ այծի սիրտը: Եվ ինչո՞ւ է մի օր կանգ առնում: Եվ ինչո՞ւ մենք չգիտենք, թե ինչ է լինելու հազար, քսանմեկ կամ մեկ տարի հետո և կամ հաջորդ իսկ վայրկյանին: Մենք ենթարկվում ենք ժամանակին, և ամեն ինչ աշխարհում ու տիեզերքում ենթարկվում է ժամանակին և կախում ունի ժամանակից:

Ես կնքված եմ, ժամանակ առ ժամանակ գնում եմ եկեղեցի, գիտեմ «Հայր մերը», և Աստվածաշունչը դրված է մահճակալիս կողքի պատուհանագոգին, և կինս ժամանակ առ ժամանակ վրայից մաքրում է փոշին: Բայց ես չգիտեմ, թե ժամանակն ինձ ինչ կմատուցի: Ես չգիտեմ ինձ հետ ինչ կլինի վաղը, ինչ կլինի կնոջս հետ և ինչ կլինի պատուհանիս գոգին դրված Աստվածաշնչի հետ: Ես չգիտեմ, թե ամեն ինչ դեռ ինչքան կշարունակվի և կարո՞ղ է արդյոք դադարել: Ես չգիտեմ, կարո՞ղ է արդյոք ժամանակը կանգ առնել: Բայց չեմ ուզում, որ ժամանակը կանգ առնի: Եվ չեմ պատկերացնում, որ ժամանակը կարող է կանգ առնել: Եվ հավատում եմ դրան: Ինձ կյանք է տվել ժամանակը և մահ է տալու նույնպես ժամանակը: Եվ բոլորին: Եվ Քրիստոսին կյանք է տվել ժամանակը, և Քրիստոսն ապրում է մինչև հիմա: Գուցե իսկապե՞ս Աստված ժամանակն է:

Եվ ինչո՞ւ մարդիկ չեն վախենում Աստծուց կամ ժամանակից, կամ ինչ-որ բանից, հանուն որի կամ ինչի՝ կարող են անարդար չլինել, դաժան չլինել, եթե անգամ բնատուր սրիկաներ են:

1999

Բոլոր դեպքերում, հայ ժողովուրդը շուտով նշելու է Քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակը: Թանգարանի իմ աշխատասենյակում դրված են մի ինքնուս նկարչի կտավներ, որ քիչ առաջ են հավաքվել ցուցահանդեսից: Ինքնուս նկարչի անունը Սարգիս է, և ինքնուս բառն այստեղ ավելի քան տեղին է: Որովհետև, եթե ուրիշներն ընդամենը ինքնուրույն սովորել են նկարել՝

ձեռքի տակ ունենալով բոլոր անհրաժեշտ պարագաները և աչքի առաջ ունենալով ուրիշների նկարները, Սարգսի պարագան բոլորովին այլ է:

Սարգիսը ստիպված էր թողնել դպրոցը դեռ տասներորդ դասարանը չավարտած և փոխարինել նախրապան հորը, որովհետև գյուղում փող աշխատելու ուրիշ ձև չգիտեր, իսկ տանն ուներ երեք փոքր քույր և չաշխատող մայր: Հայրը տառապում էր լարդի ծանր հիվանդությամբ և արդեն մի քանի ամիս էր անկարող էր աշխատել:

Գյուղի նախիրը հաշվվում էր հարյուր քսան գլուխ խոշոր անասուն, որոնցից յուրաքանչյուրի համար հովիվը տերերից ստանում էր երեք հարյուր դրամ, կամ համարժեքը մթերքով՝ ալյուր, ձու, պանիր, կարտոֆիլ... Հորը վճարում էին հինգ հարյուր դրամ, բայց հաշվի առնելով պատանու անփորձությունը, գյուղացիները որոշել էին քչացնել գումարը, այլապես կային ուրիշները, որ պատրաստ էին անել նույն գործը: Սարգիսը վիրավորված էր համագյուղացիներից, բայց ընտրություն չուներ: Իհարկե կային այնպիսիները, որ ամսվա վերջում տալիս էին հինգ հարյուր և մանրը չէին վերցնում, կամ վեց ձվի փոխարեն տալիս էին տասը, բայց այդպիսիք մի քանիսն էին, և տխուր իրողությունը նրանց հաշվին չէր փոխվում:

Համենայն դեպս պատանին դժգոհ չէր: Փողը հերիքում էր հիվանդ հոր դեղերին, մթերքն ու սեփական երեք կովերը բավական էին, որ ընտանիքը կուշտ ապրի, տնեցիներն իրեն սիրում էին ու փաղաքշում, ուրիշները՝ հարգում, Գայանեն՝ հարևանի աղջիկը, ընկերուհիների հետ բանջար էր հավաքում միշտ մոտակայքում, և կար ամենագլխավորը՝ Սարգիսը նկարում էր: Ներկերը նա ստանում էր տարբեր քարերի փոշուց, վրձինը պատրաստում էր Ատայի՝ հավատարիմ շան մազերից, իսկ կտավին փոխարինում էին քարերն ու քարափները: Նկարների թեման հոգևոր էր, իսկ Սարգսի ամենասիրած կերպարները հրեշտակներն էին, որոնց պատանին պատկերում էր Գայանեի դեմքով:

Ու մի օր էլ Գայանեն տապակած բանջար բերեց Սարգսին, լավաշ ու թանջուր: Տղան ախորժակով կերավ բանջարը, խմեց թանը և ոչ մի բառ չասելով՝ թասն ու կուժը վերադարձրեց աղջկան: Գայանեն վերցրեց թասն ու կուժը և ոչ մի բառ չասելով՝ հեռացավ: Հաջորդ օրը Սարգիսը մի փունջ վայրի կակաչ հավաքեց, թողեց նախիրը, իջավ դեպի ներքևում բանջար հավաքող աղջիկները, բայց տեղ չհասավ, կանգնեց մի քարի մոտ, ծաղիկները ձեռքին, մի հրեշտակ նկարեց ու դեն շպրտեց կակաչները: Հաջորդ օրը Գայանեն նորից բանջար ու թանջուր բերեց. դարձյալ չխոսեցին: Ու հետո Սարգսի կակաչները դարձյալ տեղ չհասան, և լեռան լանջին ավելացավ ևս մի հրեշտակաքար: Երրորդ անգամ Սարգիսը միայն թանը խմեց, ապա մի կողմ դրեց կուժը և բռնեց աղջկա ձեռքը: Աղջիկը ցնցվեց, բայց ձեռքը չքաշեց:

– Էլ ինձ բանջար մի՛ բեր,– ասաց Սարգիսը,– ու թան էլ մի բեր. թող քո տնեցիներն ուտեն:

Աղջիկը չպատասխանեց, ազատեց ձեռքը, վերցրեց կուժն ու թասն ու գնաց: Ու էլ չեկավ:

Այդ առավոտյան Սարգսի հոր վիճակը կտրուկ վատացել էր, նրան գյուղապետի մեքենայով տարել էին մարզկենտրոնի հիվանդանոց ու թեև կարողացել էին ուշքի բերել, Սարգիսը բժշկից պարզել էր, որ հայրը հազիվ թե ապրի մեկ տարուց ավելի:

Սարգիսը պաշտում էր հորը:

Հաջորդ օրը, երբ Սարգիսը սպասում էր Գայանեին, փոխարենը եկավ Տիկին Էլեանորա Սեթյոնը՝ միջազգային մի կազմակերպության Հայաստանի գրասենյակի պատասխանատուն: Երբ «Լենդ Քրուիզերը», որի մեջ էին Տիկին Սեթյոնից բացի Հայաստանում գյուղատնտեսության զարգացման ծրագրի այլ ամերիկացի պատասխանատուներ ևս, հասավ մի անհաղթահարելի բարձունքի, որտեղից սկսվում էին Սարգսի հրեշտակազարդ քարերը, պատանի հովիվը մտորում էր: Նրան հարցրին, թե ով է քարերի վրայի նկարների հեղինակը, և պատանին պատասխանեց, որ ինքն է: Եվ Տիկին Սեթյոնը

հանդես եկավ իբրև իսկական բարեգործ: Հաջորդ այցին նա Սարգսի համար նկարչական պարագաներ բերեց և ծրարի մեջ դրված մի փոքր գումար:

Սարգիսը հրաժարվեց վերցնել գումարը և պատմեց տիկնոջը հոր հիվանդության մասին: Տիկինը խնդրեց հիվանդության պատմությունը և տարավ իր հետ: Մի քանի օրից նա վերադարձավ և իր մեքենայով Սարգսի հորը տարավ Երևան: Հետո, երբ նրանք հետ եկան, տիկինը մի կողմ տարավ Սարգսին և ասաց, որ նա պետք է տղամարդ լինի:

Սարգիսը շուտով ընտելացավ մոլբերտին ու կտավին և աստիճանաբար փոխեց նկարների սյուժեն: Հիմա նա նկարում էր այն, ինչ տեսնում էր իսկապես: Սարը, հովիտը, առուն, նախիրն ու բանջար հավաքող գեղջկուհիներին: Այդպես անցան ամիսներ, և երբ աշնանը Տիկին Սեթյոնը կրկին այցելեց գյուղ, Սարգսի մոտ հավաքվել էին մի քանի տասնյակ կտավներ: Դրանցից մի քանիսը Տիկինը վերցրեց իր հետ և բերելով Երևան՝ ինձ առաջարկեց թանգարանում կազմակերպել պատանի նախրապան-նկարչի ցուցահանդեսը: Նոյեմբերին մենք բացեցինք ցուցահանդեսը, Սարգսի նկարները գյուղից բերվեցին Տիկին Սեթյոնի «Լենդ Քրուիզերով», եկան շատ այցելուներ՝ տեղացի և արտասահմանցի, ցուցահանդեսը լուսաբանվեց մամուլով և հեռուստատեսությամբ, ստացավ պատշաճ գնահատական արվեստասերների և մասնագետների կողմից, միայն թե մի հանգամանք՝ չեկավ ինքը՝ հեղինակը, որովհետև դեռ հովիտներում կանաչ կար և նա չէր կարող թողնել նախիրը:

Թանգարանում աշխատածս տարիներին ես, բնականաբար, հանդիպեցի և շփվեցի շատ նկարիչների հետ, տեսա շատ նկարներ և փորձեցի հասկանալ, թե ով է իրականում իրական նկարիչը: Ինձ թվաց, որ իրական նկարիչը նա է, ով նպատակ ունի:



Հետո ես փորձեցի հասկանալ, թե որն է այդ նպատակը: Եվ ինձ թվաց, թե նպատակն այն է, որ ընկալվի պատկերի հոգին:

Ասենք՝ մի բնանկարի: Նկարիչը պատկերել է մայրամուտը, որ տեսել է ԱՄՆ-ի Օրեգոն նահանգի անտառներում, եզակի տեղերից մեկը, ուր պահպանվել են իսկական հնդկացիները և նրանց ավանդական ապրելակերպը: Կտավի վրա շագանակագույն արեգակից բացի պատկերված են անպիղծ անտառը, որն իսկապես անպիղծ է, բնական տաք լճակները, որոնց ջրերն իսկապես բնականորեն տաք են, աշունը, որ երկրագնդի այս հատվածում բոլորովին այլ է, և ձիու վրա նստած մի հնդկացի, որ իր կանգնած կետից երբեէ հիսուն կիլոմետրից ավելի չի հեռացել: Բայց մայրամուտը մայրամուտ է ամենուրեք, և անտառը, լճակները, հնդկացին և իր ձին ընդամենը պարագաներ են, որոնց մասին չէ մայրամուտը: Կարևոր չէ, թե նկարիչն ինչի վրա է ավելի երկար աշխատել՝ լճակի՞, որը պարագա է, թե՞ արեգակի, որը նկարի հիմնական առարկան է, քանի որ առանց դրա մայրամուտը չես տեսնի: Կարևորն այն է, որ նկարին նայելիս հասկանում ես, որ պետք է ամբողջովին մաքրվել, որովհետև դա այն է, ինչ զգացել է նկարիչը մայրամուտը տեսնելիս և կարողացել է փոխանցել մեզ: Դա է նրա տեսած մայրամուտի հոգին:

Եվ կամ քո առջև են մի դիմանկարչի երեք կտավները: Մեկի վրա պատկերված է հանգուցյալ Հայո մորաքույրը, մյուսի վրա՝ Վլադիմիր Իլյիչը երիտասարդ տարիքում, իսկ երրորդն ինքնադիմանկար է: Հեղինակը մեղքի խոր զգացում ունի Հայո մորաքրոջ հանդեպ, որը մահացել է, երբ ինքը տասնչորս տարեկան էր: Խուլուհամր այդ կինը ապրում էր գյուղում՝ եղբոր բազմանդամ ընտանիքի հետ և աննկարագրելիորեն կապված էր եղբոր զավակներին և գյուղի իրենց տուն եկող իր բոլոր հարազատներին, որոնցից մեկն էլ հեղինակն էր: Հայո մորաքույրը, որ ինքնըստինքյան դժբախտ ճակատագիր ուներ, ամեն կերպ փորձում էր

իր հարազատների ցավն ու հոգսն իրեն վերցնել ու ավելացնել իր դժբախտությանը: Հայոն չէր լսում, բայց ամեն ինչից տեղյակ էր, և եթե հարազատներից մեկի հետ ինչ-որ բան էր պատահել, նա կարողանում էր իր լռությամբ սատարել նրան: Ութսուն տարեկան թորշոմած պառավը լավաշ էր թխում, մածուն էր մերում, գուլպա էր գործում ու միշտ ժպտում էր: Ժպտում էր անգամ, երբ հեղինակը՝ չտեսնված չարաճճի երեխա, տասներորդ անգամ քանդում էր շյուղի վրայի թելը, թռցնում էր լավաշի խմորը կամ ասեղով ծակում էր կթվող կովին: Հայո մորաքրոջ դիմանկարի վրա այս ամենը կա: Հայո մորաքույրը ժպտում է սոսկալի դժբախտ աչքերով, ու դու հասկանում ես, որ հարազատ մարդուն պետք է ոչ միայն սիրել, այլև աննրբանկատորեն ցույց տալ այդ սերը, քանի դեռ ուշ չէ: Եվ դա է այս նկարի հոգին:

Իսկ պրոլետարիատի առաջնորդին հեղինակն անձամբ չի ճանաչում: Եվ պատմություն էլ գիտի այնքան, որքան պատմաբանը կարող է նկարել: Մինչդեռ կուրսային աշխատանքը Լենինի դիմանկարն է, որը, ուզես թե չուզես, պետք է նկարես: Հեղինակը լրջորեն չի վերլուծել կոմունիստական հասարակարգի թերությունները, թեպետ ապրում է այդ հասարակարգում և ընդունակ է տեսնել դրանք: Եվ չգիտի մի կարևոր բան. որքա՞ն է Իլյիչի մեղքի բաժինը, եթե այն կա: Որքա՞ն է Իլյիչի մեղքի բաժինը նրանում, որ ինքն այսօր ստիպված է նկարել հենց իր՝ Իլյիչի դիմանկարը և ոչ, ասենք, Լենկ Թեմուրի, որովհետև այդպես է պահանջում նորին մեծություն Կոմերիտմիությունը: Եվ դիմանկարից Լենինը նայում է մի հայացքով, որը ոչինչ չի ասում, սառը, անտարբեր, անշունչ, և հասկանում ես, որ այս նկարի առարկան հոգի չունի:

Իսկ երրորդ կտավը, որ պատկերում է հենց իրեն՝ հեղինակին, արդեն նրա որոշակիորեն հասուն շրջանի ստեղծագործություն է: Դիմանկարում չեն երևում աչքերը. գլուխը խոնարհված է, և հայացքը՝ հառված գետնին: Որովհետև հեղինակն ասում է. դուք

չեք տեսնում իմ աչքերը, հետևաբար դուք չեք տեսնում ինձ, որովհետև բոլորովին պարտադիր չէ տեսնել ստեղծագործողին, բավական է տեսնել նրա ստեղծագործությունը:

Գուցե նա նկատի ունի հոգի՞ն:

12 նոյեմբերի, 1999

Ծիտ Կոստոյի սիրուհիներին ժամը հինգն անց հիսունի չվերթով բարեհաջող Մոսկվա ճանապարհելուց հետո որոշել էի տուն չգնալ, այլ վերադառնալ աշխատավայրս, մի երկու ժամ քնել և ժամը իննին գնալ պարոն վան Վիլետի հետ հանդիպման: Խառնաշփոթ գիշերը հոգնեցրել էր բավականին, և քնեցի հենց բազկաթոռին՝ ոտքերս աշխատասեղանին դրած: Ժամը ութին ողբալի մլավոցով արթնացրեց Պանտագրյուելը՝ հիմնարկի կատուն, որ իր անունը ստացել էր իր չափերի համար, բայց և այնպես հարազատ միջավայրում կոչվում էր պարզապես Կատու, մասամբ անվան երկարության, մասամբ էլ այն պատճառով, որ ինքը գոհ չէր իր անունից: Պանտագրյուել-Կատուի հետ մեր ծանոթությունը բավականին տարօրինակ էր: Նրան տեսա մեքենայիս կապոտին նստած, երբ ձմռան ցուրտ մի օր դուրս էի գալիս գրախանութից: Պարզ չէ, թե կենդանին ինչպես էր հասկացել, որ մեքենայի կապոտի տակ շարժիչ է լինում, որը աշխատում է, աշխատելուց տաքանում և տաքացնում մետաղյա կապոտը, բայց տեղը նրան այնքան էր դուր եկել, որ իջնելու մասին չէր էլ ուզում լսել: Ես նրան նախ խնդրեցի, հետո կարգադրեցի, հետո սպառնացի, հետո ինձ միացան մի քանի անցորդներ, բայց կատուն անդրդվելի էր, արհամարհանքով նայում էր վրաներս ու լիզում թաթը: Ստիպված այդպես էլ քշեցի մեքե-

նան՝ կատուն կապոտին, ուրախացնելով շրջապատին ու հատկապես դասից տուն գնացող դպրոցականներին: Կանգնեցի թանգարանի մուտքի մոտ, մեկ անգամ էլ կատվին ապարդյուն խնդրեցի իջնել ու մտա ներս: Պատուհանից տեսա, թե ինչպես կենդանին դեռ որոշ ժամանակ մնաց կապոտին, հետո, երբ շարժիչը սառեց, ցատկեց մեքենայի վրայից ու մոտեցավ թանգարանի մուտքին՝ ճիշտ այն պահին, երբ աշխատանքի էր գալիս կրտսեր գիտաշխատող Սերոժը, որը հիմնարկում չէր երևացել մեկ ամիս, և որին ես պատրաստվում էի աշխատանքից հեռացնել: Սերոժը, չնայած անպատասխանատու էր ու փնթի, բայց և խելացի էր: Նա անտարբեր չանցավ կատվի կողքով, այլ վերցրեց կենդանուն և մտավ ուղիղ իմ աշխատասենյակը:

– Ահա,– ասաց նա՝ ինձ դեմ տալով կատվին, որն արդեն հասցրել էր չանգռել նրա ձեռքը և կատաղած ֆշշացնում էր,– հիմա թանգարանում էլ առնետ չի լինի, տեսեք, թե ինչ վագրի եմ բերել: Դրա համար հատուկ գնացել էի գյուղ: Մեր գյուղի կատուները հայտնի են իրենց չափսերով: Տեսեք, թե ինչ վայրենի է:

«Վայրենի» բառի վրա կատուն կծեց Սերոժի ձեռքը և ցատկեց գետնին:

Սերոժին ես համենայն դեպս աշխատանքից ազատեցի, բայց կատվին պահեցի: Նա սկսեց ապրել իմ աշխատասենյակում և միզել Վաղինակի պահակակետի մոտ: Հավաքարարներն, իհարկե, բողոքում էին, և ընդհանրապես Պանտագրյուելն ինձ վրա շատ թանկ էր նստում, օրական խժռելով մեկ տուփ «Վիսկաս», վրայից խմելով մեկ շիշ կաթ: Փոխարենը առնետները թանգարանից իսկապես վերացան՝ չնայած չի կարելի ասել, թե կատուն դրա համար հատուկ ջանադրում էր: Պանտագրյուելին ավելի շատ հետաքրքրում էին մարդիկ, ավելի ճիշտ, այցելուները, որոնց նա ուղեկցում էր ցուցասրահներով, իսկական էքսկուրսավարի պես կանգնելով յուրաքանչյուր ցուցանմուշի առջև և, եթե խոսել էլ իմանար, կարելի էր նրա ծառայության համար այցելուներից վճար գանձել:

Ու ամռան մի օր էլ Պանտագրյուել-Կատուն անհետացավ: Վաղինակն ու ես փնտրեցինք նրան մի ամբողջ օր՝ ներքնահարկերում, պա-

հոցներում, տանիքի տակ, ապա թանգարանի շրջակայքում: Անգամ գնացինք այն գրախանութի մոտ, ուր Կատվին գտել էի մեքենայի կապոտին նստած: Բայց հիմարը չկար: Այդպես անցավ մեկ շաբաթ, և ես արդեն հույսս կորցրել էի, որ Պանտագրյուելը կվերադառնա: Մեկ շաբաթ անց նստած էի աշխատասենյակումս, երբ դուռը կամաց բացվեց և կատուս հպարտ քայլերով ներս մտավ: Տեղիցս վեր թռա, որ գրկեմ նրան, բայց անմիջապես էլ նստեցի: Պանտագրյուելի հետևից սենյակ մտավ մի գամփռ շուն: Երկուսն էլ վրաս ուշադրություն չդարձրին. նախ կանգնեցին մերկ կնոջ բրոնզե արձանիկի մոտ, ապա մոտեցան հարյուր քսան տարեկան գորգին, անցան նկարների մոտով և դուրս գալով աշխատասենյակիցս՝ մտան ցուցասրահ: Բարեբախտաբար, այնտեղ այցելուներ չկային, այլապես հազիվ թե անտարբեր մնային գամփռի ներկայությանը: Ես արդեն մտովի հաշվում էի, թե ինչ կնստի վրաս Պանտագրյուելի հետ այս Գարգանտյուային էլ պահելը, բայց, փառք Աստծո, էքսկուրսիան ավարտելուց հետո Կատուն նրան ուղեկցեց դուրս:

Երբ Կատուն իր ողբալի մլավոցով արթնացրեց ինձ, ժամը ութն էր: Բավականաչափ ժամանակ կար սուրճ խմելու, թարմանալու և պարոն վան Վիլետի հետ հանդիպմանը պատրաստվելու: Քարտուղարուհին դեռ չէր եկել և սուրճի համար դիմեցի հավաքարարուհուն, որովհետև ինքս տեղերը չգիտեի: Հավաքարարուհին, իհարկե, սուրճը բերեց սխալ բաժակով, չափից ավելի քաղցր և ասաց, որ ցուցասրահի դռան մոտ մի տղա է կանգնած: Ես խնդրեցի ներս կանչել նրան: Թանգարանի ցուցասրահները չէին ջեռուցվում, և ուշ աշնանը, անգամ ցերեկվա ժամերին հազվադեպ այցելուներ էին լինում, այնպես որ, կարելի էր զարմանալ առավոտյան այդ մեկի համար: Բարձրահասակ, թիկնեղ մի երիտասարդ, հաստ սև ունքերով ու խոշոր, տխուր աչքերով, մտավ աշխատասենյակս, տարակուսանքով նայեց շուրջն ու շփոթված մոտեցավ պատի տակ շարված նկարներին: Հագին մաշված մի շոր էր, ոչ

այն է բաճկոն, ոչ այն է վերարկու, իսկ գլխին տանկիստի գլխարկ էր՝ չկապված կապիչները ականջակալների տակից կախված: Չգիտեմ ինչու, ինձ թվաց, թե նրան էլի եմ տեսել:

Նա ինձ նկատեց բավականին ուշ, երկմտանքով մոտեցավ, հանեց տարօրինակ գլխակը, խառնեց առանց այդ էլ խառնված սև գանգուրները և ձեռքը մեկնեց ինձ.

– Եկել եմ ցուցահանդես:

Վերջապես հասկացա, թե ով է այս այցելուն:

– Ողջույն, Սարգի՛ս:

– Երեկ էի եկել,– շարունակեց նա իր սարերի բարբառով,– բայց ձեր ցուցահանդեսում մարդ չկար: Ձեր միլիցիոներն ասաց, որ վաղը գամ:

Սարգիսը չնստեց բազմոցին, այլ կրկին մոտեցավ իր նկարներին և սկսեց հերթով բարձրացնել դրանք:

– Երկուշաբթին թանգարանի հանգստյան օրն է,– բացատրեցի,– փոխարենը մենք աշխատում ենք շաբաթ և կիրակի օրերին, որպեսզի ուրիշները հանգստանան մեզ մոտ: Դու պարզապես պետք է ասեիր պահակին, թե ով ես, և նա կկանչեր ինձ կամ աշխատողներից մեկին: Որտե՞ղ ես մնացել գիշերը, բարեկամների մո՞տ:

– Չէ՛, դիմացի այգում:

Ես հասցրի միայն զարմանալ, իսկ Սարգիսը չհասցրեց բացատրել, թե ինչպես է մնացել դիմացի այգում, որովհետև այդ պահին աշխատասենյակ մտան երկու տղամարդ: Երկուսի հագին էլ կարճ կաշվե բաճկոններ էին, որոնց տակից երևում էին ատրճանակների փողերը:

– Ո՞վ է այստեղ տնօրենը,– հարցրեց նրանցից մեկը:

Ես ոտքի կանգնեցի: Պետք էր ենթադրել, որ այս նոր հյուրերը ոստիկանությունից էին:

– Ես եմ: Ուզո՞ւմ եք առանձին խոսել:

Հասկացրի Սարգսին, որ դուրս գա, բայց տղամարդկանցից մեկը կանխեց՝ փակելով սենյակի դուռը և կանգնելով դրա առջև: Մյուսը բավականին կոպտորեն սեղմեց ուսս և ասաց.

– Նստի՛ր: Մի՛ վախեցիր, վախենալու բան չկա: Ասա մեզ, թե ինչպես ճանապարհեցիր հյուրերին և որտեղ է պայուսակը:

Ես, համենայն դեպս, չնստեցի:

- Եթե անգամ պիտի վախենամ,– ասացի հանգիստ,– թույլ տվեք իմանալ, թե ումից եմ վախենում: Բայց նաև համոզված եղեք, որ վախեցող չեմ:

Տղամարդիկ նայեցին իրար: Դռան մոտ կանգնածը մի քայլ առաջ եկավ ու քորեց գլուխը: Նա ուզում էր ինչ-որ բան ասել, բայց ես առաջ ընկա.

– Կամ ասեք՝ ովքեր եք և ինչ եք ուզում, կամ դուրս եկեք այստեղից, որովհետև ինձ խանգարում եք:

Նրանք կրկին միմյանց նայեցին: Խոսեց երկրորդը, որ խոզի մռութ ուներ:

– Մի՞թե քեզ չի երեկ կարգադրել Պարոն Բալյանը, որ հյուրերին Մոսկվա ճանապարհես:

Հարցն այսպես դնելով, խոզի մռութն ինձ, ըստ էության, օգնեց: Բանն այն է, որ ես լավ չէի պատկերացնում իմ անելիքը. եթե սրանք ոստիկաններ էին, ապա պետք էր խուսափել երեկվա միջադեպի, մանավանդ աղջիկների մասին խոսել, որովհետև դա պարզ մատնություն կլիներ: Իսկ եթե նրանք Ծիտ Կոստոյի մարդիկ էին, ապա ինչո՞ւ չէին ներկայանում: Բայց հիմա կարելի էր օգտագործել «կարգադրել» բառը և շրջանցել բուն հարցը:

– Դուք սխալվում եք, պարոնայք, ինձ այստեղ ոչ ոք չի կարող կարգադրել:

Խոզի մռութը դարձյալ քորեց գլուխը: Ես ցուցադրաբար վերցրի հեռախոսը և ձևացրի, թե զանգում եմ: Դժվար է ասել, թե դեպքերն ինչ ընթացք կստանային, եթե ադ պահին տեղի չունենար մի բան: Միջամտեց Սարգիսը, որ մինչ այդ ձեռքերը կրծքին խաչած՝ կանգնած էր իր նկարների մոտ:

– Չոբան Համոյի ոչխարները սրանցից խելոք են,– ասաց նա,– ոչխարին որ քշում են, քշվում է:

Worldinevents.com-ի պես խոշոր և հեղինակավոր ինտերնետային թերթը ռուսերեն հրատարակելու իրավունքն ստանալը և այդ գործը Երևանում կազմակերպելը հասկանալիորեն փոքր բան չէր: Դա նշանակելու էր, այսպես ասած, ոտքով բացել ռուսալեզու ինտերնետային մամուլի դուռը և ներխուժել մի հսկայական և օր օրի մեծացող շուկա: Դա նշանակելու էր ողջ հետխորհրդային և հետսոցիալիստական տարածքում, ինչպես նաև աշխարհի տարբեր կետերում տեղակայված ռուսալեզու գաղթօջախներում ունենալ ընթերցողների մի մեծ բանակ, դա նշանակելու էր թղթակիցներ նշված տարածքների գլխավոր քաղաքներում, դա նշանակելու էր պատկառելի գրասենյակ Երևանում, մի քանի տասնյակ աշխատողներով և, բնականաբար, դա նշանակելու էր փող: Սակայն այս ամենի համար նախ և առաջ հարկավոր էր շահել Պարոն վան Վիլետի վստահությունն ու համակրանքը:

Հոլանդական ընկերության հետ մենք նամակագրության մեջ էինք մտել դեռ երեք ամիս առաջ՝ օգոստոսին:

Մանկական ընկերս՝ Վլադիմիրը, որին երկար ժամանակ չէի տեսել, մի օր եկավ մոտս՝ ձեռքին քառածալ մի թուղթ, որ "Events" ընկերությանը իր գրած նամակի պատասխանն էր:

Վլադիմիրը այն տիպերից է, որոնց աշխատասիրության ավելցուկը լրացնում է խելքի պակասը և որոնք դպրոցում միշտ գերազանցիկ են լինում, ինստիտուտում՝ ուսխորհրդի քարտուղար, բանակում՝ գրագիր, և հետագայում շատ հեշտությամբ բարձրանում են կարիերայի սանդուղքով: Նրանք երբեք չեն դավաճանում կնոջը, խմում են առավելագույնը յոթանասունհինգ գրամ կարմիր գինի, և գուցե լավ են անում: Բայց նրանք, որպես կանոն, շատ վախկոտ են: Վախենում են շեֆից, վախենում են կնոջից, վախենում են միջանցահովիկից և, որ ամենավատն է, վախենում են իրենք իրենցից: Նրանք նաև վազվզող են ու փնտրող և վարձահատույց են լինում իրենց աշխատասիրության համար: Չնայած հիմնականում պարկեշտ մարդիկ են և ամենևին բնատուր սրիկաներ չեն, բայց հաճախ է լինում այնպես, որ երբ հասնում են դավաճանության սահմանագծին, ինքնցիայով անցնում են այն՝ ոչ թե այն պատճառով, որ ուզում են մեկին վատություն անել կամ իրենց՝ լավություն, այլ պարզապես վախկոտությունից:

Ինչ վերաբերում է Վլադիմիրին, ապա, ինչպես ասացի, նա իմ մանկական ընկերն էր, ու թեպետ չէի շփվել հետը վերջին տասը տարիներին, պատճառ չունեի մերժելու նրա խնդրանքն ու ծանոթանալու և իրեն էլ ծանոթացնելու քառածալ թղթի բովանդակությանը: Այն շատ պարզ էր: Հոլանդական ընկերությանը հետաքրքրել էր Պարոն Վլադիմիրի առաջարկը՝ պարբերաբար ինֆորմացիա տրամադրել անդրկովկասյան իրադարձությունների վերաբերյալ, և նրանք խնդրում էին գործունեության ավելի մանրամասն ծրագիր և այն կազմակերպության տվյալները, որի հետ պետք է համագործակցեին: Եվ խնդիրն այն էր, որ նշված երկուսն էլ Վլադիմիրը չուներ: Նա պարզապես նամակներ էր գրել worldinevents.com-ին և նմանատիպ մի քանի ուրիշ էլեկտրոնային թերթերի, հանդես եկել միևնույն առաջարկությամբ, կասկած իսկ չունենալով, որ իր առաջարկը կարող է որևէ մեկին հետաքրքրել: Բայց արի ու տես, որ հետաքրքրել էր, և պարզվել էր, որ երկրորդ քայլին Վլադիմիրը ընդունակ չէ: Ուրեմն պետք էր օգնել մանկության ընկերոջը, բայց նաև հանուն ճշմարտության պետք է ասել, որ չէր բացակայում նաև անձնական հետաքրքրվածությունը:

Բայց նաև շտապել պետք չէր, հենց գործին չվնասելու համար: Այդ իսկ պատճառով ես Վլադիմիրին առաջարկեցի նրանց պատասխանել, որ մի քանի օրից կստանան առաջարկության ամբողջական փաթեթը: Նա այդպես էլ արեց և հաջորդ օրը վերադարձավ մոտս ճշտելու համար, թե ինչ է նշանակում «ամբողջական փաթեթ»: Նա բացատրեց, որ ինքը նկատի ուներ ընդամենը լրաքաղ անել տեղական մամուլից, թարգմանել տալ անգլերեն և ամեն օր ուղարկել worldin-

events.com -ին, բնականաբար, դրա դիմաց վարձատրվելով:

Մեծարգո պարոն վան Վիլետին Վլադիմիրի անունից ուղղված նամակում ես խնդրեցի թույլ տալ ավելի մանրամասնել իրենց ընկերությանն արված մեր հակիրճ առաջարկությունը և այսուհետև հանդես գալ որպես հայաստանյան «Շաբաթ» ՍՊԸ-ի փոխտնօրեն: «Շաբաթի» մասին տեղեկացրի, որ այն հիմնադրվել է 1990 թվականին, մինչև 1994 թվականը հրատարակել նույնանուն պարբերականը, ապա անցել հրատարակչական գործունեության: Գրեցի, որ ՍՊԸ-ն ղեկավարում են պրոֆեսիոնալ լրագրողներ, որոնց, ինչպես և անձամբ Վլադիմիրի ամենօրյա ինֆորմացիայի ստացման աղբյուր է հանդիսանում worldinevents.com-ը, որովհետև լրատվությանը նրա մոտեցման որդեգրած սկզբունքները խիստ հոգեհարազատ են մեզ, և որ մեր պարբերականը հրատարակելու չորս տարիների ընթացքում մենք դավանել ենք օպերատիվության և օբյեկտիվության միևնույն սկզբունքներին: Սակայն խնդրեցի թույլ տալ նաև նկատել, որ worldinevents.com-ում սակավ և աղքատ է մեր տարածաշրջանին վերաբերող լրատվությունը, մինչդեռ տարածաշրջանը հասկանալիորեն աստիճանաբար դադարում է երկրորդական դեր խաղալ Եվրոպայի քաղաքական թատերաբեմում: Ինչ վերաբերում է Ռուսաստանին և ԱՊՀ մյուս երկրներին, ապա այստեղից ստացվող լրատվության որակը ևս, մեր կարծիքով, բավարար չէ՝ նկատի ունենալով համեմատությունը մյուս խոշոր էլեկտրոնային պարբերականների հետ: Ելնելով վերոնշյալից՝ մեր առաջարկը կայանում է հետևյալում: Օգտագործելով մեր կապերը ԱՊՀ լրագրողական շրջանակների հետ, ներգրավել թղթակիցներ բոլոր խոշոր քաղաքներում և Երևանի թղթակցական կետից կոորդինացնել նրանց աշխատանքը:

Ապա անցա երկրորդ առաջարկին, որը վերաբերում էր worldinevents.com-ը ռուսերեն հրատարակելուն: Հանգամանորեն ներկայացրի ռուսալեզու էլեկտրոնային մամուլը, ընթերցողների տեղաբաշխումն ու քանակը, նրանց աճի միտումները, առհասարակ ինտերնետի զարգացման դինամիկան տարածաշրջանում: Առաջարկեցի կայքը ողջ ծավալով ռուսերեն թարգմանելու և worldinevents.ru հասցեով հանդես գալու աշխատանքները իրականացնել Երևանից: Բացատրեցի, որ ռուսերենի մասնագետների պակաս այստեղ չկա, իսկ որպես մեր հիմնական հաղթաթուղթ բերեցի ծախսերի նկատելի տարբերությունը ԱՊՀ այլ քաղաքների, մասնավորապես Մոսկվայի հետ:

Երբ յոթ էջանոց նամակի տակ, որն ինձանից մեկ օր խլեց, գրեցի Վլադիմիրի անունը, ճիշտն ասած, մի քիչ ափսոսում էի չարչարանքս: Ինչևէ, հետագա ողջ նամակագրությունը նույնպես իրականացրի Վլադիմիրի անունից: Նախ հոլանդացիները կամեցան ունենալ Հայաստանի օրվա քաղաքական, ապա տնտեսական վիճակի Վլադիմիրի ամփոփ վերլուծությունը: Եթե առաջինը ես մի կերպ գլուխ բերեցի, որովհետև վաղուց չէի զբաղվել լրագրությամբ, իսկ քաղաքականության սրճարան խուսափում եմ հաճախել, ապա երկրորդի համար ստիպված եղա դիմել տնտեսական թեմաներով գրող բարեկամիս: Հետո Վլադիմիրին խնդրեցին փոխանցել բոլոր այն լրագրողների տվյալները և վերջին հոդվածները, որոնք գործարքի կայացման դեպքում պետք է դառնային ընկերության սեփական թղթակիցները տեղերում: Ես խառնեցի իրար բոլոր այն արտասահմանցի լրագրողներին, որոնց հետ ժամանակին առիթ էի ունեցել մասնակցելու տարբեր գիտաժողովների ու սեմինարների ու կարողացա հավաքել բավականին ներկայացուցչական մի թիմ: Հետո հարկ եղավ ներկայացնել բաժանմունքի հիմնադրման ծախսերը և մեկ տարվա գործունեության ծրագիրը: Մի խոսքով՝ այս ամենը տևեց մոտ երկու ամիս, և ողջ այս քրչիկից հետո միայն հոլանդական ընկերության նախագահը որոշեց գալ Հայաստան և տեղում շարունակել բանակցությունները:

Եվ ամենազավեշտականն այն էր, որ պարզվեց մենք պատրաստ չենք այդ այցելությանը... ֆինանսական առումով: Տնօրենի իմ աշ-

խատավարձը բավականացնում էր հիմնարկից մինչև մոտակա խմելատեղը հասնելը, իսկ Վլադիմիրը չէր աշխատում: Մինչդեռ, եթե անգամ վերանանք հյուրընկալության և հյուրասիրության անշահախնդրությունից, մեզ անհրաժեշտ էր Պարոն վան Վիլետին հյուրընկալել և հյուրասիրել: Ուստի մենք փող պարտք արեցինք:

Մնացած ամեն ինչ կարգին էր. հոլանդացու հետ բանակցություններին մեզ օգնելու և գործի հաջողության դեպքում մի թիմ կազմելու ակնկալիքով ես հրավիրել էի իրենց գործի մասնագետների՝ իրավաբան Դավիթին, ծրագրավորող Մարգարին, հաշվապահ-ֆինանսիստ Պողոսին, թարգմանչուհի-քարտուղարուհի-գեղեցկուհի Լիզային և կազմակերպիչ Մկոյին:

Առավոտյան ժամը տասին «Անի» հյուրանոցի կոնֆերանս-սրահներից մեկում "Events" ընկերության նախագահ պարոն Ֆիլիպ վան Վիլետի հետ բանակցելու, Վլադիմիրից և ինձանից բացի, եկել էին իրավաբան Դավիթը, ծրագրավորող Մարգարը, հաշվապահ-ֆինանսիստ Պողոսը, թարգմանչուհի-քարտուղարուհի-գեղեցկուհի Լիզան և կազմակերպիչ Մկոն, որը միակ մարդն էր, որ անգլերեն ոչ մի բառ չգիտեր. ավելի ճիշտ, գիտեր մեկը, բայց ես նրան հատուկ զգուշացրել էի, որ այդ բառը հանդիպումների ժամանակ չօգտագործի, համենայն դեպս՝ բարձրաձայն: Մկոն առհասարակ հայտնի քֆուրչի էր և անխնա հայհոյում էր ցանկացած շրջապատում, իսկ եթե մի քիչ էլ քեֆը լավ էր՝ ցանկացած մարդու: Նրան ճանաչողները, սակայն, գիտեին, որ Մկոյի հայհոյանքներն իրականում բոլորովին էլ հայհոյանք չեն, իսկ չճանաչողները հիմնականում գերադասում էին լռել, որովհետև Մկոն աժդահա էր և, ինչպես իր նման շատ ուրիշ ծայրահեղ բարի մարդիկ, ահարկու կերպարանք ուներ:

Մի անգամ Մկոյի հետ գնացել էինք քաղաքից դուրս՝ քեֆի: Վերադարձին Մկոն մեքենայի մեջ խմած քնած էր, իսկ ես ճանապարհը

կորցրել էի: Կանգնեցի մի գյուղի կենտրոնում, կարծեմ ակումբի մոտ, ուր հավաքված էին բոլոր պարապ գյուղացիները, և մեքենայից չիջնելով՝ հարցրի ճանապարհը: Գյուղացիները, ինչպես լինում է սովորաբար, շրջապատեցին մեքենան և իրար հերթ չտալով, սկսեցին ինձ օգտակար լինել: Այդ պահին Մկոն արթնացավ, հորանջեց, տրորեց աչքերը և հարցրեց. «Էս ո՞ւր ենք, սրա՞նք ովքեր են, ես սրանց մերը»: Մասնագիտությամբ խոհարար Մկոն կյանքում քիչ հաջողությունների էր հասել, գուցե իր հայհոյելու պատճառով, գուցե իր գլուխգովանության, բայց, համենայն դեպս, կար երկու բան, որ նա լավ էր անում: Առաջինը նարդի խաղալն էր: Մեր շենքում, մեր թաղում և ամենուրեք, ուր Մկոյին ճանաչում էին, քչերը կարող էին պարծենալ, որ նրան հաղթել են: Եվ մյուս բանը, որ Մկոն իսկապես լավ էր անում, քեֆեր կամ զվարճանքներ կազմակերպելն էր: Շենքում, բակում և ճանաչողների շրջանում շատերն էին նրան դիմում նման հարցերով և միշտ շնորհակալ էին: Ուստի պատահական չէ, որ ես հենց նրան էի ներգրավել պարոն վան Վիլետի այցը կազմակերպելու, որի ընթացքում զվարճանքի տարրը, համոզված էի, որոշիչ էր լինելու:

Բանն այն է, որ հոլանդացուց ստացված վերջին նամակները այնքան էլ գործնական բնույթի չէին: Նա ավելի շատ հետաքրքրվում էր իր գործուղման գրաֆիկի այն մասով, որը վերաբերում էր երեկոյան ժամերին, և միջանկյալ ակնարկում էր, որ ինքը կարևորում է իր հանգիստը մանավանդ գործուղումների ժամանակ: Դա, իհարկե, նորմալ էր, միայն անհասկանալի էր, թե հաճույքների և զվարճանքների քաղաք Ամստերդամից եկող մարդուն ինչով կարելի է զբաղեցնել Երևանում: Համենայն դեպս, ես որոշ նկատառումներ ունեի, որոնցից մեկը կապված էր Լիզայի հետ: Քարտուղարուհի-թարգմանչուհի-գեղեցկուհին իրականում այնքան էլ գեղեցկուհի չէր: Կա կանանց մի այդպիսի տեսակ, որ նման է մեր գյուղի տանձին. ոչ առանձնապես սիրուն, ոչ առանձնապես քաղցր ու հյութալի, բայց սարսափե-

լի առանձնահատուկ, ու դրա հաշվին՝ ձգող: Առանձնահատուկ էր Լիզան նաև այլ առումով: Նա իր սարսափելի անմիջականությանը զուգահեռ ուներ վատ քողարկված մի բարդութավորվածություն, և այս անհասկանալի հակասությունը երբեմն աչքի էր զարնում՝ դարձնելով նրան առավել ձգող:

Կար ևս մի հանգամանք. Լիզան կյանքի մեծ փորձ ուներ և, դժբախտաբար, նրա կանացի զգացմունքները շատ էին խաբվել: Եվ, որ ամենացավալին է, խաբվել էին ոչ թե իսկական տղամարդկանց, այլ, այսպես ասած, ալֆոնսների կողմից, որոնց Լիզան վստահել էր. և հավանաբար սրանից էին գալիս նրա բարդույթները, որոնք կարող էին բերել անգամ անտեղի ատելության: Բայց, բոլոր դեպքերում, Լիզան հրաշալի թարգմանչուհի էր ու է՛լ ավելի լավ քարտուղարուհի, որին կարելի էր մինչև վերջ վստահել:

Գեղեցկուհի չէր նաև հաշվապահ-ֆինանսիստ Պողոսը: Նա խելացի, ազնիվ, ճարպիկ ու խաբեբա էր այնքան, որքան անհրաժեշտ է լավ հաշվապահ լինելու համար: Բայց նա մի բանով տարբերվում էր հաշվապահի տարածված պատկերացումից: Պողոսը չտեսնված կնամոլ էր և, որ գլխավորն է, հաջողակ: Հավանաբար, պատճառն այն էր, որ նա իր սուրը սրում էր հիմնականում այն զոհերի վրա, ում բոլորովին էլ պարտադիր չէ սպանել, որովհետև նրանց տարիքն այնպիսին է, որ մոտ են իրենց մահով գնալուն: Հաշվապահի ընդունված սառը, ժուժկալ կերպարին չէր ձուլվում նաև Պողոսի անմնացորդ նվիրումը ընկերությանը, նրա շռայլությունը և խոր հարգանքը հանդեպ բոլոր հեղուկները, որոնց սպիրտի տոկոսը քառասունից պակաս չէ: Ահա այսպիսի հաշվապահ:

Պողոսի բացարձակ հակապատկերն էր Մարգարը: Բարձրահասակ ու իսկապես արտահայտիչ արտաքինով Մարգարին, սակայն, մենք վերջին անգամ սանրված տեսել էինք տասներորդ դասարանում: Ու նրա հագի մշտապես միևնույն շորերն էլ մեզ ծանոթ էին տասներորդ դասարանից: Ու ինքն էլ մնում էր նույնը և երբեք չէր

փոխվում: Շիտակ, ծայրահեղ սկզբունքային ու միշտ ինքնամփոփ տղամարդու կերպար էր Մարգարը՝ մեծ հումորով ու խորաթափանց ուղեղով: Բայց ինձ համար կարևորն այն էր, որ նա ամենաբարձր կարգի ծրագրավորող էր:

Իր բնագավառում ամենաբարձր կարգն ուներ նաև Դավիթը, որ ներգրավված էր այս գործում որպես իրավաբան, իսկ ինչ վերաբերում է նրա մարդկային նկարագրին, ապա նրան կարելի է բնորոշել շատ պարզ՝ կարգին մարդ:

Եվ հենց այս արհեստավարժների օգնությամբ էլ ես մտադիր էի շահել հոլանդացու վստահությունը:

Առաջին խնդիրը, որ պետք էր լուծել պարոն վան Վիլետի հետ սկսված բանակցություններում, Վլադիմիրի վրայից հիմնական բանակցողի դերը վերցնելն էր, որովհետև հնարավոր չէր նրա փոխարեն խոսել և դիմացինին համոզել, որ խոսողը նա է: Այնպես որ, ինքս բացեցի ժողովը և բոլորին ներկայացնելուց հետո, ինքս ներկայացա, որպես «Շաբաթ» ՍՊԸ-ի տնօրեն, և դա իսկապես այդպես էր: Ապա խոսեց հոլանդացին և մեզ պատմեց իր ընկերության հիմնադրման պատմությունը: Ընդհանուր առմամբ այն հետաքրքիր չէր, բայց մի քանի հետաքրքիր դրվագներ, այնուամենայնիվ, կային: Ամենագլխավորը սկզբնական մտահղացման չափազանց պարզունակ լինելն էր: Մտահղացման հեղինակները՝ Ֆլիպի որդիները, որ մեր տարեկիցներն էին, պարզապես ճիշտ էին ընտրել ժամանակը: Ինսունականների կեսերից էլ առաջ, երբ ինտերնետը նոր էր տարածում գտնում աշխարհում, բոլորը չէ, որ հավատում էին դրա գլխապտույտ հաջողությանը և պատրաստ էին փող ներդնել որևէ ինտերնետային բիզնեսի մեջ: Այդ իսկ պատճառով Ֆլիպը, որ այդ ժամանակ հեղինակային իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մի կազմակերպություն էր նախագահում, վերապահումով մոտեցավ աշ-

խարհի տարբեր կետերում թղթակիցների ցանց ստեղծելու և ինտերնետում նորությունների կայք բացելու որդիների մտահղացմանը: Բայց այն մերժել նա չշտապեց և սկսեց լրջորեն ուսումնասիրել ոլորտը: Կային բաներ, որոնք կարելի էր չնկատել, բայց կային նաև բաներ, որոնք չէր կարելի չնկատել: Կարելի էր, ասենք, չնկատել, որ աշխարհում ինտերնետից օգտվողների թիվն օրեցօր տասնապատկվում և հարյուրապատկվում է, բայց որ սեփական համակարգչում ինտերնետային կայքերի թիվն աճում է նույն տեմպերով, չնկատել անհնար էր: Կարելի էր չնկատել, որ ինտերնետից օգտվողները աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին ինֆորմացիա են փնտրում ինտերնետում, բայց որ այդ ինֆորմացիան այստեղ սուղ էր, չնկատել անհնար էր: Համաշխարհային անուն ունեցող այնպիսի լրատվական գործակալություններ ու լրատվամիջոցներ, ինչպիսիք էին Reuters-ը, AFP-ն, CNN-ը, BBC-ն և այլն, չէին շտապում մտնել ինտերնետ: Այս բացը լրացնելու ճիշտ ժամանակն էր, որովհետև հետագայում վերոհիշյալների և այլ ուժեղների հետ մրցակցել անհարին կլիներ, իսկ քանի դեռ նրանք չկային, կարելի էր բարի անուն և բարի համբավ ձեռք բերել: Միայն թե սեփական թղթակիցների ցանց ստեղծելու որդիների առաջարկը սկզբնական շրջանում նպատակահարմար չէր, որովհետև կարելի էր ավելի խելոք վարվել:

Եվ պարոն վան Վիլետն ավելի խելոք վարվեց: Նա նախ ինտերնետում գրանցեց worldinevents.com զրնգուն դոմենը, բացեց նույնանուն ընկերությունը և այդ ընկերության անունից պայմանագրեր կնքեց մի քանի խոշոր լրատվական գործակալությունների հետ և իրավունք ստացավ այդ գործակալություններից գնված նորությունները և լուսանկարները տեղադրել ինտերնետի իր կայքում: Պայմանագրերը խիստ հեռատեսորեն կնքված էին մի քանի տարով և փաստորեն հնարավորություն էին տալիս worldinevents.com-ին ոչ միայն միանգամից դառնալ ինտերնետում ամենածավալուն նորություններ-

ի կայքը, այլև հետագայում էլ մնալ այդպիսին: Բայց, սրանով հանդերձ, Ֆլիպ վան Վիլետը պարտավոր էր մտածել հետագա մրցակցության մասին: Եվ նա սկսեց աստիճանաբար ստեղծել սեփական թղթակիցների ցանցը ողջ աշխարհում:

Ինչ վերաբերում է ընկերության եկամուտներին, ապա էլեկտրոնային լրատվամիջոցների պարագայում դրանք կարող են գոյանալ բացառապես գովազդներից: Այստեղ մեխանիզմը մի քիչ բարդ է, և հոլանդացուց երկար ժամանակ պահանջվեց այն մեզ բացատրելու համար: Գովազդատուն, ինտերնետային կայքի որևէ էջում իր գովազդը տեղադրելով, վճարում է այդ էջը այցելուների կողմից բացվելու քանակի հաշվարկով: Հազար այցելուի համար վճարվում է x գումար: Ենթադրենք, worldinevents.com-ի հիմնական էջն օրական այցելում են հարյուր հազար անգամ, նշանակում է՝ էջում տեղադրված գովազդի տերը ընկերությանը վճարում է x անգամ հարյուր գումար: Սակայն հիմնական էջերից անցումներ կան տասնյակ այլ էջերի: Օրինակ՝ սեղմելով հիմնական էջին տեղադրված «սպորտային լուրերի» վրա՝ ընթերցողը հայտնվում է նոր էջում, նորից սեղմելով, ասենք, «Կանտանան հրաժեշտ է տալիս ֆուտբոլին» վերնագրի վրա՝ հայտնվում է երրորդում: Ամենուրեք տեղադրված են գովազդները: Այցելուների քանակը հաշվվում է հատուկ ծրագրի միջոցով, որը բաց է երկու կողմերի համար:

Պարոն վան Վիլետը, չնայած չբացահայտեց իր ընկերության եկամուտները, բայց մոտավոր հաշվարկ անելն այնքան էլ բարդ չէր: Մենք գիտենք, որ worldinevents.com-ի այցելուների թիվն այդ ժամանակ կազմում էր օրական մի քանի հարյուր հազար: Եթե նկատի ունենանք, որ մեկ այցելուն միջինը կարդում է հինգ լուր, այդպիսով բացելով հինգ նոր էջ, ստացվում է, որ մեկ գովազդատուն օրական վճարում է x անգամ, ասենք, տասնհինգ հազար: Worldinevents.com-ի վրա կային հինգ ընկերությունների գովազդներ, հետևաբար եկամուտը դառնում էր x անգամ յոթանասուն-

հինգ հազար՝ օրական: X-ը, բնականաբար, կայուն թիվ չէ, բայց եթե անգամ միջինը վերցնենք մեկ դոլար, կրկին ստացվում է շատ մեծ գումար:

Worldinevents.com-ի իսպաներեն, պորտուգալերեն և ֆրանսերեն տարբերակների այցելուների թիվը տասը-քսան անգամ ցածր էր անգլերեն տարբերակից, և մենք հիմքեր ունեինք ենթադրելու, որ ռուսերեն տարբերակում մեկ տարի հետո պատկերը կլինի նույնը: Մնում էր միայն պարոն վան Վիլետի հետ համաձայնության գալ փայաբաժինների շուրջ, իսկ նախքան այդ՝ գործը մեր ընկերությանը վստահելու: Բայց դա լինելու էր հետո:

31 հոկտեմբերի, 1999

– Հեռուն կգնա աղջիկը,– ասաց Սոֆիայի ազդեցիկ թերթերից մեկի մշակութային մեկնաբան Լյուբոմիրա Խիտրովսկան, երբ Մարուսյայի առաջին մենահամերգի ավարտին դահլիճում դադարեցին օվացիաները:

Չնայած նա գտնվում էր արձակուրդի մեջ՝ պայուսակից հանեց ձայնագրիչը և սկսեց մոտենալ դահլիճում ներկա երաժիշտներին և մասնագետներին: Ես ասացի, որ կսպասեմ միջանցքում, և դուրս եկա:

Մոտեցա պատուհանի մոտ՝ «Չոխել» կարմիր վահանակի տակ հավաքված ծխողներին, ու ինքս էլ մի սիգարետ վառեցի:

Մարդիկ չէին շտապում հեռանալ համերգասրահից, որովհետև դրսում ուժեղ անձրև էր: Այն սկսվել էր հոկտեմբերի այդ վերջին օրվա վաղ առավոտից և կարծես որոշել էր տեղալ մինչև հաջորդ հոկտեմբեր: Պատուհանից երևում էր Ալեքսանդր Նևսկու տաճարի թաց գմբեթը, և մի մոլորված տատրակ փնտրում էր իր բույնը, որ, հավանաբար, գմբեթի տակ էր:

Ավելի մոտ՝ դիմացի շենքի տանիքին, բոցկլտում էր «Ֆարմախիմի» կարմիր գովազդը, որի արտացոլանքից կարմրել էր փողոցի թաց ասֆալտը: Փողոցը լիքն էր մեքենաներով, իսկ մայթը՝ դատարկ անցորդներից: Միայն մեկը անհաջող փորձեր էր անում անցնել փողոցը արգելված տեղից և անընդհատ մի քայլ առաջ գալով՝ ստիպված լինում հետ ցատկել մայթին: Նրա մի ձեռքին անձրևանոցն էր, մյուսին՝ հսկա մի ծաղկեփունջ: Հավանաբար նա, ում պիտի հանձնվեր ծաղկեփունջը, սպասում էր դիմացի մայթի սրճարանում, և անցորդն ուզում էր վայրկյան առաջ հասնել այնտեղ: Բայց հերթական փորձից հետո նա բախվեց մայթեզրին ու ընկավ մեջքի վրա՝ ձեռքից վայր գցելով անձրևանոցն ու ծաղկեփունջը:

Ես չհասցրի տեսնել, թե ինչ եղավ հետո, որովհետև մոտեցավ Լյուբան.

– Գնացինք,– ասաց նա,– Մարուսյան կգա մեզ հետ:

– Բայց...– ես զգացի, որ լեզուս կապ ընկավ,– բայց դրսում անձրև է:

Լյուբան ծիծաղեց՝ թերևս հասկանալով իմ հուզմունքը:

– Նա մեզ կսպասի ծառայողական մուտքի մոտ, գնանք վերցնենք մեքենան:

Մշակութային մեկնաբանի փոքրիկ «Շկոդա» «Ֆաբիան» կանգնած էր հենց այն տեղում, որտեղից քիչ առաջ փորձում էր փողոցն անցնել ծաղիկներով անցորդը: Բայց նա արդեն այնտեղ չէր: Մայթեզրի գրանիտին ընկած էր կարմիր վարդի մի կոտրված գլխիկ: Ես վերցրի այն, թերթիկների վրայից ձեռքով մաքրեցի ցեխաջուրը և ամրացրի «Շկոդայի» հայելուն:

Մարուսյան բեմի հագուստով էր՝ պարզ ջինսե շրջազգեստով, բաճկոնով և արտասովոր երկար, զոլավոր ու բազմագույն գուլպաներով:

Ես իջա մեքենայից և բացեցի հետևի դուռը: Ինձ թվաց, որ նա ժպտաց ինձ, թեև գուցե միայն թվաց:

Մենք գնացինք Լյուբայենց տուն, ուր ապրում էին նրա ամուսինը՝ իմ վաղեմի բարեկամ Պանչո Թոդորովը, և նրանց որդին՝ փոքրիկ Ռոբկան:

Դրանից երկու ամիս առաջ, ամռան վերջին օրը, փոքրիկ Ռոբկան լողափ էր իջել կոշիկներով, հագել էր տատիկի նվիրած վանդակավոր վերնաշապիկը և իր սիրելի հին ջինսից շալվարը, որից հայրիկը «շորտեր» էր սարքել, բայց փողքերը կտրել էր անհավասար՝ ձախն աջից մի քանի մատ կարճ: Տատիկն ասում էր, որ նա դիտմամբ է այդպես արել, հայրիկը չէր ընդունում փողքերի ակնառու անհավասարությունը, իսկ մայրիկը պնդում էր, որ կտրելիս նա խմած է եղել: Սակայն Ռոբկայի համար այս ամենը կարևոր չէր, որովհետև իր հին ու մաշված ջինսը այսպես թե այնպես սիրում էր: Իսկ ջինսի գրպանում նա խնամքով բռնել էր մի ծրար, որի պարունակությունը դեռ երեկ կարող էր երջանկացնել իրեն: Բայց այսօր փոքրիկը մի շատ կարևոր որոշում էր կայացրել:

Քսան օր առաջ էլ, երբ Ռոբկան առաջին անգամ իջնում էր լողափ տանող այս աստիճաններով, նրա հագին նույն շալվարն էր ու կոշիկները, բայց ուրիշ էր տրամադրությունը: Հիմա, երբ վերջացել է ամառը, վերջացել է արձակուրդը, և հաջորդ առավոտյան իրենք պետք է մեկնեն տուն, և աստիճանաբար տուն են վերադառնում մյուս հանգստացողները ևս, պարզ չէ, թե ով է ավելի տխուր՝ Ռո՞բկան, թե՞ լողափը: Լողափն հիմա հիշեցնում է իրենց հյուրասենյակը՝ իր ծննդյան օրվա տոնակատարությունից հետո՝ դատարկված ու թափթփված, հայրիկը խռմփացնում է բազմոցին, իսկ մայրիկը ավլում է ու խնդրում ոտքերի տակ չընկնել:

Առավոտից երկնքում ամպեր էին կուտակվել՝ կարծես ազդարարելու սեզոնի փակումը, և Ռոբկան չէր հասցրել հրաժեշտ տալ արեգակին:

ձրամը։ Սոֆիան ամբողջ գիշերվա ընթացքում ոչ մի բառ չասաց։ Նա միայն գլուխը թեքեց, երբ Սոֆիան նրան հարցրեց, թե ինչ է ուզում ուտել։ Գիշերվա ժամը տասներկուսին Սոֆիան հանկարծ զգաց, որ Վիտիի ձեռքերը դանդաղորեն հեռանում են նրանից։ Նա բացեց աչքերը և տեսավ, որ Վիտիի դեմքը դարձել է գունատ, ինչպես մոմի լույսը։ Նա ոչինչ չասաց, միայն գլխով արեց, որ հասկացավ։

Սոֆիան ոտքի թռավ և սկսեց հագնվել։ Նրա ձեռքերը դողում էին, բայց նա չդադարեցրեց։ Նա գիտեր, որ եթե հիմա կանգնի, ապա այլևս չի կարողանա գնալ։ Վիտիի ձայնը հետևից հնչեց՝ ցածր, գրեթե անլսելի։ Նա չպատասխանեց։ Նա դուրս եկավ դռնից, և նրան թվաց, թե լսեց, թե ինչպես է Վիտիի սիրտը սկսում դանդաղորեն բաբախել։

Սոֆիան գնաց Հարավային Ամերիկա։ Նա ապրեցավ Բուենոս Այրեսում, աշխատեց գրադարանում և սովորեցրեց գրականություն։ Նա ամուսնացավ, ունեցավ երեխաներ, և նրանց հարցերին նա երբեք չի ասել, թե ինչպես է ապրել Վիտիի հետ։ Միայն մեկ անգամ, երբ նրա աղջիկը հարցրեց՝ «մամա, ինչու դու երբեք չես խոսում հայրիկի մասին», նա ասաց՝ «նա գեղեցիկ մարդ էր, բայց նրա սիրտը ավելի գեղեցիկ էր, քան պետք է»։

Սոֆիան մեռավ 2017թվականին։ Նրա թոռնուհին գտավ նրա գրասեղանի տակ մի տետր, որտեղ գրված էր՝ «Վիտի, եթե դու կարդաս սա, ներիր ինձ։ Ես չգիտեի, որ դու չգիտես, թե ինչ է նշանակում սիրել»։ Տետրի վերջին էջերը դատարկ էին։

Սիրտը դանդաղ սկսեց հանգստանալ։

– Դու գիտես, թե ինչպես պետք է գրես։

– Ես կարդացի քո գրքերը։ Դրանք ոչ մի արժեք չունեն։

– Դու գրում ես ինչպես մի մեռած մարդ։ Դու գրում ես, որպեսզի ինքդ քեզ ապացուցես, որ դեռ ապրում ես։

Սոֆիան նայեց նրան։ Նա հասկացավ, որ Վիտիի խոսքերը ճիշտ են։ Նա գրում էր, որպեսզի ինքը չմեռնի։ Նա գրում էր, որպեսզի մոռանա այն գիշերը, երբ Վիտիի ձեռքերը դանդաղորեն հեռացան նրանից։

Նա գրեց մի նոր գրքույկ՝ «Լռության գինը» վերնագրով։ Գրքի առաջին էջերում գրված էր՝ «Ամենավատը այն չէ, երբ մարդը մեռնում է, այլ այն, երբ մարդը ապրում է, բայց չի զգում, թե ինչպես է սիրտը դանդաղորեն դադարում բաբախել»։

Գրքույկը հրատարակվեց 2019թվականին։ Դրանից հետո Սոֆիան ոչ մի գիրք չգրեց։ Նա ասաց՝ «ես ավարտեցի իմ գործը»։ Նա ապրեց ևս հինգ տարի։ Նրա մահվան օրը նա գրեց մի նամակ՝ հասցեագրված Վիտիին։ Նամակը գտնվեց նրա գրասեղանի տակ։ Նամակում գրված էր՝ «Ներիր ինձ, որ չասացի, թե ինչպես է սիրտը դադարում բաբախել։ Դա ցավոտ է, բայց դա ամենագեղեցիկ բանն է, որ ես զգացի։ Դու դարձար ամենագեղեցիկ սիրտը, որ ես ունեցել եմ։ Ներիր, որ ուշացրի։ Ես պատրաստ եմ»։

Նամակը չուղարկվեց։ Սոֆիան մահացավ հանգիստ, ինչպես մի մարդ, որը գիտի, որ իր գործը ավարտված է։

Մայրամուտ էր, երբ Սարգիսը հասավ գյուղ։ Գյուղի մի քանի տղաներ գնդակ էին խաղում։ Նրանք տեսան Սարգիսին, բայց ոչ ոք նրան ոչ մի հարց չտվեց։ Գյուղի ամենաերիտասարդ տղան՝ Հայրապետը, ասաց Սարգիսին, որ գնա գյուղի ավագանի տունը։ Սարգիսը գնաց դեպի ավագանի տունը։ Ավագանի տունը մի հին, մեծ տուն էր։ Սարգիսը մտավ տուն։ Տանը մի ծերունի նստած էր։ Ծերունին ասաց Սարգիսին, որ նստի։ Սարգիսը նստեց։ Ծերունին հարցրեց Սարգիսին, թե ինչ գործով է եկել։ Սարգիսը ասաց, որ գործ չունի, ուզում է գնալ Սարգիս։ Ծերունին ասաց, որ գնա։ Սարգիսը գնաց դեպի գյուղի մյուս ծայրը։ Գնաց մի հին, մեծ

– Զարմանալի է,– ասաց աղջիկը:

– Զարմանալի է,– համաձայնեց Ստեֆանը:

Աղջիկն ուզում էր ասել, որ սովորաբար տղամարդիկ իրեն, ի՞նչ նավակ, իսկական զբոսանավեր են պատրաստ տրամադրել, իսկ սա, հասկանում եք, խոստացել է ինչ-որ մանչուկի, բայց ընդամենը ասաց՝ զարմանալի է:

Ստեֆանն ուզում էր ասել, թե այս գեղեցկուհու ինչի՞ն է պետք իր խղճուկ նավակը, այն էլ մի քանի ժամով: Նաև ուզում էր ասել, որ ուրիշ դեպքում ինքն անտարակույս կպարզեր դա հենց աղջկանից, թեպետ ոչ մի դեպքում չէր զիջի երկնագույն կետիկներով նավակը, որովհետև այն արդեն խոստացել էր Ռոբկային: Բայց նա էլ պարզապես ասաց՝ զարմանալի է:

Այդպես նրանք ծանոթացան:

Լողափի մի ծայրից մյուսն անցնելով ու ապա վերադառնալով՝ Մաշան համոզվել էր, որ առանձնացած արևահարվելու համար այստեղ համապատասխան տեղ չկա: Մաշան երեք ընտրություն ուներ. կա՛մ ընդհանրապես չարևահարվել, կամ փոխել հանգստյան վայրը կա՛մ փոխել մասնագիտությունը: Առաջինը կնշանակեր վերադառնալ տուն, որովհետև անհնար է, երբ ինքդ ծովափին ես, իսկ մարմինդ՝ ոչ, երկրորդը կնշանակեր հրաժարվել այս հրաշալի գյուղից ու խաղաղ հանգստից, իսկ երրորդն անել նա դեռ կհասցներ:

Քիչ էր մնում Մաշան հիասթափվեր: Նա նստեց լողափին շարված նավակներից մեկին, ու հանկարծ նրա գլխում մի միտք ծագեց: Դե՛, իհարկե, նա կվերցնի այս երկնագույն կետիկներով նավակը, կգնա հնարավորին չափ խորը և այնտեղ էլ կարևահարվի առանց լողազգեստի: Ու նա այդպես էլ կանի:

Երբ հաջորդ առավոտյան եկավ լողափ, նախորդ օրվա այդ ինքնամփոփ ու մռայլ երիտասարդին գտավ երկնագույն կետիկներով նավակի մեջ քնած:

– Ալո, ես հյուրանոցի հերթապահն եմ,– ասաց Մաշան,– դուք

պատվիրել էիք արթնացնել ձեզ ժամը իննին:

Ստեֆանը տրորեց աչքերը, վրայից դեն գցեց հին ձկնորսական ջեմպրն ու նստեց:

– Շնորհակալություն,– ասաց նա,– բայց ես նաև սուրճ էի պատվիրել:

Մաշան զարմացավ, որովհետև կոպիտ պատասխանի էր սպասում: Հետո նա այնուամենայնիվ, մի փորձ էլ արեց՝ տիրանալու երկնագույն կետիկներով նավակին, սակայն Ստեֆանը անդրդվելի էր, և աղջիկը ստիպված էր բավարարվել դեղին ու սպիտակ զոլավոր նավակով: Դա, սակայն, այնքան էլ վատ չէր, քանի որ նույնն էին իր լողազգեստի գույները:

Ստեֆանը հրեց Մաշայով նավակը ջուրը՝ պատվիրելով հեռուն չգնալ: Հետո վերադարձավ ու մատուցողուհի Իվետային գոռաց, որ իրեն սուրճ բերի:

Քիչ անց լողափ եկավ նաև Ռոբկան հոր հետ: Ստեֆանը ձեռքով արեց փոքրիկին, և վերջինս վազեց նրա մոտ:

Պարզվեց, որ մանչուկը հաջողեցրել է հայրիկից թույլտվություն ստանալ՝ նավակ նստելու: Հայրիկը, սակայն, նախ մի լավ քննեց Ստեֆանին և համոզվելով, որ նրան կարելի է վստահել, դրամապանակից փող հանեց:

– Ամեն ինչ կարգին է,– ասաց Ստեֆանը և հրաժարվեց վերցնել փողը:

Հայրիկը վերադարձավ հյուրանոց ու բարի մոտ հիսուն գրամ վիսկի պատվիրեց: Նախորդ օրը խմել էր դրա տասնապատիկը ու հիմա գլուխը ցավում էր: Դե, ինչպե՞ս կարելի էր չխմել առաջին օրը ծովափում, երբ մանավանդ այստեղ գալով արդեն նա մեծ զոհողության էր գնացել: Ուրիշ տարիներին նրանք հանգստանում էին ավելի «աշխարհիկ» տեղերում, բայց հիմա արդեն Ռոբկան մեծացել էր և պետք էր նրան հնարավորին չափ հեռու պահել բոլոր այդ կազինոներից ու մնացած «աշխարհիկ» վայրերից, որպեսզի չլինի հան-

կարծ երեխան գնար իր հետքերով: Իհարկե, միայն խաղամոլության առումով, որովհետև, մյուս դեպքում, վատ չէր լինի, որ որդին էլ իր պես դառնար լավ գրող: Այստեղ հայրիկը ստիպված էր պատվիրել երկրորդ հիսուն գրամը:

Երբ երկնագույն կետիկներով նավակը մի քիչ հեռացավ ափից, Ստեֆանը սկսեց Ռոբկային թիավարել սովորեցնել: Փոքրիկը նրան հիշեցնում էր եղբորը: Ստեֆանը հիշեց, որ եղբայրը երազում է նավաստի դառնալ:

– Դու երազանք ունե՞ս,– հարցրեց նա Ռոբկային:

– Ես երազում եմ մոտոցիկլ ունենալ:

– Գուցե, այնուամենայնիվ, հեծանի՞վ,– ծիծաղեց Ստեֆանը:

– Դե ոչ, մոտոցիկլ,– նեղացավ մանչուկը,– դա շատ փոքր մոտոցիկլ է, փոքր տղաների համար: Հայրիկս ինձ խոստացել է, միայն թե շատ թանկ արժե:

– Դե, լավ, ուրեմն մոտոցիկլ,– տեղի տվեց Ստեֆանը:

– Այն ի՞նչ նավակ է հեռվում,– հարցրեց Ռոբկան, ցույց տալով զոլավոր, սպիտակ ու դեղին նավակը:

– Արի մոտենանք, ես զգուշացրի այդ գեղեցկուհուն, որ այդքան հեռու չգնա:

Եվ նրանք մոտեցան Մաշայի նավակին:

Մերկ գեղեցկուհուն տեսնելով՝ Ռոբկան անմիջապես փակեց աչքերը, Ստեֆանը բացեց բերանը:

Անկոչ հյուրերին նկատելով՝ Մաշան տեղից վեր կացավ, անշտապ ծածկվեց սրբիչով ու մի ծխախոտ վառեց:

– Մյուս անգամ ավելի լավ է գաս առանց երեխայի: Բայց նկատի ունեցիր, որ ինձ նայելու համար սովորաբար վճարում են:– Նա ժպտաց և կախեց գլուխը:– Կարող ես բացել աչքերդ, մանչո՛ւկ:

Ստեֆանը ներողություն խնդրեց և բացատրեց իր մոտենալու պատճառը:

Հաջորդ երեք օրերին, երբ առավոտյան փոքրիկի հետ նավակ էին

քշում, ափից հեռանում էին այնքան, որ թիակները չմխրճվեն ավազի մեջ: Չորրորդ օրը Ռոբկայի հայրիկը հրավիրեց Ստեֆանին ընթրիքի: Վերջինս համաձայնեց ուրախությամբ, քանի որ այդ օրերին ստիպված էր խնայել նաև ուտելիքի վրա և վաղուց կարգին չէր սնվել: Բայց ստացվեց այնպես, որ ընթրիքին էլ Ստեֆանը գրեթե չկերավ: Կողքի սեղանին նստած էր Մաշան: Ստեֆանը առաջին անգամ էր տեսնում Մաշային շորերով:

Նրանք արդեն հասցրել էին մտերմանալ: Առավոտները՝ Ստեֆանին արթնացնելիս, աղջիկը նրան սուրճ էր բերում, նրանք մի քիչ զրուցում էին ու որոշակիորեն մտերմանում: Ու ամեն անգամ Ստեֆանը հազիվ էր իրեն զսպում ավելի հեռուն չգնալ: Մի անգամ նույնիսկ աղջիկն ինքը ակնարկեց, որ երեկոները ձանձրանում է, բայց Ստեֆանը չհասկանալու տվեց՝ հասկանալով ավելի կարևոր բան, որ իրեն չի կարելի հիմա փող ծախսել:

Երբ ընթրիքից հետո Ստեֆանը հրաժեշտ տվեց Ռոբկայի ծնողներին, չգնաց ծովափ, ինչպես որոշել էր, այլ վերադարձավ Մաշայի մոտ: Աղջիկը դեղձ էր ուտում:

– Ես հենց նոր մտածում էի, թե ինչպիսին է ծովը երեկոյան,– ասաց նա:

– Շատ էժան,– արտաբերեց Ստեֆանը:

Մաշան զարմացած նայեց նրան:

– Ուզում էի ասել շատ դաժան,– կմկմաց Ստեֆանը,– շատ դաժան ու միաժամանակ հիասքանչ:

Հետո նրանք գնացին ափ՝ զբոսնելու:

Եվ հաջորդ երկու շաբաթն անցավ այդպես: Ցերեկները Ստեֆանն անցկացնում էր Ռոբկայի հետ, երեկոները՝ Մաշայի:

Փոքրիկը օգնում էր Ստեֆանին վերանորոգել նավակների կոտրված տախտակներն ու թիերը: Տղան Ռոբկային լողալ էր սովորեցնում, ավազից արձանիկներ քանդակել ու լավ թիավարել:

Մաշան օգնում էր Ստեֆանին գտնել իր սրտի տեղը:

Ու մի օր էլ առավոտյան լողափ գալով՝ նախ Մաշան, ապա Ռոբկան սովորականի պես չգտան Ստեֆանին այնտեղ: Երկուսն էլ այդ առավոտյան չափազանց բարձր տրամադրություն ունեին, չնայած երկուսի համար էլ դա վերջին օրն էր ծովափում: Մաշային հայտնել էին մրցույթի արդյունքները, նա պայմանագրային աշխատանքի էր ընդունվել հայտնի պարային անսամբլում: Ռոբկային առավոտյան հայրիկը մի ծրար էր տվել և ասել, որ երբ տուն վերադառնան, նա կարող է գնել իր մոտոցիկլը:

Հայրիկը համարյա քսան օր դիմանալուց հետո այլևս անկարող էր եղել դիմանալ, և գիշերը բարում երեք հարյուր գրամ "Ballantines" խմելուց հետո նստել էր մեքենան ու քշել դեպի մոտակա խաղատունը: Ճանապարհին նա ինքն իրեն խոստացել էր, որ հաղթելու դեպքում մեկական լավ նվեր կառնի կնոջը և որդուն:

Բայց ո՛չ Ռոբկան, ո՛չ Մաշան չկարողացան հանդիպել Ստեֆանին, ում հետ այդ պահին ամենից շատ էին ուզում կիսել իրենց ուրախությունը:

Ստեֆանի իմացած լուրը ուրախալի չէր: Վաղ առավոտյան նա խոսել էր մոր հետ և իմացել, որ եղբոր վիրահատության համար կպահանջվի այնքան գումար, որ ինքը չի կարողանա հավաքել: Սակայն նա հանգստացրել էր մորը և խոստացել, որ գումարը կճարի: Իսկ գումարը ճարելու մեկ տարբերակ կար ընդամենը: Ստեֆանը անմիջապես գնացել էր գյուղ և թակել մեկի դուռը, ով մի անգամ իրեն առաջարկել էր վաճառել նավակները: Բայց պարզվել էր, որ այդ մարդը փոշմանել է, և Ստեֆանը ստիպված էր եղել գնալ մոտակա ափամերձ քաղաքները՝ իր նավակների համար գնորդ ճարելու:

Մաշան և Ռոբկան, Ստեֆանի անսպասելի բացակայությունից անհանգստացած, սկսեցին փնտրել նրան նախ լողափում, ապա գյուղում ու հուսահատված վերադարձան հյուրանոց: Երկուսն էլ գիտեին Ստեֆանի եղբոր հիվանդության մասին և վախենում էին, թե հանկարծ մի բան պատահած չլինի:

էր: Մի դաստակոտ այդտեղ էլ մեզ հոգ «ուսանող» պատանի։ Ամբողջ գիշերը նա գրեթե չի դադարեցնում գրելը։ Ինչպես ասում էին հնում, գրիչը դարձել էր նրա ձեռքի մի մասը։ Ամեն անգամ, երբ նրան հանդիպում էի, ինձ թվում էր, թե նրա գրիչը ինչ-որ բան է գրում

Գեորգի Զելևին: Գեորգի Զելևը Պանչոյենց տուն մտավ ճիշտ այն պահին, երբ տանտերը հասել էր իր պատմության ճիշտ այն հատվածին, որի վրա ես կանգ առա: Այսինքն, երբ հանգիստ խղճով դուրս էր գալիս քաղաքականությունից: Ընկերոջ հայտնվելը գուցե պատճառ չհանդիսանար, որպեսզի ընդմիջվեր Պանչոյի պատմությունը, եթե առաջինի թևի տակից չերևար «Սլիվովա Ռակիայի» շշի գլուխը: Բայց շշի գլուխը երևաց և ավելին՝ Գեորգի Զելևը շիշը դրեց սեղանին: Ես շատ եմ ցավում, բայց նա, ով երբևէ չի խմել «Սլիվովա Ռակիա», հազիվ թե կարողանա ըմբռնել պահի առանձնահատկությունն ու նշանակալիությունը: Ու քանի որ ընթերցողներից ոչ բոլորն են ծանոթ «Սլիվովա Ռակիային», ես կանգ չեմ առնի հիրավի նշանակալի և առանձնահատուկ այդ պահի վրա: Ընդամենը պետք է շեշտել մի բան. բուլղարացի Գեորգի Զելևի փոխարեն կարող էր հայտնվել մոլդավացի Սերժիո Մուշտետան՝ թևի տակ մի շիշ գինի, կամ ուկրաինացի Վիկտոր Միրոշնիչենկոն՝ ռակիայի փոխարեն մի շիշ պերցովկայով, որը մենք միևնույն է կխմեինք, որովհետև հավաքվել էինք խմելու, ճիշտ այնպես, ինչպես Գուստավի պատմությունը, որը սահմաններ չի ճանաչում, կարող էր պատահել ոչ թե բուլղարացու, այլ ցանկացած ազգության պատկանող մեկի հետ, որն ազնիվ մարդ է, որի երկրում տպագրվում է «Փլեյ բոյ» հանդեսը և որը յուրովի է հասկանում ահաբեկչությունը:

«Փլեյ բոյ» հանդեսի խմբագրի պաշտոնում աշխատելը շատ հետաքրքիր ու եկամտաբեր է: Նույնիսկ գայթակղիչ: Իհարկե, գայթակղիչ, մանավանդ Պանչոյի պես մեկի համար, որը, բացի ներկայանալի արտաքինից, ունի նաև աներևակայելի երևակայություն: Բայց Պանչոն նաև սկզբունք ունի, որն էլ հենց այս պատմության առանցքն է:

Այն բանից հետո, երբ Պանչոյի հայրենիքում փլուզվեց սոցիալիստական հասարակարգը, կազմավորվեցին նոր իշխանություններ, և Բուլղարիան աստիճանաբար սկսեց վերածվել կարգին պետության,

քաղաքականությունից իրենց կամքով կամ իրենց կամքից անկախ դուրս մնացած արվեստագետները իրենց կամքով կամ իրենց կամքից անկախ լծվեցին իրենց ստեղծագործ աշխատանքի: Նրանցից մեկն էլ Պանչոն էր, որի աշխատանքը պարզապես ստեղծագործ լինելուց բացի նաև, ինչպես որոշեցինք, գայթակղիչ էր: Ամեն ինչ թերևս այսպես էլ շարունակվեր Բուլղարիայի ու իմ բարեկամի կյանքում, եթե չլիներ անսպասելի իրադարձությունը: Պետական մի բարձր պաշտոնում նշանակվեց մեկը, որը նախկին վարչակարգի ժամանակ զբաղեցնում էր պետական մի բարձր պաշտոն: Ես չեմ հիշում, թե ինչ պաշտոն էր, ու դա չէ էականը: Էականը «Փլեյ բոյի» խմբագրի ու նախկին հեղափոխականի վերաբերմունքն էր այս իրադարձությանը, որը վստահ էր, որ այդ տիպի մարդկանց ընդամենը պետք է պատժել, որովհետև նրանց իշխանության տարիներին պատժվել են մարդիկ, որոնց գաղափարն էր ներկայիս պետությունը: Պանչոն ապշած էր, ավելի ճիշտ՝ կատաղած, կամ և՛ ապշած, և՛ կատաղած, և հետևեց անխուսափելին: Նախկին կոմունիստի պետական բարձր պաշտոնում հայտնվելուց հետո «Փլեյ բոյի» առաջին իսկ համարը լույս տեսավ շապիկին մի լուսանկարով, ավելի ճիշտ՝ կոլաժով, որը չէր տեղավորվում նույնիսկ ազատ մամուլի սահմանների մեջ, ինչպես խոստովանում է ինքը՝ Պանչոն: Եվ երբ նախկին կոմունիստի լուսանկարը, ավելի ճիշտ՝ կոլաժը, ուր սեփականը միայն նախկին կոմունիստի գլուխն էր, հայտնվեց «Փլեյ բոյի» շապիկին, հանդեսի տերերն ազատեցին Պանչոյին խմբագրի պաշտոնից, իսկ նախկին կոմունիստը նրան դատի տվեց: Կոլաժում նախկին կոմունիստի գլխից բացի կային նաև մարմնի այլ մասեր, որոնք, ցավոք, նախկին կոմունիստինը չէին, այլապես Պանչո Թոդորովը, շատ հավանական է, որ դատը շահեր: Բայց ավելի սարսափելին նախադասությունն էր, որը գրված էր կոլաժի տակ: «Պատշաճ վարձատրության և վերաբերմունքի դեպքում ես կարող եմ մերկանալ նաև «Փլեյ բոյի» համար, ինչպես մերկացա նախ՝ ռուսների, ապա՝

Արևմուտքի համար»: Սրանք, անշուշտ, նախկին կոմունիստի խոսքերը չէին, այլապես Պանչո Թոդորովը վստահաբար դատը կշահեր, բայց սա այն էր, ինչ տպագրված էր հանդեսի շապիկին՝ լուսանկարի տակ:

Եթե ես դեռ այն ժամանակ Պանչոյենց տանը իմանայի, որ երբևէ ձեզ եմ փոխանցելու այս պատմությունը, անպայման գրառումներ կանեի նոթատետրումս, որպեսզի ամեն ինչ ստույգ լիներ: Բայց չգիտեի: Ուստի այս պատմության մեջ շատ հնարավոր է, որ ամեն ինչ ճիշտ չլինի, բայց մի՞թե այսպես չէր կարող լինել կամ այսպես չի լինում:

Եթե ձեզանից որևէ մեկը երբևէ հանդիպի Պանչո Թոդորովին, կարող է հարցնել, և Պանչո Թոդորովը կպատասխանի, անշուշտ, եթե ձեզանից այդ որևէ մեկի թևի տակ տեսնի շշի գլուխը, կպատասխանի, և դուք կհամոզվեք, որ այդպես լինում է:

Լավ գրողներն առհասարակ տարօրինակ մարդիկ են: Խնդիրը շիշը չէ: Խնդիրը սկզբունքն է ու գաղափարը, հանուն որոնց լավ գրողները կարող են հրաժարվել անգամ շշից: Լավ գրողները սկզբունքի ու գաղափարի մարտիկներ են և հրաշալի հասկանում են, որ սարսափելին այն չէ, երբ իրենց չեն հանդուրժում, այսինքն՝ իրենց սկզբունքներն ու գաղափարները, սարսափելին այն է, երբ իրենք դրա հետ հաշտվում են:

Բայց ընթերցողին, կարծում եմ, ավելի շատ հետաքրքրում է, թե ինչով ավարտվեց Պանչո Թոդորովի դատը: Իմ բարեկամը այն շահեց բարոյապես, թեպետ ստիպված էր փոխհատուցել նախկին կոմունիստին հասցված բարոյական վնասը: Այդպես էլ է լինում: Հավանաբար նրա համար, որ բարոյականությունը վնասներ է պահանջում: Ինչպես ազնվությունը, ինչպես շիտակությունն ու սկզբունքը: Բայց այս դեպքում սա նախկին կոմունիստների մեղքը չէ: Ու ոչ էլ, առավել ևս՝ ներկա: Հասարակությունը չի հանդուրժում վերը թվարկված արժանիքները, երբ դրանք հասնում են ծայրահեղության:

Արդյո՞ք Պանչոյի արածը ծայրահեղություն չէր: Նա ինքը այն համարում է ավելին՝ ահաբեկչություն:

Ամեն դեպքում հուսով եմ, որ իմ բարեկամի պատմությունը ձեզ փոխանցելն անհեթեթություն չեք համարի: Կամ փոխանցելու այս ձևը:

Իսկ իմ հայրենիքում, հուսամ, որ այլևս արյուն չի թափվի, և նույնիսկ աղվեսներն ու շնագայլերը, բայց և այնպես իմ հայրենակիցները, կահաբեկվեն միայն այլաբանորեն:

Ես մտադիր չէի այսչափ շեղվել թեմայից, բայց միշտ չէ, որ լուրջ հարցերը լուրջ պատասխան են ունենում:

Ինչևէ, 1999-ի հոկտեմբերի քսանյոթն էր, երբ Պանչո Թոդորովի տանը հյուրընկալվելուց երեք և պարոն վան Վիլետին Հայաստանում հյուրընկալելուց տասնհինգ օր առաջ իմ ինքնաթիռը վայրէջք կատարեց Սոֆիայի օդանավակայանում:

– Դուք տեղյա՞կ եք, թե ինչ է պատահել ձեր երկրում,– հարցրեց բուլղար սահմանապահը և, հասկանալով, որ տեղյակ չեմ, հայտնեց:

Կարճահասակ տղամարդ էր՝ ճաղատ գլխով ու ոսկեզօծ ակնոցներով: Չգիտեմ՝ ինչո՞ւ հենց նրան մոտեցա, երբ մյուս անցակետերն էլ ազատ էին: Ուրիշ մեկը գուցե չհայտներ լուրը կամ այլ կերպ հայտներ: Մինչդեռ ճաղատն անհեթեթ մի ժպիտով հայտարարեց.

– Ձեր երկրի վարչապետը և պառլամենտի նախագահը սպանված են:

Չգիտեմ՝ ուրիշ մեկն ինչ կզգար այդ պահին: Ամեն բան հնարավոր է: Տխրություն, ցավ, վախ, սարսափ, անհանգստություն, անգամ ուրախություն: Ես ծարավ զգացի: Մի քիչ անսովոր ծարավ, որը շտապեցի հագեցնել կոնյակով՝ գրպանիցս հանելով տափաշիշը:

– Կխմե՞ք,– հարցրի սահմանապահին:

Անհեթեթ ժպիտն անմիջապես չքվեց նրա դեմքից, և սահմանապահը մի պահ զարմացած վրաս նայելուց հետո սկսեց ուշիուշով թերթել անձնագիրս՝ հավանաբար այնտեղ հոգեկան խանգարման մասին նշում փնտրելով: Բայց այդպիսի նշում իմ անձնագրում առայժմ չկա, այնպես որ սահմանապահը ստիպված էր վերադարձնել փաստաթուղթս:

Ո՞վ կարող է հոգեկան խանգարում ստանալ այնպիսի երկրում, ինչպիսին այսօր Հայաստանն է: Այս հարցի շուրջ ես մտածել էի առաջ էլ:

Դրանից մեկ ամիս առաջ ես հեռուստացույցով հետևում էի Հանրապետության հրապարակում անցկացվող Անկախության օրվա շքերթին: Հարթակից, ուր նախկինում Լենինի արձանն էր, ձեռքով էին անում պետական պաշտոնյաներ, որոնք ինձ համար խորհրդանշում էին իմ երկրի հիվանդությունը: Հրապարակից ողջույններին պատասխանում էր իմ ժողովուրդը, որն ինձ համար խորհրդանշում էր իմ երկրի կամ իր իսկ անդիմադրողականությունը: Այնուամենայնիվ, ես ներողություն եմ խնդրում ժողովրդից, որին ռեժիսորը պատկառելի տեղ էր հատկացրել ռեպորտաժում՝ իշխանության ու բանակի կողքին: Մերթընդմերթ էկրանին հայտնվում էին մարդկանց ժպտացող դեմքեր: Մարդիկ իսկապես գոհ էին. գոհ էին շքերթից, գոհ էին բանակից, գոհ էին իրենցից և իրենց կատարած ընտրությունից, այսինքն՝ հարթակից:

Մարդկանց շարքերում էին Սերոժը, Վալոդը և Ռաֆիկը: Նրանք միմյանց չէին ճանաչում, կանգնած էին տարբեր տեղերում և շքերթի էին եկել առանձին-առանձին:

Սերոժը եկել էր քայլելով՝ Կասկադի մոտ գտնվող իր բնակա-

րանից, ուր ապրում էր տիկնոջ, որդու, հարսի և երկու թոռների հետ: Ամբողջ ճանապարհին մտորել էր ապրած կյանքի մասին և, հասնելով Հանրապետության հրապարակ, եկել էր այն եզրակացության, որ ամեն ինչ այնքան էլ վատ չէ: Բայց ընդամենը այդքանը, իսկ լավ լինելը ինքը կապում է ահա այս հարթակի հետ: Ուղիղ ութ տարի ինքն անգործ է մնացել, ստիպված է եղել ապրել խնայողությունների հաշվին, իրեն զրկել է բաներից, որոնք առաջ մանրուքներ էին ընդամենը, և ահա, կարծես թե, հիմքեր կան հուսալու, որ կրկին կկարգավորվի իր կյանքը, որովհետև իշխանության է եկել մեկը, որին ինքը չնայած չի ճանաչում, բայց ճանաչում է նրա շրջապատի որոշ մարդկանց, որոնց համար նախկինում երկար տարիներ աշխատել է: Այդ մարդիկ չեն կարող մոռացած լինել իր ծառայությունները, եթե աշխարհում կա արդարություն: Ինքն ամեն ինչ արել է նրանց համար, այն ժամանակ, երբ կարող էր: Իր պահեստի դռները միշտ բաց են եղել բոլոր քիչ թե շատ կշռով պաշտոնյաների առջև: Ոչ մի պաշտոնյայի նա երբևէ չի մերժել: Բոլորին նա տվել է: Եվ ապրել աղայի պես: Ո՞վ չէր ճանաչում պահեստապետ Սերոժին, որն ուներ չորս մեքենա: Հետո մի օր ամեն ինչ այնքան հանկարծակի փուլ եկավ, որ ինքն անգամ չհասցրեց կրտսեր որդուն «ընդունել» իրավաբանական: Կրտսեր որդուն ստիպված էր «ընդունել» պոլիտեխնիկ, և այդտեղից էլ սկսվեցին նրա անհաջող տարիները:

Ինքը հիմա էլ չի հասկանում, թե ինչ տեղի ունեցավ. ժողովուրդը տաքացել էր, միտինգներ էր անում, ինչ-որ բաներ պահանջում, բայց ո՞վ էր այդ ամենը լուրջ ընդունում: Ինքը վստահ էր, որ շուտով ժողովրդին տեղը կդնեն, և ամեն ինչ կվերջանա: Բայց արի ու տես, որ սխալվեց: Կորավ իր պահեստը, կորան իր կապերը և իր չորս մեքենաները: Ինչեր ասես չձեռնարկեց Սերոժը, բայց ձախողվեց, ձախողվեց, որովհետև որևէ մեկը չուներ

վերևներում: Փորձեց արտադրություն դնել, խանգարեցին, առևտուր սկսեց, վնասվեց, ավագ որդուն դասավորեց քննիչ, որդին մի գործի վրա բռնվեց, և ինքը ստիպված եղավ վաճառել բնակարանը, որ որդին չնստի: Մի խոսքով՝ սարսափելի տարիներ էին, և ինքն արդեն հույսը կորցրել էր, երբ տեղի ունեցավ հրաշքը. ստվերից դուրս եկավ ու իշխանության եկավ մի մարդ, որի անվան հետ էր նա կապում իր ունեցած բոլոր հաջողությունները: Ստվերից դուրս եկան նաև իր նախկին շեֆերը, և հիմա աստիճանաբար իր կապերը վերևների հետ վերականգնվում են: Մի խոսքով՝ ինքը հավատում է, որ այլևս լավ է լինելու, և ահա եկել է այս շքերթին, ինչպես գալիս էր տարիներ առաջ՝ երանելի ութսունականներին:

Վալոդը եկել էր իր «Վոլգայով» Քանաքեռի իր առանձնատնից, ուր ապրում էր կնոջ հետ: Դուստրերն Ամերիկայում էին արդեն հինգ տարի, իսկ իրեն ու կնոջը ոչ մի կերպ չէր հաջողվում մեկնել: Բայց հիմա արդեն դրա կարիքը չկար: Հիմա նույնիսկ կարիք չկար վերանորոգել այս «Վոլգայի» ռադիատորը, որ շարքից դուրս էր եկել երկու օր առաջ, որովհետև ինքը վստահ էր, որ շուտով նոր ծառայողական մեքենա է ունենալու: Այս «Վոլգան» էլ եղել էր իր ծառայողական մեքենան, որ հասցրել էր դուրս գրել ու սեփականացնել, մինչև իրեն կազատեին աշխատանքից: Դա ութսունութ թվականին էր, երբ ինքն աշխատում էր որպես շրջկոմի երկրորդ քարտուղար: Այդ ժամանակ արդեն քսանհինգ տարի վարում էր տարբեր պաշտոններ, բայց դեռ ոչ մի մեքենա չէր սեփականացրել: Տասնհինգ տարի եղել էր կոմսոմոլի ապարատում, ապա աշխատել ՀԿԿ Կենտկոմի հրահանգիչ, իսկ ութսունվեցին նշանակվել շրջկոմի երկրորդ քարտուղար: Եվ ահա, երբ շատ մոտ էր այն պահը, երբ ինքը պիտի դառնար շրջկոմի առաջին քարտուղար, իր հովանավորին ազատեցին աշխատանքից, և իր պլանները փուլ եկան ճիշտ այնպես,

ինչպես քիչ ավելի ուշ փուլ պիտի գար իր կուսակցությունը: Բայց նա հասցրեց փրկել այս «Վոլգան», որը տասնմեկ տարի ազնվորեն ծառայեց իրեն: Իսկ հիմա իշխանության է եկել իր հովանավորի հովանավորը: Իր հովանավորին արդեն պաշտոն տվել են, և նա վստահ է, որ շուտով իրեն էլ կտան: Հիմա նա նորից կուսակցական է: Կուսակցության անունը ճիշտ չի հիշում, բայց դա ի՞նչ կարևոր է: Կարևորը մարդն է, որ գլխավորում է կուսակցությունը:

Ճանապարհները փակ էին, և Վալոդը ստիպված էր եղել թողնել մեքենան քիչ հեռու և քայլելով հասնել հրապարակ: Երկար ժամանակ շքերթի չէր եղել, մինչդեռ առաջ կանոնավոր հաճախում էր: Ճիշտ է, առաջ շքերթներն ուրիշ բովանդակություն ունեին, սակայն դա ի՞նչ կապ ունի: Նա առաջ էլ գալիս էր շքերթի իր ղեկավարներին հանդիպելու և նրանց հետ զրուցելու, այսպես ասած, ժողովրդի ծոցում: Հա՛ հիշեց կուսակցության անունը...

Ռաֆիկը շքերթի էր եկել իր «Mercedes G 500»-ով: Աբովյան փողոցը փակած ոստիկանները նրան թույլ էին տվել մեքենայով ընդհուպ մոտենալ հրապարակին: Ասենք, ինչպե՞ս կարող էին թույլ չտալ: Նա ուներ մի փաստաթուղթ, որը նրան տվել էր ներքին գործերի նախարարությունը՝ անձամբ այն մարդու կարգադրությամբ, որը հիմա հարթակից ձեռքով էր անում ժողովրդին: Այդ մարդուն ինքը ճանաչում էր վաղուց: Այդ մարդու իշխանության տարիները նաև իր իշխանության տարիներն էին: Այն տարբերությամբ, սակայն, որ իր իշխանությունը օրենքից դուրս էր: Եվ այդպես մի տասնամյակ: Հետո ինքը լեզու չգտավ նոր իշխանությունների հետ և ստիպված էր մեկնել Մոսկվա, ուր և ապրեց մեկ այլ տասնամյակ: Այստեղ թեև շարունակվեց օրենքից դուրս իշխանությունը, բայց այն, իհարկե, նույնը չէր, ինչ նախկինը: Եվ ահա կարծես թե վերադառնում են հին, բարի ժամանակները: Ինքը մեծ սպասելիքներ ունի այս իշխանություններ-

ից, որովհետև Մոսկվայում եղած ժամանակ բոլորովին էլ կապերը չէր խզել իր բարեկամների հետ:

Հրապարակի մարդկանց շարքերում էին նաև Մերուժը և Հրաչը: Նրանք նույնպես միմյանց չէին ճանաչում և շքերթի էին եկել առանձին ու տարբեր տեղերից: Մերուժը եկել էր Արմավիրի մարզից, բայց ոչ ամենևին շքերթի: Նա նույնիսկ տեղյակ էլ չէր ամսաթվից և անգամ չգիտեր էլ տոնի մասին: Եկել էր բոլորովին ուրիշ գործով՝ հանդիպելու իր Միության կենտրոնական գրասենյակ, որպեսզի հայտնի ավելի քան սոսկալի լուրը: Պետք է ասել, որ Մերուժը վրդովված էր: Նա տարիներ շարունակ նվիրված ծառայել էր իր Միությանը՝ սկսած պատերազմի տարիներից, երբ եղել էր մահապարտների ջոկատի կազմում: Ապա իր հայրենի գյուղում կազմավորել էր Միության տարածքային գրասենյակ և բոլոր ընտրությունների ժամանակ անշեղորեն կատարել կենտրոնից եկող հրահանգները՝ հաճախ անգամ դիմելով ուժային միջոցների սեփական համագյուղացիների նկատմամբ: Եվ բոլոր ընտրությունների ժամանակ կենտրոնից հրահանգված թեկնածուն իրենց գյուղում հաղթել էր: Մերուժի աշխատանքները գնահատվել էին ըստ արժանվույն. նրա եղբայրը դարձել էր գյուղապետ, և նա հնարավորություն էր ստացել շահագործելու գյուղ-մարզկենտրոն երթուղային գիծը: Բայց ահա, վերջին ընտրություններից հետո վերոհիշյալ գիծը փորձում էին իր ձեռքից վերցնել, և փորձողները կենտրոնի հրահանգով անցկացված պատգամավորի մերձավորներն էին: Միության կենտրոնական գրասենյակում, սակայն, ուր Մերուժը եկել էր արտահայտելու իր արդար բողոքը, մարդ չէր եղել. նրան ասել էին, որ բոլորը գնացել են շքերթի, և ահա նա Հանրապետության հրապարակում էր: Եվ զգում էր, թե ինչպես է աստիճանաբար անցնում իր վրդովմունքը: Հարթակին հպարտորեն կանգնած էր իր Միության նախագահը, և նրան նայելով՝ Մերուժը տեսնում էր իր Միության ուժը և գիտակցում, որ ոչ ոք իրենից չի կարող խլել իր երթուղային գիծը:

Հրաչը շքերթի էր եկել եղբոր որդու հետ: Արդեն քանի տարի տղան խնդրում էր իրեն իսկական տանկ ցույց տալ, բայց Հրաչը երբեք ժամանակ չէր ունենում: Հրաչը հասկանում էր՝ տղայի ցանկությունը ինչի հետ է կապված, իրեն մեղավոր էր զգում, բայց, միևնույն է, ժամանակ չուներ: Երբ զոհվեց եղբայրը, տղան չորս տարեկան էր, և նրան ասացին, որ հայրը կռվելիս է եղել տանկերի հետ: Շատ տանկերի: Եվ քանի որ տանկերը շատ էին, իսկ հայրը՝ միայնակ, նա պարտվել է:

Հետո Հրաչը եղբոր զինակից ընկերների օգնությամբ կենտրոնից Նորք տանող ճանապարհին բենզինի կրպակ դրեց, իսկ ավելի ուշ նույն ընկերների օգնությամբ, որոնք արդեն ինքնաձիգները փոխել էին փողկապների հետ, բենզինի կրպակը վերածեց մեծ բենզակայանի և մի ուրիշ տեղ էլ հյուրանոցային համալիր կառուցեց հսկա շատրվանով: Ճիշտ է, երկու դեպքում էլ եղբոր ընկերներն իր հետ փայատեր էին, բայց շատրվանը դրանից, հակառակը, ավելի ուժեղ էր հորդում: Տարիների ընթացքում բենզակայանները, հյուրանոցներն ու շատրվանները ավելացան, և Հրաչն իրեն իրավունք վերապահեց խնդրելու իր հովանավորներին իրեն պատգամավոր դարձնել, և սկսեց ինքն էլ փողկապ կրել: Նա ինքն էլ չհասկացավ, թե ինչպես դարձավ պատգամավոր, ճիշտ է՝ բազմաթիվ խոստումներ տվեց ընտրատարածքի բնակիչներին, որոնք, սակայն, մինչև օրս չի կատարել՝ ի տարբերություն եղբորորդուն տված խոստմանը: Միայն թե տղան հիմա տանկերը չի տեսնում, որովհետև կանգնած է ամբոխի մեջ, և հորեղբայրը ժամանակ չունի նրան գրկելու, որովհետև զրուցում է իր պես մեծ փորով մի մարդու հետ:

31 հոկտեմբերի, 1999

Հետո ես Մարուսյային տուն ճանապարհեցի:

Հաճախ թվում է, թե ժամանակն է արդեն հրաժարվելու նրանից, ով քոնը չէ և չի կարող քոնը դառնալ այն պարզ պատճառով, որ դու արդեն ունես քոնը, և նա, ինչպես ճակատագիրը, լինում է մեկը: Մի օրը կամ մի գիշերը ոչինչ, երբ ընդամենը մի բան ունես տալու ու վերցնելու: Այսինքն՝ ժամանակն էական չէ: Երբ հասցնում ես կամ ընդունակ ես վերջակետ դնել այն ժամանակ, երբ սիրտը դեռ չի հասցրել ջերմանալ այնքան, որ նաև ջերմացնի, դեռ ամեն ինչ կարգին է: Բայց սուտ է, չկա սրտի ջերմակարգավորիչ և չի էլ կարող լինել: Եվ սուտ է, երբ ընդմիշտ հրաժեշտ ես տալիս աղջկան և կարծում ես, թե դա արել ես նրան կամ ինքդ քեզ ցավ չպատճառելու համար: Դա ինքնախաբեություն է, որ պարզապես կարող է թաքցնել չստացված կամ անկատար սերը: Որովհետև չի կարող սերը զոհաբերվել հանուն սիրո:

Եվ ամեն ինչ սկսվում է հենց տուն ճանապարհելուց. համենայն դեպս՝ ինձ մոտ: Այդպես էր տասնհինգ տարեկանում, և այդպես է հիմա: Միակ տարբերությունն այն է, որ տասնհինգ տարի առաջ ինձ թևանցուկ էր արել Ադելաիդան, և մենք Երևանում էինք, հետո ինձ թևանցուկ արեցին Մոսկվայում, Վարշավայում, Դնեպրոպետրովսկում, Նոր Օռլեանում և Սամարայում, իսկ հիմա ես քայլում եմ Մարուսյայի հետ, և մենք Սոֆիայում ենք: Եվ, զարմանալի զուգադիպություն.

– Ո՞րն է քո ամենասիրելի քաղաքը,– հարցրեց Մարուսյան:

Պետք էր մտածել մինչև պատասխանելը: Եվ ես երկար մտածեցի ու վերհիշեցի իմ տեսած քաղաքները:

Ես սիրեցի Մոսկվան, ու ինչ փույթ, որ Կիևյան կայարանի մուտքի սանդուղքներին մեկն այնպես է փսխել, որ նույնիսկ շրջանցելն անհ-

նար է: Որ սանդղահարթակին՝ Լայզա Մինելիի ազդագրի տակ, կուչ եկած ծերունին երբեք հետ չի ստանա իր խնայողությունները... Ու ինչ փույթ, որ դեպի իր սև «Յագուարը» շտապող հաստավիզ մեկը քիչ է մնում տրորելով անցնի ողորմություն խնդրող աղջնակի վրայով: Որ գետնանցումի աստիճաններին նստած ծեր սաքսոֆոնահարը նվագում է Գերշվինի «Ամռանը», իսկ դրա հնչյունների ներքո երկու ոստիկան, օձիքից բռնած, կողերին խփելով, քարշ են տալիս մի երիտասարդ կովկասցու: Ինչ փույթ, որ մետրոյի ապակե դռների մոտ ինչ-որ երջանիկ մեկին սպասող գեղեցկուհու կողքին կանգնած շրջիկ լրագրավաճառը առաջարկում է մի չափազանց քաղաքական օրաթերթ, որի միջուկը գրեթե ամբողջությամբ գովազդում է քաղաքի հասարակաց տները՝ զգուշացնելով, որ պատասխանատվություն չի կրում գրածի համար: Ու ինչ փույթ, որ մի ամբողջ գիշեր ոստիկաններն ինձ պահեցին բաժանմունքում, իսկ դրսում մի ամբողջ գիշեր ինձ էր սպասում Ալյոնա Կուտուզովան:

Հետո ես չսիրեցի Լոս Անջելեսը, որի նկարագիրը կարելի է ընդհանրացնել մի բառով՝ հարմարավետ: Այստեղ ամեն ինչ հեշտացված է և հարմարեցված մարդուն: Ամեն ինչ: Նույնիսկ բնությունը: Անշուշտ, սա էլ նկարագիր է: Բայց ոչ մի սրտի թրթիռ, ոչինչ չի տրամադրում այս քաղաքը կարոտելու: Հոլիվուդում մի վայր կա, որը կոչվում է «Աստղերի արահետ»: Մայթին՝ յուրաքանչյուր քայլափոխին խճանկարված աստղերի մեջ, գրված են հայտնի հոլիվուդյան կինոդերասանների, երաժիշտների և չգիտեմ, թե էլի ում անունները: Ամբողջ իմաստն այն է, որ այդ մարդկանց ոտքը դիպել է այդ մայթին: Հավանաբար, այս մտահղացման հեղինակը հանճարեղ մարդ է եղել: Նա ստեղծել է մի արահետ, որի մասին հիմա գիտեն ամբողջ աշխարհում, և որը դիտելու համար մարդիկ գալիս են ամբողջ աշխարհից: Առհասարակ, Հոլիվուդում հիմնականում հանճարեղ մարդկանց ես տեսնում: Համենայն դեպս, եթե որևէ մեկին ասես, որ ինքը հանճարեղ չէ, կարող ես տհաճ պատմության մեջ ընկնել: Առ-

հասարակ, այստեղ այն ամենը, ինչ հանճարեղ է, չափազանց նման է այս աստղերի արահետին: Եվ արահետով անցնող բոլոր հանճարեղներին: Անկախ նրանից՝ աստղեր են, թե ոչ: Այստեղ ամեն ինչ ցուցադրվում է ու վաճառվում: Ավելի ճիշտ՝ հաջողության հասնելու համար պայման է ցուցադրելն ու վաճառելը կամ ցուցադրվելն ու վաճառվելը, որ, ի վերջո, նույն բանն է, որովհետև այստեղ բոլորն էլ ուզում են հաջողության հասնել: Իսկ կա՞ մի տեղ, ուր մարդիկ չեն ուզում հաջողության հասնել: Հազիվ թե: Իսկ ի՞նչ վատ բան կա ցուցադրելու և վաճառելու մեջ, անգամ ցուցադրվելու և վաճառվելու, եթե դա արվում է հաջողության հասնելու համար և այս դեպքում՝ նաև արվեստի: Գուցե ոչ մի: Այդ իսկ պատճառով էլ ես ընդունում եմ, որ այստեղ բոլորը, ովքեր իրենց հանճարեղ են համարում, հանճարեղ են, մանավանդ հանճարեղ «Աստղերի արահետ» մտահղացած հանճարեղը, որը, սակայն, մի ցավալի հանգամանք հաշվի չի առել: Որ ինձ պես մի հասարակ մահկանացու կարող է տրորել այդ արահետը իր կոշիկներով, որոնցից մեկի, եթե ճիշտ եմ հիշում՝ ձախի, կրունկը պոկված է, և որոնք երկուսն էլ՝ թե՛ ձախը և թե՛ աջը, քիչ առաջ են դուրս եկել մոտակա հասարակական զուգարանից: Եվ որոնք իրենց կրողի պես արվեստի մասին փոքր-ինչ այլ կարծիքի են:

Ավելի վաղ ես սիրեցի Վարշավան, ուր անցկացրած երկու շաբաթների ընթացքում գրեթե դուրս չեկա «Բելվեդերսկի» հյուրանոցից՝ ոսկեծամիկ Մալգոժատայի հետ հարյուր անգամ կրկնելով սրճարանից համար և համարից սրճարան երթուղին:

Ավելի ուշ ես չսիրեցի Ամստերդամը, ուր ստիպված էի ամեն քայլափոխի կում անել տափաշշից: Եվ նայել զվարճանալու շտապող մարդկանց անհոգ դեմքերին: Ուր ես այդպես էլ որևէ զվարճություն չգտա, բացի տափաշշիս պարունակությունից, անգամ Կարմիր լույսերի շրջանում, զվարճալի կանանց ծոցում:

Հետո եղավ այնպես, որ ես սիրեցի Նոր Օռլեանը, ուր գնացել էի

մեկում հիասթափությունների խզվածքի դեմ դիմադրելու համար: Ես
սուտ է, բայց միայն մի անգամ, մյուս անգամ ինձ թույլ տվեցի
խոսել ինձ հետաքրքրող բոլոր թեմաների մասին: Ինչպես
միևնույն ժամանակ, ինձ թույլ տվեցի ասել ամբողջ ճշմարտությունը
ես ինձ համար ստեղծեցի մի նոր աշխարհ, որտեղ ոչ ոք չի
ասում, որ ինձ հետ դժվար է աշխատել, որ ես ինձ պահում եմ
ինչպես գիժ, որ ինձ հետ դժվար է գործ ունենալ, որ ես
ինքս եմ ինձ դժվարացնում եմ իմ կյանքը, որ ես ինձ
ոչնչացնում եմ, որ ես ինձ հետ ոչ ոք չի կարող ապրել
ինչպես ես, որ ես ինքս եմ ինձ դժբախտ դարձնում, որ
ինձ հետ ոչ ոք չի կարող ապրել, ինչպես ես, որ ինձ

"Events" ընկերության ԱՊՀ-ի, Պարսկաստանի և Ասիայի արաբական երկրների կենտրոնական մասնաճյուղը: Այս հարցի շուրջ հնարավոր համաձայնությունից հետո հարկ կլիներ բանակցել և համաձայնության գալ նորաստեղծ ընկերության հիմնադրման ծախսերի, փայաբաժինների և այլ ֆինանսական հարցերի շուրջ: Բայց դա լինելու էր վաղը:

Հիմա դրա ժամանակը չէր: Հիմա Ֆլիպը խմում էր:

Ճաշին մենք նրան այնքան խորոված, քյաբաբ ու խաշլամա էինք հրամցրել, որ հիմա հոլանդացին կտրականապես հրաժարվեց հայկական ռեստորան գնալուց: Այստեղ՝ «Ռեմբրանդում», նա պատվիրեց լոբի, սիսեռ, ոսպ և, իհարկե, շատ օղի:

Այս անգամ մենք առանձին էինք, այսինքն՝ մեզ հետ չէին Վլադիմիրը, Մկոն և, որ գլխավորն է, Լիզան: Լիզայի վերաբերյալ ես իմ հաշվարկների մեջ չէի սխալվել: Նա այնպես էր հմայել հոլանդացուն, որ վերջինս անգամ չնայեց կողքի սեղանի շուրջ նստած, երկու հարյուր դոլար ընդհանուր արժողությամբ, Մկոյի հայթայթած երկու գեղեցկուհիներին, որոնց կարգադրված էր իբր պատահականորեն ծանոթանալ Ֆլիպի հետ և ընկերակցել նրան մինչև առավոտ: Ես, իհարկե, վստահ էի, որ փորձված հոլանդացին անմիջապես կկռահի, թե ինչն ինչոց է, բայց դա էլ էր մտնում հաշվարկների մեջ: Այդուհանդերձ, ստացվեց այնպես, որ օրիորդները դատարկ տեղը վատնեցին իրենց թանկարժեք ժամանակը և չստացան իրենց երկու հարյուրը, որովհետև նրանց չհաջողվեց անգամ գրավել Ֆլիպի ուշադրությունը, թեպետ պետք է նշել, որ խեղճերը ջանք չխնայեցին: Նրանք մեկ դիմում էին մեզ՝ աղ խնդրելով, մեկ՝ բիբար, կրակ, հարցնում էին ժամը, ամիսը, թվականը, և այդ ամենը անում էին՝ բերանները և ոտքերը հնարավորին չափ բացած: Բայց հոլանդացին անտարբեր էր: Նա լուռ ուտում էր իր սիսեռը, խմում իր օղին և երբեմն միայն ինձ հարցեր էր տալիս, որոնք հիմնականում վերաբերում էին Լիզային: Եվ այդտեղ էր, որ ես հասկացա, որ հոլանդացու հետ բանակցություն-

ների՝ հաջողությամբ ավարտվելուն պետք է նպաստեին ոչ այնքան մեր պրոֆեսիոնալիզմը, մեր կազմակերպած ճոխ հյուրասիրությունները, հանդիպումները տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների հետ և նրանց տված երաշխիքները, այլ Լիզայի պարզունակ հմայքը: Ֆլիպ վան Վիլետը՝ հիսունութամյա փորձված աղվեսը, արդեն ընկել էր թակարդը:

Իհարկե, սա ինձ ձեռնտու էր. հասկանալի էր, որ հոլանդացու համար դժվար կլինի գործել երկու ճակատով՝ սիրային և գործնական, առավել ևս, որ դրանք միմյանց հետ սերտորեն կապված են, ու երկուսից մեկում նա ստիպված կլինի զիջողությունների գնալ: Թե որ ճակատը կլինի դա, դժվար չէր կռահել:

Բայց արդյոք ես շատ հեռուն չէի՞ գնա իմ խաղի մեջ: Իր գործը Լիզան կաներ և արդեն արել էր, և հոլանդացին հիմա որոշակի կախվածության մեջ էր նաև մեզանից, բայց ես հաշվի չէի առել մի կարևոր հանգամանք. այն, որ «ծերուկը» կարող էր լրջորեն սիրահարվել: Իսկ սա վաղ թե ուշ պիտի բերեր որոշակի բարդություններ: Նախ՝ որովհետև Լիզան արժանապատվություն ուներ և պարզ խաղից ավելիի նա չէր գնա՝ անգամ իմանալով, որ փոխարենը կարող է ստանալ նիդեռլանդական ողջ ոսկին: Իսկ Ֆլիպի մեջ ես հասցրել էի նկատել չտեսնված համառություն և, որ գլխավորն է, անթաքույց կիրք:

Մեր սեղանին մոտեցավ մատուցողը և հարցրեց, թե արդյոք մերը չէ ռեստորանի մուտքի մոտ կանգնած սպիտակ «Ժիգուլին»: Նա բացատրեց, որ այն խանգարում է ուրիշ մեքենայի, և խնդրեց իջնել ու տեղաշարժել: Տարօրինակ էր, որովհետև ես կանգնեցրել էի մեքենան այնպես, ինչպես հարկն է, և այն չէր կարող որևէ խոչընդոտ ստեղծել: Համենայն դեպս, երկար մտածելու առիթ չստեղծվեց. երբ դուրս եկա ռեստորանից և մեքենայիս մոտ տեսա երկու հաղթանդամ տղամարդկանց, հասկացա, թե ինչ է տեղի ունենում: Երկու ուրիշը մոտեցան աջ և ձախ կողմերից ու ինձ, ասես բարեկամաբար, թևանցուկ արին:

Միայն թե ի՞նչ բարեկամություն կարող էր լինել իմ և Ծիտ Կոստոյի գլխակերների միջև: Նրանց հետ իմ առավոտյան հանդիպումից հետո ուրիշ որևէ շփում չէր եղել, բայց չի կարելի ասել, որ ես անհանգիստ չէի:

– Մեքենադ կմնա այստեղ,– ասաց աջ կողմից ինձ թևանցուկ արածը՝ խնամքով առաջ հրելով,– դու կնստես «Նիվան»:

– Վերևում ինձ մարդ է սպասում,– բացատրեցի,– նա արտասահմանից հյուր է: Թույլ տվեք ավարտել հանդիպումը, և ես խոստանում եմ գալ ձեզ հետ:

- Չի լինի,- կարճ ասաց ձախ կողմից թևանցուկ արածը:

Ես նստեցի, ավելի ճիշտ՝ ինձ նստեցրին «Նիվայի» հետնամասում: Հետո ինձ թևանցուկ արածները փորձեցին նստել կողքերիս, բայց չտեղավորվեցին, և նրանցից մեկը ստիպված եղավ տեղափոխվել առաջ:

«Նիվան» շարժվեց, իջավ Աբովյան փողոցով, հատեց Հանրապետության հրապարակը, Խորենացու փողոցը, անցավ Հաղթանակի կամուրջը և իջավ Զանգվի ձորը: Ամբողջ այդ ընթացքում ինձ, ըստ էության, առևանգողների հետ գրեթե խոսակցություն չեղավ, չնայած կարող էր լինել: Նրանցից մեկը ամենասկզբում հարցրեց, թե արդյոք չեմ ուզում խոսել, և արդյոք ինձ չի հետաքրքրում, թե ուր ենք գնում: Ես չպատասխանեցի:

Զանգվի ձորում «Նիվան» կանգնեց մի ռեստորանի առջև, բայց մենք մնացինք մեքենայում: Միայն վարորդն իջավ: Ես շրջվեցի և տեսա, որ մեր հետևում ուրիշ մեքենա էլ կար: Նստեցինք մոտ հինգտասը րոպե և շարունակեցինք լռություն պահպանել: Հետո վարորդը վերադարձավ և կարգադրեց, որ իջնենք: Երկու հաստավզերը կրկին ինձ թևանցուկ արեցին ու ծառայողական մուտքով առաջնորդեցին դեպի մի առանձնասենյակ, ուր զանազան ուտելիքներով ծանրաբեռնված սեղանի առջև նստած էին Ծիտ Կոստոն ու էլի մեկը:

Փետրվար, 1998

Երբ հրաժարական տվեց հանրապետության առաջին նախագահը, իմ մեջ դույզն իսկ կասկած չկար, որ իմ հայրենիքում Ծիտ Կոստոների ու նրա նմանների իմաստով որևէ բան է փոխվելու: Բայց, այնուամենայնիվ, նախագահի հրաժարականի մասին իմանալով, քիչ է ասել, թե ուրախացա:

Այդ ժամանակ ես Կրասնոդարի կայարանում էի: Կես ժամից շարժվելու էր Կրասնոդար-Կիև գնացքը, որի տոմս ունեի: Իմ ճամփորդության նպատակը պանդուխտների մասին մի գիրք գրելն էր, որն այդպես էլ մնաց կիսատ, ոչ թե որովհետև հայրենիքից դադարեց արտագաղթը, այլ որովհետև մի օր հասկացա, որ ինքս էլ կարող եմ հեռանալ: Եվ մեղավոր չէի, որ նախագահի հրաժարականը համընկավ իմ այդ ճանապարհորդությանը, թեպետ հնարավոր էր դա կանխագուշակել, եթե քաղաքական իմ գիտելիքները քիչ ավելի խորը լինեին, և այդ դեպքում կարելի կլիներ մի քանի օրով հետաձգել մեկնումս, որպեսզի ստիպված չլինեի այդ իրադարձությունը նշել հայրենիքից այդքան հեռու Կրասնոդար-Կիև գնացքի ուղևորների հետ, որոնց Հայաստանի Հանրապետության նախագահի հրաժարականը այնքան էր հետաքրքրում, որքան հրաժարական տված նախագահին իր երկրի ապագան:

Իսկ ինչո՞ւ անպայման նշել: Որովհետև ինձ թվաց, թե իմ հայրենիքը դադարեց ինձ պատկերանալ որպես մի հնադարյան քաղաքամրոց, որի դարպասների մոտ կանգնած է առասպելական վիշապը՝ պատրաստ հոշոտելու յուրաքանչյուրին, ով կընկնի ճանկերը:

Կրասնոդարի երկրամասում ես հանդիպել էի մարդկանց, որոնք ինձ վստահեցնում էին, որ փախել են հենց նրանից: Այդ հարգարժան մարդկանց հետ զրուցելով՝ ես հասկացել էի, որ եթե վիշապին չեմ տեսել, ապա ինձ պարզապես խաբել են իմ աչքերը: Որովհետև հիշողությանս մեջ աստիճանաբար վերականգնվում էր վիշապի պատկերը, որ բազում գլուխներ ու եղջյուրներ ուներ, որ կար ու չկար, թեև հաստատ կար:

Եվ ես ընդամենը գնում էի նրանից փախած հայ փախստականին, գաղթականին ու վտարվածին փնտրելու, որը մի բառով կոչվում է պանդուխտ:

Լրագրավաճառ Օլգան մի պահ կտրվեց իր սիրավեպի ընթերցանությունից ու շրջվեց դեպի կողքի միջքաղաքային հեռախոսախցիկը, ուր, դուռը բաց թողած, ամբողջ ձայնով գոռում էր մի վրացի:

– Հիվա՛նդ,– ասաց Օլգան՝ վստահ, որ հիվանդն իրեն չի լսի, ու աչքով արեց ինձ: Ես արդեն հասցրել էի նրանից գնել օրվա ողջ մամուլը:

Փետրվարի չորսն էր: Երկարատև տաք օրերից հետո անսպասելի հորդ անձրևը ներս էր քշել բոլոր անտուն հարբեցողներին, որոնք արդեն պատրաստվում էին խմել օդերևութաբանների կենացը, որոնց կանխատեսումները սկսել էին իրականանալ: Տարին, առհասարակ, հարբեցողների համար ուղղակի հրաշալի էր սկսվել. միլիցիոներները հրահանգ էին ստացել ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել ահաբեկիչների վրա և կարծես թե նրանց մոռացել էին, բացի այդ կայարանի տարածքից իսպառ վերացել էին նրանց մշտական մրցակիցները՝ թափառական շները, և վերջապես «Կուբան» օդին էժանացել էր ամբողջ երեք ռուբլով: Այս ամենն ինձ բացատրեց Վսևոլոդ Իվանովիչը, որը դրանով հանդերձ համոզված էր, որ Ռուսիան այնուամենայնիվ, գլորվում է դեպի անդունդ: Նա ասաց դա բազմանշանակ մի հո-

գոցով և խնդրեց հինգ ռուբլի իր ստամոքսա-փիլիսոփայական պահանջների համար:

Վրացին արդեն վերջացրել էր գոռալը: Ես հինգ ռուբլի տվեցի Իվանիչին և մտա հեռախոսախցիկ՝ չմոռանալով փակել դուռը: Տուն էի զանգահարում: Ավելի ճիշտ՝ որոշեցի տուն զանգահարել վրացու պատճառով, որը, ինձ թվաց, իմ փոխարեն էր կարոտել ինչ-որ մեկին:

Հետո հորս երեք անգամ կրկնել տվեցի ասածը: Եռակի հրաժարականի պես մի բան եղավ: Վերջում պատվիրեց, որ աշխատեմ այդ առթիվ ճանապարհին չխմել:

Խոսք տալ չէի կարող: Դուրս եկա հեռախոսախցիկից ու հայացքով փնտրեցի Վսևոլոդ Իվանովիչին: Օլգան զարմացած նայում էր ինձ՝ աստիճանաբար գալով այն համոզման, որ վարակը հեռախոսախցիկում է: Իվանիչը չկար: Նա, անշուշտ, մի տեղ ծամում էր հինգնոցը:

Թաց ու լուսավոր կառամատույցից անդին, գնացքի անիվների հեռավոր ձայնի պես, թվում էր՝ արձագանքվում է անհավատալի լուրը:

Բայց ի՞նչ է փոխվելու դրանից: Ի՞նչ երաշխիք, որ վաղը չի գալու ուրիշ մեկը՝ բնազդաբար հետևելու իր նախորդին... Կամ ի՞նչ երաշխիք, որ նրանք, ովքեր պայքարեցին վիշապի դեմ, վաղն իրենք այդպիսին չեն դառնալու: Կրասնոդարի երկրամասի Ստանիցա Դինսկայայում բնակվող ծեր ավտովերանորոգող Յուրի Թևանյանը չէր հավատում, որ պատերազմում հաղթած ժողովուրդը կարող է աստանդական դառնալ:

Օդեսայում բնակվող տաքսու վարորդ Գեղամը չէր հավատում, որ իր դուստրը պետք է դպրոց գնա Օդեսայում:

Մերձմոսկովյան Պրոտվինոյում բնակվող հողագործ Արտաշեսը չէր հավատում, որ Արարատյան դաշտավայրի գյուղերից մեկում իր այգին թողած՝ մի օր ստիպված է լինելու ուրիշի այգի մշակել:

Դնեպրոպետրովսկում բնակվող օպերային երգչուհի տիկին Էլմիրան չէր հավատում, որ իր հայրենիքից յոթ տարում հեռացել են մեկ միլիոնից ավելի հայեր:

Կառամատույցի վերջում կրպակ-խորտկարանի ծածկի տակից հառնեց Վսևոլոդ Իվանովիչը՝ գործընկերոջ հետ:

– Հորդառատ անձրևի տակ շրջում են կա՛մ սիրահարվածները, կա՛մ խելքը թռցրածները,– ասաց նա:

– Որը, ի վերջո, նույն բանն է,– եզրակացրեց գործընկերը:

– Կամ նրանք, ում երկրի նախագահը հրաժարական է տվել,– փորձեցի ամբողջացնել ես:

Ճամպրուկիս մեջ մի տեղ ես ունեի իմ համագյուղացի որմնադիր Վարոյին հասցեագրված ծրար՝ որդիների լուսանկարներով. այն ինձ տվել էր նրա մայրը՝ իմանալով, որ մեկնելու եմ Կիև, երբ ես վերջին անգամ հորուպապիս Զովասար գյուղում էի: Սակայն ինձ պետք չէր հանդիպել Վարոյին, որպեսզի լուսանկարները տայի հասցեատիրոջը: Դրանք ես կարող էի նույն հաջողությամբ փոխանցել հարյուրավոր Վարոների, որոնք գտնվում են Ռուսաստանի և Ուկրաինայի ամենատարբեր քաղաքներում: Նրանք բոլորը կուրախանային, ապա կտխրեին, իսկ հետո կվազեին խանութ՝ մի շիշ օղի գնելու:

Երկամյա ընդմիջումից հետո, երբ ճամփորդությանս նախօրեին կրկին եղա Զովասարում, այն հանգչող մեղվափեթակի պես էր, կարծես իմ տեսած ու ճանաչած գյուղը չէր. կիսադատարկ, կիսաշունչ, կիսաձայն, որ և՛ կա, և՛ չկա, և՛ քեզ ունկնդիր է, և՛ խուլ: Եվ կիսամարդ, ուժասպառ իր կես հոտն ու նախիրն է չարչարում հողմահարված անխոտ դաշտերում ու ձորակներում: Եվ իմ մանկության ընկերները՝ ամիսներով չսափրված, անապագա, անատամ, քրիստոնեական երկերես համբերությամբ ու համալսարանական կրթությամբ, դեռ համարձակվում են գոյություն քարշ տալ: Անհուն այս տխրության մեջ ես ուզում

էի հավատալ, որ ամեն ինչ դեռ կորած չէ, և համառորեն փնտրում էի մյուսներին, որոնք սրանցից տարբեր էին, չգիտեմ՝ լավ տարբեր, թե՞ սոսկ տարբեր: Նրանց հարազատները ինձ պիտի տային նրանց օտար հասցեները և ասեին, որ ամիսներով, երբեմն էլ տարիներով նրանցից լուր չունեն:

Եվ քանի՞ այդպիսի գյուղեր կային Հայաստանում՝ կիսադատարկ, անհեռախոս, անհեռագիր ու լուրի սպասող:

Կրասնոդար-Կիև գնացքի պոչի վագոնի ուղևորներն ինձ հետ լուսացրին փետրվարի չորս լույս հինգի գիշերը՝ մսխելու վագոն-ռեստորանի ողջ ալկոհոլի պաշարը և իմ գործուղման բյուջեն:

Փույթ չէ, թե ինչ էր սպասվում հետո: Կարևոր էր, որ վիշապն այլևս չկար: Եվ նրա հետ չէր լինի գիշակեր իր ոհմակը՝ տռուզ, ցմփոր, արնածոր մռութներով ու պղտոր աչքերով:

Հնարավոր է, որ ես մեղանչում էի Աստծո արդարության առջև իմ տգիտության ու անտեղյակության պատճառով: Բայց այդ դեպքում ումի՞ց և ինչի՞ց էին փախել իմ տեսած մարդիկ, ո՞ւր էին գնում իմ տեսած քարավանները՝ թողած տուն ու տեղ, հարազատ ու բարեկամ: Ո՞ւմ հիշեց ինձ հյուրընկալած ծերունի Յուրի Թևանյանը, երբ արցունքի երկու կաթիլ էր գլորվում կնճռների ձորակներով:

Կար այս հարցերի քաղաքական պատասխանը: Այն ինձ հուսահատեցնում էր: Եվ ես ստիպված էի մտածել, որ պատերազմը չի ավարտվել: Դա հաղթանակ չէր, այլ ընդմիջում, որն ընդամենը կարող էր մեզ մխիթարել կամ, լավագույն դեպքում, հուսապնդել: Հաղթանակը, եթե լինելու է երբևէ, մենք կտոնենք տանը:

12 նոյեմբերի, 1999

– Ես քեզ հարցեր կտամ, դու պատասխանիր,- ասաց Ծիտ Կոստոն,- եթե ճիշտն ասես, կգնաս տուն:

Պետք է ասեմ, որ ես իսկապես չէի հասկանում, թե ինչ է տեղի ունենում: Չէի հասկացել առավոտյան, երբ թանգարան եկան այն երկու հաստավիզները, որոնց անսպասելիորեն տապալեց Սարգիսը, չէի հասկացել ցերեկը, երբ փորձել էի վերհիշել դեպքի մանրամասները, ու չէի հասկանում հիմա, երբ կանգնած էի մեծարգո օլիգարխի առջև, որը, դատելով նրա համար իմ արածից, եթե պիտի ուզենար ինձ տեսնել, ապա միայն շնորհակալություն հայտնելու համար: Սակայն նման ձևով շնորհակալություն հայտնելն ինձ մի քիչ տարօրինակ էր թվում: Համենայն դեպս, ջանացի չկորցնել սառնասրտությունս և տեսնել, թե ինչ է, այնուամենայնիվ, տեղի ունենում:

– Ինձ թվում էր, թե լավագույն դեպքում դուք պետք է հիվանդանոցում լինեք,– ասացի:

– Այսի՞նքն: Ինչպե՞ս թե լավագույն դեպքում:

Ես թոթվեցի ուսս.

– Որովհետև չէր կարելի նաև բացառել վատագույն դեպքը և մտածել, որ դուք դիահերձարանում եք: Թեպետ հիմա արդեն լավագույնն ու վատագույնը հարաբերական են ինձ համար:

– Այսի՞նքն: Ինչպե՞ս թե հարաբերական:

Բայց այս անգամ չկարողացա բացատրել, որովհետև նա կարծես ուշքի եկավ ու գոռաց.

– Կտրի՛ր ձայնդ:

Հետո տեղից վեր կացավ, կաղալով մոտեցավ ինձ ու կանգնեց

դիմացս: Ես, համենայն դեպս, մի քայլ հետ քաշվեցի՝ մտածելով, որ կարող է խփել, և անմիջապես հայտնվեցի հետևումս կանգնած թիկնապահի գրկում:

Բայց ծեծ չեղավ:

Օլիգարխը հավաքեց իրեն՝ հավանաբար իր արժանապատվությունից ցածր համարելով ինձ խփելը, և սեղանի վրայից վերցնելով «Զերմուկը»՝ կում արեց շշից ու բխկաց:

– Ի՞նչ եք ուզում ինձանից,– չդիմացա ես:

– Ինչու դու չգիտե՞ս:

– Չգիտեմ:

– Ի՞նչ ես արել պորտֆելը:

– Ի՞նչ պորտֆել:

– Ինչու դու չգիտե՞ս:

Հիմա նոր մտաբերեցի, որ առավոտյան թանգարան եկած այն երկու հաստավիզներից նույնպես ես լսեցի ինչ-որ պայուսակի մասին, միայն թե իրադարձությունները այնքան արագ զարգացան, որ այն անմիջապես էլ մտքիցս թռավ: Բայց ի՞նչ պայուսակի մասին էր խոսքը: Որևէ թյուրիմացությունից խուսափելու համար փորձեցի հավաքել մտքերս և վերհիշել նախորդ գիշերվա դեպքերը: Բայց օլիգարխը սպասում էր իր տված հարցի պատասխանին, և երկար դադարը կարող էր նրան մտածելու տեղիք տալ, թե ես իսկապես ինչ-որ բան թաքցնում եմ:

– Այստեղ ինչ-որ թյուրիմացություն կա,– ասացի:

– Այստեղ ոչ մի բան չկա,– նա շիշը շխկոցով դրեց սեղանին,– պորտֆելը «Մերսեդեսի» հետևի նստատեղին էր, հետո անհետացավ:

– Լավ, իսկ ե՞ս ինչ կարող եմ անել:

– Ինչպե՞ս թե ինչ. դու այնտեղ էիր:

Ես կրկին մի պահ դադար տվեցի ու որոշ ժամանակ մտածելուց հետո ասացի.

– Լավ, եթե ինձ երկու րոպե լսեք, ես կբացատրեմ, թե ինչ կարելի է անել:

– Ուրեմն բացատրիր,- ոգևորվեց օլիգարխը:

– Ուրեմն բացատրում եմ. կարելի է անել երկու բան. առաջինը՝ շարունակել պահանջել ինձանից մի պորտֆել, որի մասին առաջին անգամ եմ լսում, և ինքներդ ձեզ կանգնեցնել լուրջ պրոբլեմների առջև: Եվ երկրորդը՝ անհապաղ ներողություն խնդրել և մի տաքսի կանչել:

Ծիտ Կոստոն կարծես չհավատաց լսածին: Նա մի պահ պապանձվեց, հետո կմկմաց, հետո նոր միայն կարողացավ արտաբերել.

– Դու... Դու գիտե՞ս, թե ես ով եմ:

Ես թոթվեցի ուսերս:

– Ես... Ես կարող եմ քեզ այնպես կորցնել, որ հետքդ էլ չգտնեն,– շարունակեց նա կատաղած:

– Միերը կգտնի:

– Ո՞վ:

– Միերը:

– Ո՞ր Միերը:

– Իմ ընկեր:

Ծիտ Կոստոն զարմացած նայեց ինձ, ապա սեղանի մոտ նստած մարդուն, հետո իր թիկնապահին և վերջում՝ առաստաղին: Բայց որևէ տեղից Միերի հաշվով պարզաբանում չստացավ: Եվ չէր էլ կարող ստանալ, որովհետև Միերը պարզապես իմ ընկերն է և իմ նման մեկը:

– Լսիր, դու ավելի լավ է ասա, թե որտեղ է պորտֆելը, և ես քեզ ոչ մի վնաս չեմ տա:

– Դուք երևի լավ չհասկացաք երկու բան, պարո՛ն Բալյան, առաջինը, որ ես չգիտեմ, թե որտեղ է ձեր անհիծյալ պորտֆելը, և երկրորդը, որ եթե անգամ դուք ինձ որևէ վնաս տաք, կստանաք կրկնակին՝

իմ կամ իմ ընկերների կողմից, որոնք, չնայած ձեր չափ փող չունեն, բայց վստահ եղեք, որ ձեզանից հարյուր անգամ թասիբով ու տղամարդ են:

Սեղանի մոտ նստած մարդը, որ մինչև հիմա ոչինչ չէր ասել ու անտարբեր ուտում էր իր խորոված, վեր կացավ տեղից ու մոտեցավ մեզ:

– Ապե՛ր,– դիմեց նա ինձ,– պայուսակում շատ փող կար: Այնտեղ եղել եք դու, աղջիկներն ու չգիտեմ, թե էլ ով: Աղջիկներին մեր մարդիկ Մոսկվայում հարցրել են, փողը նրանց մոտ չի: Դու ասում ես, որ քեզ մոտ էլ չի: Ուրեմն արի միասին մտածենք, թե ուր է:

Ես նայեցի նրան. միջահասակ, նիհարակազմ, անտարբեր աչքերով ու հետ սանրած սպիտակ մազերով՝ նա ավելի շատ նման էր ինժեների, քան օլիգարխի կամ օլիգարխի ընկերոջ: Գուցե նրա հետ կարելի էր խոսել, բայց ես այլևս ասելիք չունեի:

– Ես այլևս ասելիք չունեմ: Ես պետք է գնամ, ինձ մարդ է սպասում:

Շրջվեցի ու քայլեցի դեպի դուռը՝ վստահ, որ թիկնապահն ինձ կբռնի: Այդպես էլ եղավ, միայն թե դա շատ կարճ տևեց:

– Թող,– կարգադրեց «ինժեները»,– գնա ու մտածիր: Քեզ մեկ օր ժամանակ: Վաղը ես ինքս քեզ կհանդիպեմ:

Ծիտ Կոստոն ոչինչ չասաց:

1 նոյեմբերի, 1999

Երբ ինձ տեղեկացրին, որ Սոֆիայում իմ ժամանակավոր կացարանը լինելու է գիտությունների ակադեմիայի հյուրանոցը, ինձ թվաց, թե ընկնելու եմ վանքի պես մի տեղ, ուր պարզապես վանա-

կանների փոխարեն տեսնելու եմ միևնույն յոթանոց ակնոցներով մաթեմատիկոսների ու գզգզված մազերով ֆիզիկոսների, իսկ զանգերի ղողանջի փոխարեն ինձ քնից արթնացնելու է գրամեքենաների աղմուկը: Մինչդեռ սրճարանում առավոտյան ժամը իններին ազատ սեղան չկար, ու իրար էին խառնվել նոր եփած սուրճի ու կոնյակի բուրմունքները: Իսկ մատուցողուհին, թվում էր, թե առավոտյան հագնվելիս մոռացել է շրջազգեստի մասին: Չգիտեմ՝ գիտնականներն ինչպես, բայց ես դժգոհ չէի:

Ակամա հիշեցի մեկ այլ հյուրանոցի մասին, որը, սակայն, Օդեսայում էր. այնտեղ ամեն երեկո՝ սենյակիս բանալին տալիս, մշտապես քնաթաթախ հարկի հերթապահը տրորում էր աչքերն ու հարցնում.

– Դե ինչ, չե՞ք փոշմանել:

Բանն այն է, որ ամենաառաջին օրը, երբ նա ինձ հարցրեց, թե «հարսնացու» պետք չէ, ես հիմարաբար կատակեցի. «Իսկ նա ինձ հետ կամուսնանա՞»: Հերթապահը դա լուրջ ընդունեց, ու հետո իմ համարի մոտ մի իսկական հերթ գոյացավ: Հինգ րոպեն մեկ դուռս թակում էին ու հարցնում, թե աղջիկ պետք չի: Հետո նորից ու նորից: Մերժվողները գնում, կանգնում էին հերթի պոչին: Նախ՝ պարզապես ասում էի, որ տրամադրությունս լավ չէ, հետո հորինեցի, որ հիվանդ եմ, ապա՝ փող չունեմ, անգամ գոռգոռացի, բայց ոչինչ չէր օգնում: Ստիպված եղա զանգահարել ադմինիստրատորին. ասացի՝ ինձ թվում է, թե պատշգամբումս մարդ կա: Քիչ անց պահակային ծառայությունից երկու հոգի եկան, ստուգեցին պատշգամբս ու եզրակացրին, որ ինձ այդպես թվալու պատճառն ուժեղ քամին է: Բայց ինձ համար կարևորն այն էր, որ համարիս մոտի հերթը վերացել էր: Երբ պահակները դուրս էին գալիս սենյակից, նրանցից մեկը շուռ եկավ ու զգուշորեն շշնջաց. «Իսկ պատահաբար գիշերվա համար աղջիկ պետք չի՞»:

Բայց դա Օդեսայում էր:

Հիմա Սոֆիայի գիտությունների ակադեմիայի հյուրանոցի սրճարանում ընբոշխնելով առավոտյան առաջին սուրճն ու սիգարետը, համենայն դեպս, չէի կարող չնկատել սրճարանի հաճախորդների՝ ինձ ուղղված հայացքները: Ի՞նչ էր պատահել: Համարից դուրս գալիս լողացել էի ու սանրվել, նայեցի շորերիս, ամեն ինչ կարգին էր, խմածս սովորական «Էսպրեսո» էր, ծխածս՝ սովորական «Լաքի սթրայք», ու հանկարծ գլխի ընկա, թե ինչն է նման ուշադրության պատճառը: Բանն այն է, որ նախորդ օրը չափից դուրս շատ էի երևացել հեռուստացույցով, որքան էլ որ խուսափում եմ դրանից: Նախ՝ Սոֆիայի ազգագրության ինստիտուտ-թանգարանում բացված «Հայերը Բուլղարիայում» ցուցահանդեսի ժամանակ, որը բացելու պատիվը տրվել էր ինձ, ու չնայած հրաժարվել էի հարցազրույցներից, բայց արարողությունը ցուցադրվել էր տարբեր հեռուստալիքներով: Ապա երևացել էի երեկոյան մի մշակութային հաղորդման ժամանակ, որի հյուրը լինելուց պարզապես անհնար էր եղել հրաժարվել: Բայց և այնպես հաղորդմանը ներկայացել էի ուշացած՝ Պանչոյի հետ ռակիա խմելուց և Մարուսյային տուն ճանապարհելուց անմիջապես հետո, և լավ չէի հիշում թե ինչեր եմ խոսել: Համենայն դեպս, կարելի էր կռահել՝ դատելով սրճարանում հավաքված այս մարդկանց հայացքներից:

Բայց հերն էլ անիծած: Ես վստահ էի, որ հիմարություններ ասած չեմ լինի և, ծայրահեղ դեպքում, կարող եմ ասած լինել որևէ հարցի վերաբերյալ ճշմարտությունը, որը, սակայն, ուրիշ, այսինքն՝ սթափ ժամանակ կգերադասեի չասել: Բայց շուտով անհանգստությունս վերացավ, երբ սեղանիս մոտեցավ մի տարեց գիտնական և նստելու թույլտվություն խնդրեց:

– Հիանալի է, երիտասարդ, – ասաց նա փայլուն անգլերենով: – Ես ինքս մշակութային դիկտատուրայի ջատագով եմ: Մշակույթը պիտի վերահսկվի և վերահսկվի խստորեն, այլապես մեր երեխաները կայլասերվեն: Հավատացեք, դուք երեկ իմաստուն բաներ էիք ասում:

– Իսկապե՞ս, – անկեղծորեն ուրախացա ես, – իսկ ի՞նչ էի ես ասում:

Երբ Մարուսյայի հետ շրջում էինք Սոֆիայի փողոցներով, կողքից նայողի համար դժվար կլիներ զանազանել, թե մեզանից ով է իրականում քաղաքի հյուրը: Տարիների բացակայությունից հետո Մարուսյան լավ չէր հիշում քաղաքը, և հաճախ ես էի նրան ուղղություն ցույց տալիս: Մենք գնում էինք մի տեսարժան վայրից մյուսը, և ես մտածում էի, թե ինչ է իրականում տեսարժան վայրը: Եթե դա կաղապարված հասկացություն է, որ բացառում է կաղապարից դուրս այլ տեսարժանի գոյությունը, ապա վնասակար է մարդկանց տեսողության համար և սահմանափակում է երևակայությունն ու միտքը: Որևէ քաղաքում որևէ տեսարժան վայր գնալու ճանապարհին կարելի է հանդիպել տասնյակ ավելի տեսարժան վայրերի, որոնք, սակայն, այդպիսին չեն համարվում: Չէ՞ որ, ի վերջո, իր տեսողությանը հաճելին և օգտակարը մարդն ինքն է որոշում: Եվ եթե որևէ շենք, կամուրջ, արձան կամ այդ ամենի ամբողջությունը չի դասվում որևէ քաղաքի տեսարժան վայրերի շարքը, ստիպված մի թռուցիկ հայացք ես նետում ու անցնում կողքով, չնայած կարող ես և ուզում ես կանգնել և ժամերով հիանալ: Սա, անշուշտ, այն դեպքում, երբ ինքդ քեզ չես հավատում ու չես վստահում սեփական զգայարաններիդ:

Բոլոր դեպքերում մեր էքսկուրսիան չստացվեց: Երգչուհուն շատերն էին ճանաչում, և մենք անընդհատ անցորդների ուշադրության կենտրոնում էինք: Ստիպված էինք պատսպարվել մի սրճարանում, ուր կարելի էր նաև որոշ բան խմել: Միայն թե այստեղ էլ մարդիկ չէին դադարում նայել մեր կողմը: Բայց հարյուր գրամ «Բաքարդին» օգնեց դիմանալ հայացքներին, իսկ երկրորդ հարյուրը՝ խոսել, որովհետև մինչ այդ մենք լուռ էինք, ինչպես սրճարանի պատուհանից երևացող Կիրիլի և Մեֆոդիի արձանը:

– Գիտե՞ս, որ դու առաջին երգչուհին ես, որի հետ ես խմում եմ, – հարցրի երգչուհուն:

– Իսկ ի՞նչ ես արել ուրիշ երգչուհիների հետ:

Ես ժպտացի.

– Դու հումոր ես անում, մինչդեռ ես լուրջ եմ:

– Դա ստացվում է ինքնաբերաբար:

– Լավ հումորը միշտ էլ լինում է ինքնաբերաբար, այլապես շինծու է ու հիմնականում տափակ:

– Ուրեմն շարունակիր խմել քո առաջին երգչուհու հետ, իսկ նա ինքնաբերաբար հումորներ կանի: Իմիջիայլոց, այդ ի՞նչ ես խմում:

– Ռոմ, որը խառնում եմ կոլայով:

– Ինչպիսի՞ն է:

– Ինչպիսի՞ն, – ես նայեցի դատարկ բաժակիս, – չգիտեմ, թե ինչպիսին է, բայց մի հիմար հատկություն ունի. անընդհատ վերջանում է:

Մարուսյան ծիծաղեց: Ես կանչեցի մատուցողին և պատվիրեցի ևս երկու բաժակ՝ նկատի ունենալով աղջկա հետաքրքրությունը:

– Այս խմիչքից յոդի հոտ է գալիս, – փաստեց երգչուհին:

Հետո մենք որոշ ժամանակ լռեցինք, ապա Մարուսյան հարցրեց.

– Դու եղե՞լ ես Աֆրիկայում:

– Ո՛չ:

– Իսկ ես այնտեղ եմ անցկացրել մի փոքր հատված մանկությունիցս և իմ ողջ պատանեկությունը:

– Ես մի քիչ ծանոթ եմ քո կենսագրությանը:

– Իսկապե՞ս: – Նա ինձ նայեց թախծոտ աչքերով ու մի մեծ կում արեց բաժակից:

– Եվ իմանալով քո պատմությունը՝ ես առավել ևս ինձ մեղավոր եմ զգում, որ հիմա քեզ հետ եմ:

– Ինչո՞ւ մեղավոր, – փորձեց ժպտալ:

– Որովհետև այս ամենը շուտով վերջանալու է, ես մեկնելու եմ

տուն և չեմ ուզում մի նոր տխուր հիշողություն դառնալ քո կյանքում: Ավելի լավ է դու մտապահես միայն այն, որ ռոմից յոդի հոտ է գալիս, ու այլևս չխմես այս հիմար խմիչքը:

Մարուսյան կրկին ժպտաց: Կրկին կում արեց բաժակից ու, բացելով պայուսակը, այնտեղից ծամոն հանեց ու մի մեծ խխունջի պատյան, բայց ծամոնը չբացեց, այլ շուրթերին մոտեցրեց խխունջն ու փչեց:

– Հիշո՞ւմ ես Ռոբկային, – հարցրեց՝ խխունջը, չգիտես ինչու, մեկնելով ինձ:

– Իհարկե, հիշում եմ այդ հրաշալի մանչուկին:

– Երեկ, մինչ դուք խմում էիք ու խոսում քաղաքականությունից, ես ընկերացա նրա հետ, և նա ինձ նվիրեց այս խխունջը, որ գտել էր ծովափում:

– Վստահ եղիր, որ դու ավելի ճիշտ անցկացրիր ժամանակդ:

– Ռոբկան ինձ ցույց տվեց ծովափից հավաքած իր խխունջները, իսկ նրա մայրն ինձ պատմեց, թե ինչպիսի զոհաբերության է գնացել այդ փոքրիկը հանուն իր ընկերոջ:

Եվ Մարուսյան պատմեց ծովափի պատմությունը Ռոբկայի, Ստեֆանի և Մաշայի մասին:

– Երբ թողարկվի ձայնասկավառակս, և ես մի քիչ փող ունենամ, անպայման մի մոտոցիկլ կգնեմ մանչուկի համար: Իսկ վաղը խոստացել եմ նրան տանել ինձ հետ ստուդիա, որտեղ ձայնագրվում եմ: Կարող ես միանալ մեզ:

12 նոյեմբերի, 1999

Երբ վերադառնում էի «Ռեմբրանդ» ու հարմար սուտ էի փնտրում՝ արդարացնելու իմ անակնկալ բացակայությունը, ճիշտն ասած, առանձնապես հույս չունեի, որ Ֆլիպին կգտնեմ անտեղ: Բայց հոլանդացին այնտեղ էր: Ավելի ստույգ՝ և՛ այնտեղ էր, և՛ այնտեղ չէր: Նրա մարմինը, որ այդ պահին իր մեջ ընդգրկում էր ողջ օդին, այնտեղ էր, բայց բացակայում էր միտքը: Պարոն վան Վիլետը հարբած էր:

Ես աննկատ մոտեցա բարմենին և հարցրի, թե ինչքան է խմել իմ ընկերը:

– Շատ, – բարեկամաբար ժպտաց բարմենը:

– Դա հարաբերական է:

– Գուցե, բայց ոչ այս դեպքում, որովհետև ձեր սեղանը խմեց մեր ունեցած ողջ «Ստոլիչնայան»: Իսկ մենք ունեինք հինգ շիշ:

Ես մտքումս հաշվեցի, թե որքան կկազմի դրա փողային արտահայտությունը, ապա մոտեցա մեր սեղանին և լուռ դատարկեցի այն, ինչ Ֆլիպը թողել էր վերջին շշի տակ:

– Ես ծերացել եմ, – ասաց Ֆլիպը՝ առանց ինձ նայելու:

– Ասացեք դա բարմենին և տեսեք, թե նա ինչ կպատասխանի:

– Բարմենը կարևոր չէ, բարեկա՛մ: Ես հիմա բարմենի հետ չեմ խմում: Ու ոչ էլ քեզ հետ: Ես հիմա խմում եմ ծերուկ վան Վիլետի հետ, որ պարպվել է, ինչպես այս շիշը: Եվ մնում է միայն պիտակը:

– Գլխավորը մինչև վերջ պիտակը պահելն է:

– «Ստոլիչնայա»:

– Ստոլիչնայա-օտլիչնայա:

– Կարո՞ղ ես կանչել Լիզային, և շարունակենք խմելը:



Ես հանկարծակիի եկա. Լիզային կանչել կարելի էր, բայց պետք չէր մոռանալ, որ Ֆլիպը խմած է, ու չնայած պնդում էր, որ պարպվել է, այնուամենայնիվ, կիրքը տեղում էր: Բայց և մերժել նրա խնդրանքը կնշանակեր մերժել: Ուստի որոշեցի մի փոքր խաղ խաղալ՝ հաշվի առնելով, որ նա խմած է և հազիվ թե որևէ բան հասկանա: Ասացի, որ Լիզային կանչելը հրաշալի միտք է ու ձևացրի, թե զանգում եմ նրան ու չեմ կարողանում գտնել: Հետո առաջարկեցի Ֆլիպին գնալ մեկ այլ տեղ, ուր դեռ խմելու բան կա՝ Լիզային փնտրել շարունակելու պայմանով: Մենք մտանք նախ «Մարկո Պոլո», ապա «Արարատի» ներքնահարկ, գինի խմեցինք, իսկ վերջում ես Ֆլիպին տարա հյուրանոց և մի կերպ բարձրացրի իր համարը:

Հետո դուրս եկա հյուրանոցից և նոր միայն իսկապես զանգահարեցի Լիզային ու, չնայած ժամը ուշ էր, ասացի, որ պետք է հանդիպել: Հաջորդ առավոտյան պիտի շարունակեինք բանակցությունները հոլանդացու հետ, եթե, իհարկե, նա ապրեր մինչև առավոտ, և Լիզայի հետ առանձին խոսելու ժամանակ չէր լինի: Նստեցինք առաջին իսկ պատահած սրճարանում, և ես դիմեցի «հարսնացուին».

– Դե ինչ, եթե այսպես շարունակվի, շուտով կգանք քեզ ուզելու:

Բայց նա չհասկացավ հումորը կամ չհասկանալու տվեց:

– Գիտե՞ս, ես վաղը գուցե չկարողանամ գալ, գուցե մի քիչ զբաղված լինեմ:

Ես անակնկալի եկա, բայց չշփոթվեցի, որովհետև Լիզային ճանաչելով՝ գիտեի, որ նա ձևեր է թափում:

– Ի՞նչ կխմես:

Լիզան զայրացած նայեց վրաս:

– Ես այսպես շարունակել չեմ կարող: Ես զգում եմ, նա ինձանից պակ չի գալու, շուտով կուզենա քնել հետս:

– Դիմացիր ևս երեք օր, – խնդրեցի ես, – բանը քնելուն չի հասնի, խոստանում եմ:

– Իսկ ի՞նչ կլինի երեք օրում:

– Մենք նրա հետ պայմանագիր կկնքենք և այստեղ մեծ գործ կդնենք:

– Իսկ ի՞նչ կլինի հետո:

– Հետո մենք շատ փող կաշխատենք, և խոստանում եմ, որ դու անմասն չես մնա:

– Բայց նա, միևնույն է, կուզենա հասնել իր ուզածին:

– Մի բան կմտածենք:

– Դու չես զգում, որ անպարկեշտորեն օգտագործում ես ինձ:

Ես անշտապ մի սիգարետ վառեցի ու սկսեցի խմել սուրճս՝ սպասելով, որ նա կշարունակի:

– Գիտես, ես ազնիվ եմ, և եթե անգամ համաձայնվեմ շարունակել խայծի դեր տանել, և եթե անգամ գործը հաջողվի, ես կմտածեմ, որ դա եղավ իմ շնորհիվ և կպահանջեմ, որ մենք հետագայում ազնվորեն մոտենանք գործին: Ու այդ դեպքում նաև առաջ կգա նյութական խնդիրը:

Ես ավելի հարմար նստեցի աթոռին:

– Գիտեմ, որ դու ազնիվ ես, Լի՛զա: Եվ հավատա, որ ոչ ոք չի պատրաստվում խաբել հոլանդացիներին: Իսկ հիմա ուշադիր լսիր ինձ. երբ մի քանի օր առաջ քեզ խնդրեցի օգնել ինձ այս բանակցություններում, նկատի ունեի, որ դու պետք է դա անես ընկերական հիմունքներով, ու դու համաձայնեցիր՝ շատ լավ իմանալով, թե ինչի համար են քեզ կանչում: Բայց հասկանում եմ, որ հիմա բանը բանից անցավ, և հիմա ես քեզ գործնական առաջարկություն եմ անում: Դու ինձ մի քանի անգամ ասել ես, որ առանձնապես գոհ չես քո ներկա աշխատանքից: Շարունակիր մնալ մեր թիմում, շարունակիր թարգմանել, սղագրել և զուգահեռաբար դիմանալ Ֆլիպի հայացքներին, ու խոստանում եմ, որ դու մեկ ամսից կունենաս բարձր վարձատրվող աշխատանք:

– Բայց նա միայն հայացքներով չի սահմանափակվի:

– Վստահ եմ, որ ինքդ կկարողանաս կարգավորել քո խնդիրները:

Մտածիր, և եթե կգաս վաղն առավոտյան, ես կորոշեմ, որ մենք պայմանավորվեցինք:

Բայց ի՞նչ պորտֆելի մասին էր խոսում Ծիտ Կոստոն: Նրանից բաժանվելուց հետո ես որոշել էի միառժամանակ հետաձգել այս հարցը, որի մասին պետք էր լրջորեն մտածել: Հիմա, երբ Ֆլիպին բարեհաջող հասցրել էի հյուրանոց, Լիզայի հետ ճշտել էի նրա անելիքը և փակվել թանգարանի իմ աշխատասենյակում, ժամանակն էր կենտրոնանալ և հասկանալ, թե ինչն ինչից հետո էր:

Ժամը մեկն էր: Երեկ՝ գրեթե այս ժամանակ, տեղի ունեցավ չարաբաստիկ վթարը: Փաստորեն, ես տեղեկություն չունեի, թե ինչ էր եղել այն պահից հետո, երբ ես օդակայան տարա Ծիտ Կոստոյի սիրուհիներին: Երանի թե չտանեի: Վաղինակին ոչինչ չէի հասցրել հարցնել այն մասին, թե արդյոք եկան շտապօգնությունն ու ոստիկանությունը, և առհասարակ ինչ եղավ իմ գնալուց հետո: Ու հիմա էլ չէի կարող հարցնել, որովհետև այսօր նրա հերթափոխը չէ: Ուրիշ ո՞վ էր ներկա դեպքին: Բացի անմիջական մասնակիցներից, այսինքն՝ երկու վարորդներից, «Մերսեդեսի» երկու ուղևորուհիներից և միկրոավտոբուսի մեկ ուղևորից, իմ ներկայությամբ այնտեղ եղել էին ևս երեք հոգի, որոնցից երկուսն անմիջապես հեռացել էին՝ տեղեկանալով, որ մարդկային զոհեր չկան, իսկ մեկը կարծեմ մնացել էր մինչև վերջ: Բայց և այնպես նրանցից որևէ մեկին, ինչպես նաև միկրոավտոբուսի ուղևորին, գտնել ես չէի կարող: Հետևաբար, մնում էր միայն Վաղինակը: Ես որոշեցի ժամանակ չկորցնել և անհապաղ կանչել նրան:

Մինչ Վաղինակը կգար, փորձեցի վերլուծել, թե ով կարող էր վերցնել պայուսակը, եթե, իհարկե, այն իսկապես եղել էր: Սկսեցի նորից. ուրեմն, իմ իմացած ներկաները տասն էին. ես, Վաղինակը, Կոստոն, Ջինան և Նաստյան, երթուղայինի վարորդն ու ուղևորը և երեք պատահական անցորդները: Ցուցակից կարելի էր առանց տա-

տանվելու հանել ինձ, Կոստոյին, երթուղայինի վարորդին, որովհետև նա անկարող էր շարժվել, աղջիկներին, որովհետև եթե նրանց մոտ փողով պորտֆել լիներ, այն կֆիքսվեր օդակայանի մաքսակետում, և երեք անցորդներից այն երկուսին, որոնք, հաստատ հիշում էի, անգամ մոտ չեկան: Հետևաբար, մնում էին միայն երրորդ անցորդը, Վաղինակը և երթուղայինի ուղևորը: Եթե պորտֆելը դրված էր «Մերսեդեսի» հետևի նստատեղին, ապա սրանցից յուրաքանչյուրը կարող էր վերցնել: Երթուղայինի ուղևորը ամբողջ ընթացքում «Մերսեդեսի» մոտ էր և կարող էր վերցնել պորտֆելը, երբ ես օգնում էի երթուղայինի վարորդին, կամ իմ գնալուց հետո: Վաղինակը կարող էր վերցնել միայն իմ գնալուց հետո: Պատահական անցորդը՝ նույնպես, որովհետև իմ ներկայության ընթացքում նա անընդհատ կողքիս էր: Չնայած ես կարող էի և ուշադիր եղած չլինել, և որևէ բան չէր կարելի բացառել: Համենայն դեպս, պատահական անցորդի դեմքը և կամ այլ բան ես չէի մտապահել, իսկ երթուղայինի ուղևորի մասին հիշում էի, որ նա բարձրահասակ էր և ուներ տարօրինակ գլխարկ: Եվ այն, որ նա երթուղայինի ուղևորն էր, ես միայն ենթադրում էի, գուցե դա այդպես չէր: Զարմանալի զուգադիպություն. Սարգիսը նույնպես բարձրահասակ էր ու տարօրինակ, տանկիստի գլխարկով:

Ու հանկարծ մտաբերեցի մի կարևոր բան. չէ՞ որ Սարգիսն ասաց, որ գիշերել է թանգարանի դիմացի այգում, և ես ժամանակ չունեցա ճշտելու մանրամասները, որովհետև այդ պահին թանգարան մտան այն երկուսը, որոնց Սարգիսը այդքան անսպասելի տապալեց: Դրանից հետո ես դարձյալ չկարողացա խոսել Սարգսի հետ, որովհետև նա նույնքան անսպասելի անհետացավ: Ուրեմն արդյո՞ք գիշերվա դեպքի ներկան, որին ես դրել էի երթուղայինի ուղևորի տեղը, և Սարգիսը միևնույն մարդիկ չէին:

Երբ եկավ Վաղինակը, ես արդեն ամփոփել էի վերլուծությունս: Գիտեի, որ գիշերային պահակի հետ զրուցելիս առանձին դիվանագիտական մոտեցում ցուցադրելու կարիք չի լինի, և նա առանց

թաքցնելու կասի այն ամենը, ինչ գիտի: Եվ Վաղինակը պատմեց հետևյալը՝ միջանկյալ պատասխանելով նաև իմ հարցերին:

Երկու-երեք րոպե տարբերությամբ նախ՝ շտապօգնությունը, ապա՝ ոստիկանությունը եկել էին իմ գնալուց անմիջապես հետո: Մինչ այդ դեպքի վայրում նոր մարդիկ չէին հայտնվել, այնտեղ էին միայն ինքը՝ Վաղինակը, կանգնած ծխում էր ինչ-որ մեկի հետ, որ կարմիր «09» ուներ, «Մերսեդեսի» վարորդը և երթուղայինի վարորդը: Բարձրահասակ, տարօրինակ գլխարկով որևէ մեկին Վաղինակը չէր տեսել: Պարզվել է, որ «Մերսեդեսի» վարորդը հայտնի մարդ է, պատգամավոր: Ոստիկանության աշխատողները նախ հապշտապ հանել են նրան մեքենայից, և շտապօգնությունը տարել է նրան հիվանդանոց: Հաջորդ շտապօգնությունը եկել է ավելի ուշ և տարել արդեն անգիտակից երթուղայինի վարորդին: Երկրորդ շտապօգնությանը զուգահեռ եկել են մի քանի ուրիշ «Մերսեդեսներով» մարդիկ և տարել պատգամավորի մեքենան: Ոստիկանները որևէ արձանագրություն չեն կազմել, միայն հեռացրել են վթարված երթուղայինը փողոցից և գնացել: Վաղինակը և կարմիր «09»-ով մարդը հետևել են նրանց:

– Ինչո՞ւ իմ գնալուց հետո դուք չփորձեցիք ազատել պատգամավորին, – կեղծ զայրույթով հարցրի ես:

– Մենք ուզում էինք, – արդարացավ Վաղինակը, – բայց նա հայհոյեց մեզ և ասաց, որ չմոտենանք: Ես դեռ պատասխանեցի նրա հայհոյանքին, թքած թե պատգամավոր չէր:

Վաղինակի վերջին ասածը բացահայտորեն սուտ էր, բայց դա կարևոր չէր: Ես մեկ անգամ էլ ճշտեցի, թե արդյոք նա վստահ է, որ իմ գնալուց հետո բարձրահասակ գլխարկովին չի տեսել, և պահակը կրկին փաստեց դա:

Ուրեմն, կասկածյալների շրջանակը նեղանում էր, այնտեղից դուրս էին գալիս Վաղինակը և «09»-ով մարդը, որովհետև նրանք մեքենային չէին մոտեցել, և մնում էր միայն բարձրահասակ գլխարկո-

վը, որը, գնալով համոզվում էի, ոչ այլ ոք էր, քան պատանի նախրապան-նկարիչը:

13 նոյեմբերի, 1999

Բանակցությունների երկրորդ օրը ես դիտմամբ շուտ գնացի և նստեցի ֆոյեի սրճարանում: Ինձ մտահոգում էր երկու բան. նախ՝ չէի՞ նեղացրել արդյոք Լիզային: Ապահովության համար զանգել էի մեկ այլ ծանոթ թարգմանչուհու և խնդրել պատրաստ լինել: Բայց հազիվ թե դրա կարիքը լիներ, որովհետև գիտեի, որ Լիզան գալու է: Միայն թե չափից ավելի չոր և գործնական էի խոսել հետը նախորդ օրը և հիմա դրանից ինձ առանձնապես լավ չէի զգում: Մտածում էի, թե չեմ դիպել արդյոք նրա ինքնասիրությանը, որ Լիզան ուներ անշուշտ, անգամ հարկ եղածից ավելի: Իսկ վիրավորել Լիզային չարժեր, նախ՝ որովհետև, անկախ ամեն ինչից, նա լավ մարդ էր, ու հետո էլ՝ կտուժեր գործը: Երկրորդը, որ ինձ մտահոգում էր, Ֆլիպ վան Վիլետի պարագան էր: Արդյո՞ք, նկատի ունենալով նախորդ օրվա շշերի կոտորածը, նա ի վիճակի կլիներ ժամանակին արթնանալ կամ առհասարակ արթնանալ: Ժամանակին արթնանալը դեռ ոչինչ, բանակցությունները կարող էին մի քիչ էլ սպասել, բայց առհասարակ չարթնանալը ինձ բոլորովին ձեռնտու չէր:

Առաջինը եկավ Վլադիմիրը: Տեսնելով ինձ սրճարանում նստած՝ նա ուրախացավ և շտապեց մոտս:

– Ինչ լավ է, որ շուտ ես եկել, – ասաց նա՝ կանգնելով գլխավերևումս,– կարևոր խոսելիք ունեմ հետդ: Երեկ ամբողջ երեկո փնտրեցի քեզ ու չգտա:

– Նստիր:

Բայց Վլադիմիրը հապաղեց նստել:

– Ավելի լավ է գնանք ուրիշ տեղ, այստեղ բանկ է:

– Նստիր, – կրկնեցի ես:

Վլադիմիրը զգուշորեն քաշեց աթոռը և նստեց այնպիսի դեմքով, ասես կասկածում էր, թե այլևս երբեք վեր չի կենալու:

– Ամբողջ գիշեր չեմ քնել, – ասաց նա, – մտածմունքից:

– Եվ ինչի՞ մասին էիր մտածում:

Վլադիմիրը նայեց շուրջը, աթոռը մոտեցրեց ինձ և շշնջաց.

– Ես վախենում եմ:

– Ի՞նչ է պատահել, – հիմա նոր ես մի քիչ լրջացա՝ կարծելով, որ խնդիրը կապված էր Օիտ Կոստոյի հետ: Արդյո՞ք Վլադիմիրին էլ էին մոտեցել: Եթե դա այդպես էր, ապա նա, իրոք, կարող էր վախից շաքարախտ ձեռք բերել:

Բայց Վլադիմիրը ընդամենը ասաց.

– Ես վախենում եմ, որ դու չափազանց շատ բան ես ուզում պարոն վան Վիլետից, և փոխարենը մենք չենք ստանա ոչինչ:

– Ահա թե ինչ, – հանգստացա ես, – և ի՞նչ ես առաջարկում:

– Ես չգիտեմ: Գուցե մենք նրանից ոչինչ էլ չուզենք և համաձայնենք նրա պայմաններին: Հեչ որ չլինի, նա մեզ աշխատավարձ հո՞ կտա:

– Դու հիմար ես, Վլադիմի՛ր: Միակ բանը, որ ինձ մխիթարում է, այն է, որ դու անգլերեն չգիտես, այլապես ես ստիպված կլինեի արգելել քո մասնակցությունը բանակցություններին:

Նա փքվեց ու նեղացածի տեսք ընդունեց: Վստահ եմ, որ վախեցավ, թե իսկապես կարող է դուրս մնալ:

– Բայց ես սովորում եմ անգլերեն... – ասաց նա:

Ֆլիպ վան Վիլետն այնպիսի տեսք ուներ, կարծես նախորդ օրը ոչ թե նա էր խմել այնքան օղին, այլ, ասենք, Վլադիմիրը: Մաքուր ածիլված, սպիտակ մազերը խնամքով սանրած, այտերը՝ կարմիր, հագին՝

մոխրագույն ընտիր կոստյում և կարմիր փայլուն փողկապ՝ նա վերելակից դուրս եկավ ճիշտ ժամը իննից հինգ պակաս և, գլխով բարևելով հավաքվածներին, ցույց տվեց բանակցությունների սրահի կողմը: Ներկա էին բոլորը, բացի Լիզայից:

2 նոյեմբերի, 1999

Փոքրիկ Ռոբկան քաշեց թևից.

– Սա իմ ամենասիրած երգն է, – ասաց նա, – «Առաջին սերը»:

Համակարգչի մոտ նստած օպերատորը ծափ տվեց, և մեզանից ապակե պատով բաժանված դիմացի սրահում սկսեց երգել Մարուսյան: Նրա գլխին մեծ, սև ականջակալներ էին, շուրթերի մոտ միկրոֆոնն էր ու, թեև ամրացված էր պատվանդանին, երգչուհին երկու ձեռքով ամուր բռնել էր այն, ասես կառչել էր նրանից, որովհետև դա էր իրենը և միայն դա և ուրիշ ոչինչ:

«Առաջին սերը» ես լսել էի նաև համերգի ժամանակ, բայց հիմա, երբ միայն վոկալն էր, և չկար երաժշտությունը, երգը բոլորովին այլ էր, ինչպես գիշերվա լռության մեջ տերևների շրշյունը:

Միայն թե Մարուսյան ինքը այդ կարծիքին չէր: Մի քանի անգամ կրկնելով միևնույն տունը՝ նա դուրս եկավ ձայնագրման սրահից և օպերատորին խնդրեց հետաձգել ձայնագրումը:

– Միգուցե մե՞նք ենք խանգարում, – հարցրի երգչուհուն, – կուզե՞ս Ռոբկայի հետ կսպասենք դրսում:

– Դրանից ոչինչ չի փոխվի, ինձ խանգարում է ոչ թե քո ներկայությունը, այլ քո գոյությունը:

– Այդ դեպքում թող Ռոբկան մնա այստեղ, իսկ ես կբարձրանամ

տանիք և ինձ վայր կգցեմ:

– Դա էլ ելք չէ, – ծիծաղեց Մարուսյան, – այդ դեպքում ինձ կխանգարի քո չգոյությունը:

– Ուրեմն ի՞նչ ես առաջարկում:

– Առաջարկում եմ...

– Կարելի է՝ ես առաջարկեմ, – միջամտեց Ռոբկան:

Մենք նայեցինք նրան:

– Առաջարկում եմ գնալ կինոն:

Մենք այդպես էլ արեցինք, միայն թե կինոն բուլդարերեն էր, և ես լավ չէի հասկանում: Փոքրիկն էլ, թարսի պես, նստել էր մեր մեջտեղում, և ինձ մնում էր միայն ծանձրույթից քնել: Բայց ես ավելի լավ ելք գտա: Մարուսյային խնդրեցի թարգմանել, իսկ դրա համար պետք էր, որ նրանք փոքրիկի հետ տեղերը փոխեին: Իսկ որպեսզի լսելի լիներ Մարուսյայի շշուկով թարգմանությունը, պետք էր, որ մենք ավելի մոտ նստեինք իրար, գրեթե հպվեինք: Այդպես արդեն ավելի լավ էր: Ու չնայած ինձ հինգերորդ դասարանցու պես էի զգում, զգում էի նաև աղջկա շունչն ու բուրմունքը:

Ֆիլմից հետո մենք Ռոբկային տուն ուղեկցեցինք և սկսեցինք քայլել Յարիգրադսկա շոսեով:

Մարուսյան պատմեց Հարավային Աֆրիկայում իր անցկացրած տարիների մասին ու երբ հասավ ծնողների ողբերգական մահվանը, հուզվեց և չկարողացավ շարունակել: Ես հարցրի, թե արդյոք Մարուսյան որևէ մանրամասներ գիտի Իգնատ Լոսկու գործունեության մասին՝ հույս ունենալով փոխել թեման: Իր նախկին բարերարի անունը լսելով՝ աղջիկը ծամածռեց դեմքը: Նա բացատրեց, որ հիմա պայմանագրով կապված է այդ սրիկային պատկանող ընկերության հետ, իր նոր ձայնասկավառակի իրավունքները պատկանում են այդ ընկերությանը, և ինքը ապրում է նրանց կողմից վարձակալվող մի բնակարանում, որից, սակայն, պատրաստվում է դուրս գալ ու տեղափոխվել մեկ այլ բնակարան, որ գտնվում է քսանհինգ համարի

տրամվայի վերջին կանգառում: Լոսկուն վերջին անգամ տեսել է Լոնդոնում եղած ժամանակ, բայց մեկ շաբաթ առաջ Լյուբոմիրա Խիտրովսկայից իմանալով, որ իր ծայնասկավառակի հեղինակային իրավունքը գնած և ներկայումս իրեն ֆինանսավորող ընկերության հետևում կանգնած է Լոսկին՝ նա հանդիպել է ընկերության տնօրենին և ասել, որ խզում է կապերը նրանց հետ: Բայց տնօրենը քաղաքավարությամբ հիշեցրել է պայմանագրի մասին, ապա բարևներ է փոխանցել Լոսկուց և ասել, որ շուտով վերջինս պատրաստվում է գալ Սոֆիա: Ինչ վերաբերում է Լոսկու գործունեությանը, ապա Մարուսյայի գիտեցածն այն էր, ինչ լսել էր նույն Լյուբոմիրա Խիտրովսկայից: Ըստ Լյուբայի, Լոսկին ուներ ադամանդի վերամշակման գործարաններ Բուլղարիայում և Մակեդոնիայում, ավիաընկերություն՝ Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում, մի քանի առևտրային ընկերություններ՝ Մեծ Բրիտանիայում և նավագնացության ընկերություն՝ Բուրգասում:

13 նոյեմբերի, 1999

Առաջինը նախատեսված էր իրավաբանի ելույթը: Դավիթը պետք է ներկայացներ համատեղ ձեռնարկություն ստեղծելու և դրա հետագա գործունեությունը ապահովելու՝ մեր երկրի օրենքով նախատեսված կարգը: Նա նաև պետք է խոսեր մեր գործի իրավաբանական կողմին վերաբերող այլ հարցերի մասին: Բայց կար մի դժվարություն. Լիզան դեռ չէր եկել: Ես մի քիչ անհանգստացած էի, բայց նաև ունեի մի ներքին վստահություն, որն ինձ թույլ չէր տալիս կանչել փոխարինող թարգմանչուհուն: Դավիթը, համենայն դեպս, սկսեց իր

խոսքն անգլերեն և բավականին հասկանալի և հստակ բացատրեց ամեն ինչ: Միայն թե ես համոզված էի, որ Ֆլիպը նրան չի լսում: Հոլանդացին անտարբեր հայացքով նայում էր մեկ ժամացույցին, մեկ սրահի դռներին:

– Մեր երկրում, ցավոք, բոլոր ոլորտներում և հատկապես լրատվության ոլորտում դեռևս առկա են օրենսդրական բացեր, բայց վստահ եմ, դա չի խանգարի մեզ ճիշտ գործելու համար,– վերջացրեց իր խոսքը Դավիթը:

Հերթը հաշվապահ-ֆինանսիստ Պողոսինն էր: Նա պետք է ներկայացներ հարկային ոլորտին վերաբերող խնդիրները: Դավթի ելույթից ոգեշնչված՝ Պողոսը հայտարարեց, որ ինքն էլ կխոսի անգլերեն: Նա վեր կացավ, ձգեց փողկապը, երկու անգամ հազաց և ասաց.

– Բարև:

Հետո կրկին հազաց, կրկին ձգեց փողկապը և շարունակեց.

– Ես հաշվապահ եմ:

Պողոսը երրորդ անգամ էլ հազաց, ձգեց փողկապը, որն արդեն պետք է որ խեղդեր նրա վիզը, բայց շարունակել չհաջողեց, որովհետև այդ պահին բացվեց դուռը և սրահ մտավ Լիզան:

Նա գեղեցիկ էր: Ես երբեք չէի տեսել Լիզային այդքան գեղեցիկ: Գուցե շպարի բացակայությունն էր պատճառը, գուցե հագուստը, որ հստակ ընդգծում էր նրա սլացիկ մարմինը, գուցե շագանակագույն վզկապը, որ չտեսնված խոսում էր աչքերի հետ, և կամ գուցե պարզապես պահի առանձնահատկությունը, երբ առանց նրա, գեղեցիկ կամ ոչ այնքան, ամեն ինչ դարձել էր անիմաստ:

– Լիզա՛ – ճչաց Ֆլիպ վան Վիլեմն այնպես, որ նրա կողքին նստած Վլադիմիրը լեղաճաք եղավ, – դու եկար:

– Այո՛:

– Գեղեցկուհիներն իրավունք ունեն ուշանալու, – միջամտեցի ես:

– Չեն թողնում՝ մարդ անգլերեն խոսի, – բողոքեց Պողոսը:

Ու ամեն ինչ իր տեղն ընկավ: Պողոսը մասնագիտորեն բացատ-

ռեց հարկերից խուսափելու մեխանիզմները, չնայած ոչ ոք նրան այդ մասին չէր խնդրել, և ոչ մի կերպ չկարողացավ բացատրել, թե ինչու է պարտադիր հարկերից խուսափելը, երբ Ֆլիպը հարցրեց այդ մասին:

Այս հարցի շուրջ երկար բանավեճ ընթացավ, որովհետև հարցն իսկապես լուրջ էր և ուներ բավականաչափ նրբություններ: Մի կողմից՝ իշխում էր այն կարծիքը, որ հաշվի առնելով մեր ապագա գործունեության ոլորտի նոր և յուրահատուկ լինելը՝ կարելի է հեշտությամբ թաքցնել եկամուտները, մյուս կողմից՝ առաջարկվում էր աշխատել մաքուր: Սա, ճիշտն ասած, իմ բացթողումն էր, և ես պարտավոր էի նախապատրաստել մեր կողմին, որպեսզի ի ցույց չդրվեին մեր ներքին տարաձայնությունները հոլանդացու մոտ: Բայց արդեն ուշ էր, Ֆլիպն անթաքույց հեգնանքով հետևում էր մեր վեճին, որի հիմնական հրահրողը, բնականաբար, Վլադիմիրն էր և, չգիտես ինչու, նրան միացած Լիզան: Նրանք առաջ էին քաշել մի փաստարկ և կանգ առել դրա վրա, ինչպես ճանճը կովի մռութի: Իսկ փաստարկի իմաստն այն էր, որ եկամուտները ցույց չտալու դեպքում մենք կարող ենք բռնվել, իսկ բռնվելու դեպքում՝ պատժվել: Նրանց նախ՝ Դավիթը, ապա՝ Պողոսը, իսկ վերջում՝ ես բացատրեցինք, որ այս հարցում գոյություն ունի ոսկե միջին, որը նախընտրում են բոլորը, բայց, միևնույն է, անօգուտ:

Սակայն սա դեռ ոչինչ, ավելի լուրջ ու տհաճ բանավեճ առաջացավ, երբ խոսքը հասավ ապագա աշխատողների աշխատավարձերին: Ֆլիպի տեսակետն այս հարցի շուրջ շատ պարզ էր. վճարել հնարավորին չափ քիչ: Եթե Հայաստանում բոլորը քիչ են ստանում, ապա կարող են քիչ ստանալ նաև մեր աշխատողները: Բայց ինչո՞ւ, պարո՛ն վան Վիլետ: Ներկայացուցչությունը Հայաստանում բացելով՝ դուք արդեն խնայում եք բավականաչափ: Ամսական լրացուցիչ մի քանի հազարը ոչինչ է ձեր ընկերության համար, իսկ ամսական լրացուցիչ մի քանի հարյուրը մեծ բան է հայաստանցու համար:

Բայց և այնպես Ֆլիպի կողմից էին նաև Վլադիմիրն ու Լիզան: Վլադիմիրի պարագան ինձ հասկանալի էր, ինչպես ամենուրեք, այստեղ էլ խոսում էր ոչ այլ ինչ, քան նրա վախկոտությունը, բայց ի՞նչ էր պատահել Լիզային:

Համենայն դեպս, պետք էր վերջացնել այս թատրոնը: Մանավանդ որ շուտով ճաշի ճամն էր, իսկ ճաշից հետո մենք պայմանավորված էինք երկու բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որոնք ոչ ֆորմալ կերպով երաշխավոր պիտի հանդիսանային մեզ համար:

Միայն թե այդ օրը ես ստիպված եղա մնալ առանց ճաշի: Թանգարան զանգահարելով՝ իմացա, որ դեռ առավոտվանից այնտեղ ինձ է սպասում Սարգիսը: Մկոյին խնդրեցի հոգ տանել, որ հոլանդացին մարդավարի ճաշի, այլապես, եթե Վլադիմիրին մնար, ճաշը կարող էր լինել կարկանդականոցում, և շտապեցի թանգարան:

Սարգսին գտա ցուցասրահներից մեկում՝ Գարգանտյուա-Կատվի հետ արծաթագործության հավաքածուն դիտելիս: Տղան նույն հագուստով էր, ինչ առաջին անգամ, և նույն գլխարկով, որը, սակայն, ձեռքին էր, իսկ մազերը կրկին խառնված էին: Բայց նա նկատելիորեն ուրախ տեսք ուներ, որ բոլորովին անհամապատասխան էր իր լուրջ ու ինքնամփոփ կերպարին: Մի բան էին ասում կոպիտ, դուրս ընկած դունչը, առնական ճակատն ու թախծոտ աչքերը, և այլ բան էր ասում շրթունքների մի անկյունում հանգրվանած ժպիտը:

– Պետք է խոսեմ քեզ հետ, – ասաց Սարգիսը:

Մենք իջանք իմ աշխատասենյակ: Ճիշտն ասած, ինքս խոսելիք ունեի նրա հետ և ուրախ էի, որ եկել է, թեպետ այսպես թե այնպես պիտի գար, որովհետև նրա նկարները դեռ այստեղ էին:

– Ես քաղաքում ոչ մի հարազատ չունեմ, – ասաց տղան, – ինձ օգնել է պետք:

Առանց ավելորդ նրբերանգների հասկացրի Սարգսին, որ կարող է ազատորեն խոսել հետս և կարող է վստահ լինել, որ կօգնեմ

իրեն՝ ինչով կարող եմ: Եվ նա խոսեց, միայն թե խոսակցությունն ավելի շատ հիշեցնում էր հարցաքննություն, և հարցաքննվողի դերում ես էի:

– Այն մարդիկ եկե՞լ են նորից:

– Այն մարդիկ, որոնց դու ոտնատա՞կ արիր:

– Այո՛:

– Նրանց փոխարեն եկան ուրիշները: Իսկ ինչո՞ւ ես դու...

– Նրանք քեզ սպառնացե՞լ են, վնասե՞լ են:

– Նման բան եղել է, բայց կարո՞ղ ես ասել...

– Նրանք էլի՞ են գալու:

– Հավանաբար:

– Նրանք քեզանից ուժե՞ղ են:

Այստեղ ես այլևս չդիմացա: Վեր կացա տեղից ու մոտեցա տղային: Ուշադիր նայեցի նրա աչքերին ու հարցրի.

– Դու վթարի ժամանակ այնտեղ էիր, այդպես չէ՞:

Սարգիսը գլխով արեց:

– Եվ դու տեղյակ ես, թե ով է վերցրել պայուսակը, այդպե՞ս է:

Նա կրկին գլխով արեց:

– Ուրեմն ասա, – ես ինձ չկարողացա տիրապետել և ձայնս հարկ եղածից ավելի բարձր հնչեց:

– Մի՛ գոռա ինձ վրա, – ասաց տղան նեղացած, – ես քեզ վատ բան չեմ արել:

Հետո վեր կացավ տեղից և քայլեց դեպի դուռը:

– Սպասիր, Սարգի՛ս, – կրկին գոռացի ես, – քեզ թվում է, դու այդպես կարող ես գնա՞լ:

– Կարող եմ, – նա կանգնեց, բայց չշրջվեց, – ինձ թվում էր, դու լավ մարդ ես, բայց քեզ նույնպես հետաքրքրում է միայն փողը:

Ես հասկացա, որ հարկավոր է հանգստանալ և, որ կարևորն է, թույլ չտալ, որ նա գնա: Բայց դա հեշտ չէր. տղան արդեն բացում էր դուռը:

– Կաց, – ասացի, – ես վատ մարդ չեմ:

Դա հենց այն էր, ինչ պետք էր ասել: Եթե ասեի՝ կաց, ես քեզ կօգնեմ, նա կգնար, եթե ասեի՝ կաց, կկրակեմ, առավել ևս կգնար, իսկ այսպես նա կանգ առավ, մի պահ մտածեց ու վերադարձավ:

Ձեռքս դրեցի նրա ուսին և հանգիստ կրկնեցի.

– Ես վատ մարդ չեմ, Սարգի՛ս, պարզապես մի հիմար կացության մեջ եմ, որը ստիպում է, որ երբեմն նյարդերս տեղի տան: Իսկ այդ հիմար կացության մեղավորը իրապես մի վատ մարդ է: Իսկական մի սրիկա: Նրան կարծեմ դու էլ ես ճանաչում:

Սարգիսը տարուբերեց գլուխը:

– Չեմ ճանաչում, բայց վստահ եմ, որ նա սրիկա է:

– Ավելի լավ, այդ դեպքում ասա ինձ, թե ինչ ես տեսել, ով է վերցրել այդ անիծյալ պայուսակը, և վերջացնենք այս պատմությունը:

– Ես, – հանգիստ ասաց տղան:

– Ի՞նչ...

– Ես մի պահ մնացի այդ մեքենայի մոտ և, երբ փորձում էի օգնել վարորդին, նրա նստատեղի հետևում տեսա այդ պայուսակը: Մտածեցի, որ փող է: Ես վերցրի այն ու հեռացա, որովհետև հիմա ինձ փող է պետք:

Նա այնպես էր խոսում, կարծես տարօրինակ ոչինչ չկար, և ամեն ինչ այդպես էլ պիտի լիներ: Բայց ինձ ժամանակ էր պետք խելքի գալու և հասկանալու, թե ինչն ինչոց է:

– Հետո ես գնացի դիմացի այգին և բացեցի պայուսակը. այնտեղ իսկապես փող էր՝ հարյուր հազար դոլար: Ամբողջ գիշեր մնացի այգում, տեսա, թե ինչպես դու վերադարձար լուսադեմին, բայց չշտապեցի գալ մոտդ, որովհետև սպասում էի՝ լույսը բացվի և տեսնեի, թե արդյոք չե՞ն փնտրի պայուսակը: Պարզվեց, որ փնտրում են, բայց ես արդեն քեզ մոտ էի:

Ես ոչինչ չասացի, գնացի կանգնեցի պատուհանի մոտ, բացեցի այն ու մի ծխախոտ վառեցի: Ա՛յ քեզ հետաքրքիր բան: Կեցցե՛ս,

Սարգի՛ս: Հարյուր հազար: Ի՞նչ է պետք անել հիմա: Համենայն դեպս մտածելու կարիք կա: Բայց նախ և առաջ պետք է ճշտել, թե ինչ է արել այս տղան փողը: Իհարկե դա պետք է անել շատ զգույշ և նրբանկատորեն, այլապես կարող է կողի ընկնել և վերջ: Ես փակեցի պատուհանը և հենվեցի լուսամուտագոգին: Բայց նրբանկատորեն չստացվեց, և ես անկախ ինձանից հարցրի.

– Դու արդեն ծախսե՞լ ես փողը:

Նա տարուբերեց գլուխը: Պարզ հարցերին նա պատասխանում էր գլխի շարժումներով: Ուրեմն փողը կա: Դա նշանակում է, որ գոյություն ունի գործելու մի քանի տարբերակ: Առաջինը՝ ստիպել տղային, որ փողը վերադարձնի տիրոջը, և դրանով վերջացնել այս տհաճ պատմությունը: Երկրորդը՝ առաջարկել Սարգսին կիսվել և օգնել նրան չոր դուրս գալ ջրից: Եվ երրորդը՝ ոչնչի չխառնվել և ասել նրան, որ այլևս աչքիս չերևա: Բայց բոլոր տարբերակներն էլ պետք էր երկար և լրջորեն կշռադատել: Միայն թե ես ժամանակ չունեի: Ժամը երկուսն անց տասը մենք պետք է լինեինք նախարարի մոտ, և մնում էր քսան րոպե:

– Ես հիմա ուշանում եմ, – ասացի տղային, – չափազանց կարևոր գործ ունեմ, ավելի կարևոր, քան սա: Արի ինձ հետ, կլինես իմ կողքին, և ավելի ուշ մենք կմտածենք և կորոշենք՝ ինչ անել: Միայն թե պետք է սանրես մազերդ և գլխարկդ էլ թողնես այստեղ:

– Լավ, – համաձայնեց Սարգիսը:



3 նոյեմբերի, 1999

Սպորտային հնաոճ "Morgan"-ը կանգ առավ «Շերատոն Բալկան» հյուրանոցի առջև, և մինչ ոսկեթել բաճկոնով շվեյցարը կբացեր վարորդի դուռը, վարորդն իջավ հակառակ դռնից:

– Այս անգլիական մեքենաները... – մռթմռթաց շփոթված շվեյցարը և վազեց մեքենան կայանելու:

Մեքենայից իջածը՝ թանկարժեք կաշվից բաճկոնով, սև ակնոցով կարճահասակ մի տղամարդ, առանց շուրջը նայելու, քայլեց դեպի հյուրանոցի մուտքը:

– Սա նա է, – ասաց Մարուսյան, – Աստվա՜ծ իմ, որքան է փոխվել:

Մենք նստած էինք քիչ այն կողմ կայանած Լյուբոմիրա Խիտրովսկայի «Շկոդայում»: Լյուբան ներսում էր՝ հյուրանոցի ճեմասրահում, ուր և պայմանավորված էր նոր եկած Իգնատ Լոսկու հետ: Մեր բարեկամ լրագրողը որոշել էր իր վրա վերցնել Իգնատ Լոսկուն պատկանող ընկերության հետ կապված Մարուսյայի խնդիրների լուծումը: Ինչպես էր նա պատրաստվում դա անել, մենք չգիտեինք:

Բայց նախ ասեմ, որ ես ինքս այստեղ հայտնվել էի բոլորովին պատահաբար: Էքսկուրսիկ թանգարանի ճանապարհին անցնում էի «Շերատոն Բալկան» հյուրանոցի մոտով և նայում էի մուտքի մոտ հավաքված թանկարժեք մեքենաներին, երբ հանկարծ նկատեցի ծանոթ փոքրիկ «Շկոդան» և նրա միջից ինձ ձեռքով անող Լյուբային: Մարուսյային տեսա ավելի ուշ, երբ մոտեցա մեքենային: Հետո Լյուբան հեռացավ և ինձ առաջարկեց նստել իր տեղը, մինչև վերադառնա: Թե ուր է գնում և ինչի համար, տեղեկացա Մարուսյայից:

Ինձ բոլորովին իմ տեղում չէի զգում, նախ որովհետև ոչնչով օգնել չէի կարող, և երկրորդն էլ, որ անկախ ինձանից խառնվել էի ինձ չվերաբերող մի գործի:

Եվ իսկապես, ինչո՞վ կարող էի օգնել, և ինչքանո՞վ էր սա ինձ վերաբերում: Ամենալավ ելքը կլիներ մի պատճառ բռնելն ու հեռանալը, բայց արդյոք դա նույնքան սխալ չէ՞ր լինի, որքան իմ հայտնվելը:

Ահա այսպես: Ի՞նչ կարելի է անել, երբ, ասենք, աչքիդ առաջ տասը հոգի անարդարաբար ծեծում են մեկին: Ոմանք կարող են իրենց հիմարի տեղ դնել և ցույց տալ, թե ամեն ինչ կարգին է, կամ որ չեն հասկանում, որ ամեն ինչ կամ ինչ-որ բան կարգին չէ: Ոմանք կարող են պարզ ասել, որ իրենք գործ չունեն մի բանի հետ, որ իրենց գործը չէ, և շվացնելով հեռանալ: Ոմանք էլ կարող են խառնվել, որ մի քացի էլ իրենք տան ծեծվողին:

Ուրեմն ո՞րն է հարցի լուծումը: Ե՛վ հարցերը, և՛ լուծումները, ի վերջո, գրեթե ամենուր նույնն են: Մակեդոնացի մի լրագրող, որի հետ մեքենայով մոտ երկու հազար կիլոմետր գնացի անցած ամռանը, ինձ համոզեց թողնել ծխելը: Եվ ոչ միայն ինձ, այլև ինքն իրեն: Մենք չծխեցինք երկու օր, այսինքն՝ քառասունութ ժամ: Պետք էր տեսնել մեծն մակեդոնացուն, որը հաղթել էր մարդկության թշնամուն: Մենք չէինք ծխում, բայց ուտում էինք, կուլ էինք տալիս, խժռում այն ամենը, ինչ կարելի էր, տասնապատիկ ավելի, քան թույլ էին տալիս մեր հնարավորությունները, մանավանդ իմ: Սակայն այդ չէի ուզում ասել: Մակեդոնացի իմ բարեկամը, որ, չգիտես ինչու, հայ չէր, փրկությունը, այսինքն՝ բոլոր հարցերի լուծումը, համարում էր աշխարհի և մարդկության կործանումը: Բայց դա չի նշանակում, որ ընդհանրապես պետք է խուսափել հարցերի լուծումից: Ո՛չ, լուծեք որքան կարող եք, Աստված ձեզ օգնական: Միևնույն է, դրանից նրանք չեն պակասի, որովհետև ամեն մի լուծում առաջադրում է մի նոր հարց:

Մեր «Շկոդա» «Ֆաբիային» մոտեցավ մի փոքրիկ մուրացկան և թակեց պատուհանը: Ես գրպաններումս մանր փնտրեցի, գտա քսան ստոտինկա և ապակին իջեցնելով՝ մեկնեցի նրան: Տղան վերցրեց մետաղադ-

րամը, բայց չհեռացավ: Ասացի, որ էլ չունեմ, բայց նա, միևնույն է, կանգնել էր՝ ձեռքը մեկնած: Բարձրացրի պատուհանը, բայց տղան դարձյալ չհեռացավ: Մարուսյան բացեց պայուսակը և դրամապանակից մի լևանոց հանեց: Երբ այն մեկնեցինք տղային, նա ժպտաց, գրպանից մի բուռ կոնֆետ հանեց, առանձնացրեց երկուսը, հավանաբար նրանք, որոնք չէր սիրում, տվեց մեզ և ուրախ-ուրախ վազեց դեպի հաջորդ մեքենան:

– Արի ուտենք, – ասաց Մարուսյան, – երբևէ այսքան թանկ կոնֆետ կերե՞լ ես:

Նա բացեց թուղթը և խրթխրթացնելով կերավ կարամելը: Ես մեխանիկորեն հետևեցի նրան:

– Համեղ է, չէ՞, – հարցրեց, – ի՞նչն է քեզ մտահոգում, դու կարծես ասեղների վրա լինես:

Անսպասելի հարցն ինձ ստիպեց պատասխանել անկեղծ.

– Անհեթեթ վիճակը, – ասացի, – չգիտեմ, թե ինչ անել:

– Ես քեզ կհուշեմ:

– Իսկապե՞ս, – ուրախացա ես, – ասա, և ես ամեն ինչ կանեմ:

– Հրավիրի՛ր ինձ մի տեղ:

Ի՞նչ կարիք կա ամեն ինչին այդքան լուրջ վերաբերվելու: Մտահոգվելու, տեղդ չգտնելու, նյարդայնանալու: Կարելի է շատ թեթև նայել անգամ իսկապես լուրջ և մտահոգիչ հարցերին, մանավանդ երբ քեզանից ոչինչ կախված չէ: Մարուսյան փաստորեն առաջարկում էր շվացնելով հեռանալը:

Բայց ես ավելի լավ գաղափար ունեի:

– Գնանք մի բան խմենք, – առաջարկեցի Մարուսյային:

– Լավ, միայն թե մի երկտող թողնենք Լյուբային:

– Կարիք չկա, հեռու չենք գնում:

Ես փակեցի մեքենայի դռները ու թևանցուկ արի աղջկան: «Շերատոն Բալկան» հյուրանոցի ճեմասրահի սրճարանում նստած էին Լյուբոմիրա Խիտրովսկան և Իգնատ Լոսկին: Մենք նստեցինք երկու սեղան այն կողմ, և ես երկու կրկնակի "Havanna Club" պատվիրեցի:

Լոսկին մեզ նկատեց բավականին ուշ, որովհետև զայրացած խոսում էր Լյուբայի հետ, որն անտարբեր սուրճ էր խմում: Վերջինս մեզ անմիջապես նկատել էր, մի պահ շփոթվել, ապա ժպտացել և ինձ աչքով արել: Մինչդեռ միլիոնատերը մեզ տեսնելով տեղից վեր թռավ, ծնկով բախվեց սեղանին և շրջեց սուրճի բաժակները:

– Ես թույլ չեմ տա ինձ այսպես ծաղրել, – գոռաց նա և աթոռի թիկնակից վերցնելով իր թանկարժեք բաճկոնը՝ քայլեց դեպի վերելակները:

Լյուբան հանգիստ վեր կացավ և տեղափոխվեց մեր սեղանի մոտ:

– Ահա, – ասաց նա՝ նույնպես զայրացած, – ոչինչ չստացվեց:

– Ի՞նչ եղավ, Լյուբա՛, պատմիր, ես անհամբեր եմ, – խնդրեց Մարուսյան:

– Երկար պատմություն է, եկեք գնանք այստեղից, չեմ սիրում «շերատոնները»:

13 նոյեմբերի, 1999

Հավանաբար ամեն մարդ էլ իր համար մի օր ձևակերպել է ճիշտ ապրելու սահմանումը: Ճնճղուկներին պարսատիկից չխփելու կամ ծերունուն տրամվայում տեղը զիջելու մասին է խոսքը, դասերը ընդունակությունների սահմաններում սերտելու, դասընկերոջը ուսուցչին չմատնելու և կռվի ժամանակ կողքին լինելու, զուգահեռ դասարանից մեկին ազնվորեն սիրելու և մեկմեկու զգացմունքի հետ չխաղալու և էլի այդպիսի բաների, որովհետև ճիշտ ապրելու սկզբունքը ձևավորվում է մեկ անգամ և հենց այդ տարիքում, իսկ եթե ոչ, ապա ձևավորվում է Վլադիմիրի պես մեկը, նրանից մի քիչ վատը կամ շատ ավելի վատը, և մարդկության մի ստվար մասը, կարծեմ, այդպիսին է: Միայն

թե սա անխուսափելի է և բավականաչափ պարզունակ անգամ այս պարզունակ պարբերության համար: Համենայն դեպս ընթրիքի ժամանակ Ֆլիպ վան Վիլետն ինձ մի բան ասաց, որի շնորհիվ հանգամանորեն փոխվեց իմ վերաբերմունքը մարդկության այդ ստվար մասին: Նախարարի հետ հանդիպումից հետո ես բացակայել էի որոշ ժամանակով՝ Սարգսի հետ հանդիպելու, և իմ բացակայության ընթացքում հոլանդացու և Վլադիմիրի միջև լուրջ զրույց էր տեղի ունեցել: Վլադիմիրը «անկեղծորեն» խոստովանել էր Ֆլիպին, որ պարտավորությունների կատարումը, որ մենք պատրաստվում ենք ստանձնել, մեր ուժերից վեր է, և առաջարկել էր իր նախնական տարբերակը: Թե ինչ էր եղել Ֆլիպի պատասխանը, վերջինս ինձ չասաց, միայն մտահոգություն հայտնեց, որ ստիպված է լինելու իսկապես վերանայել որոշ բաներ, որովհետև ի սկզբանէ անհամաձայնություն է տեսնում մեր թիմում: Ես ասացի, որ Վլադիմիրի ասածներին առանձնապես լուրջ չեմ վերաբերվում, բայց ինձ հետաքրքրում է մի բան՝ ինչ լեզվով էր վարում Վլադիմիրը իր լուրջ զրույցը: Ֆլիպը մի քիչ տատանվեց և ասաց, որ դա կարևոր չէ: Բայց ես պնդեցի՝ բացատրելով, որ երկուսս էլ հրաշալի հասկանում ենք, որ զրույցն առանց երրորդ մարդու, այսինքն՝ թարգմանչի, պարզապես անհնար կլիներ: Բայց հոլանդացին կրկին ասաց, որ դա կարևոր չէ, և խնդրեց հարյուր գրամ օղի:

Եթե այդ երեկո ես լինեի իմ «Ժիգուլիով», գուցե և չհիշեի այս պատմությունը, որովհետև «Ժիգուլին» հեշտությամբ կտեղավորվեր «Պիոներ» բարի առջև միակ ազատ կայանատեղում՝ անգամ չանհանգստացնելով այնտեղ հանգրվանած խեղճ մարմնավաճառուհուն: Բայց ես ընկերոջս «Վիլիսով» էի, որ շատ ավելի մեծ էր իմ «Ժիգուլուց», որը ես թողել էի գարաժում՝ փչացած կարբյուրատորով: Այդ առավոտյան ես լիցքավորել էի այն Բոյով Համոյի բենզակայանում՝ իմ տան մոտ: Այստեղ բոլոր գիտեն, թե ինչ է վաճառում Բոյով Համոն բենզինի փոխարեն: Աշխարհում բոլոր բոյով մարդկանցից, որոնք զբաղված են բենզինի բիզնեսով, Բոյով Համոն պետք է որ ամենահիմարը լինի: Հայտնի բան է, որ բոլոր փոքր բենզակայանների տերերն էլ բենզինի հետ մի քիչ նավթ են խառնում՝ ավելի մեծ եկամտի ակնկալիքով, բայց Բոյով Համոն, ըստ էության, նավթի հետ խառնում է մի քիչ բենզին, և կարծեմ, շատ գոհ է իրենից: Ես նրան լավ չեմ ճանաչում, բայց ճանաչում եմ նրա կնոջը: Համալսարանում մենք նրան կոչում էինք Կարկանդակ Հայկուշ: Նա վաճառողուհի էր ճաշարաններից մեկում: Երբ հարցնում էին, թե ինչ ունի նա ճաշացանկում, Հայկուշը պատասխանում էր՝ ամեն ինչ: Եվ երբ հարցնում էին, թե ինչն է ամեն ինչը, նա պատասխանում էր՝մսով կարկանդակ և ապա՝ կարտոֆիլով կարկանդակ: Եվ եթե անծանոթ մեկը սխալվեր ու հարցներ՝ այդքան բա՞ն, զայրացած Հայկուշը պատասխանում էր՝ ինչո՞ւ այդքան, կան նաև կարկանդակներ կաղամբով: Եթե Կարկանդակ Հայկուշի վերջին երկու տեսակի կարկանդակները խեղճ ուսանողներն ուտում էին ամեն Աստծո օր՝ մինչև ավարտելը, ապա մսով կարկանդակները յուրաքանչյուր ուսանող ուտում էր կյանքում մեկ անգամ, և այդպես էլ որևէ մեկը չէր հասկանում, թե ինչ է դրանց մեջ լցնում տիկին Հայկուշը մսի փոխարեն: Հիմա, սակայն, նա իր կարկանդակները վաճառում է այլ տեղ՝ մի կրպակում, իր ամուսնու՝ չաղ Հովոյի բենզակայանի հարևանությամբ, որովհետև մի օր ուսանողները մի մեծ բողոքի ակցիա կազմակերպեցին Կարկանդակ Հայկուշի դեմ, երբ մի ուսանող թունավորվեց նրա մսով կարկանդակից:

13 նոյեմբերի, 1999

Երբ Ֆլիպ վան Վիլետը, Լիզան և ես չափազանց հարուստ տպավորություններով, ինչպես հետո պիտի ասեր հոլանդացին, դուրս եկանք նախարարի մոտից, ներքևում մեզ էին սպասում Վլադիմիրը, Մկոն և քիչ հեռու կանգնած Սարգիսը, որ ցայտաղբյուրի ջրով մաքրում էր կոշիկները: Ես խնդրեցի մերոնց առաջիկա մեկ ժամն անցկացնել առանց ինձ և Սարգսին թևանցուկ արած մտա դիմացի սրճարանը:

Մինչ մտածում էի, թե ինչպես սկսել նրա հետ խոսակցությունը, Սարգիսը հարցրեց.

– Ի՞նչ գործ ունես դու այդ փողկապներով մարդկանց հետ, ի՞նչ գործ ունես նախարարների հետ, երբ ինքդ փողկապ չես կրում:

– Նա փողկապով չէր,– պատասխանեցի ես առանց մտածելու:

– Ո՞վ:

– Նախարարը:

– Իսկապե՞ս,– զարմացավ տղան:

– Ո՛չ, բայց կան երկու տիպի փողկապավորներ. ոմանց համար փողկապը բանող եզան լուծն է, ոմանց համար էլ նույնն է, ինչ մեր թանգարանի կատվի վզից կապ գցես: Խոսքն իհարկե պաշտոնյաների մասին է, որոնց փողկապը եթե կապված է օձիքին, բայց չի կապում ձեռքերը, ապա ամեն ինչ կարգին է:

– Իսկ մյուսնե՞րը, որ պաշտոնյաներ չեն:

– Նրանք նույնպես երկու տիպի են. ոմանք այն մոգիներն են, որ գիտեն՝ կթլպատվեն ու երբեք ցուլ չեն դառնա, ոմանք էլ դարձյալ

կատու են, որ ինչ ուզում, այն անում են:

Սարգիսը մտածեց և, չգիտեմ ինչու, ասաց.

– Ես հովիվ եմ:

Ես էլ մտածեցի և հարցրի.

– Ուրեմն քո ինչի՞ն է պետք հարյուր հազար դոլարը: Մանավանդ որ այն քոնը չէ:

Եվ նա բացատրեց.

– Հիշո՞ւմ ես, թանգարանում քեզ ասացի, որ ինձ օգնել է պետք, որ այստեղ ես ոչ ոք չունեմ: Օգնել պետք է ոչ թե ինձ, այլ հորս, որ ծանր հիվանդ է: Նա կիսաստված է: Բայց կիսաստվածները նույնպես մահկանացուներ են: Եվ հայրս շուտով կմահանա, եթե չօգնենք նրան: Նրա հիվանդությունը չունի բուժում: Միակ ելքն օրգանի փոխպատվաստումն է: Բայց դա բարդագույն խնդիրների հետ է կապված: Նախ՝ վիրահատական գործողությունը շատ թանկ արժի, բայց հիմա արդեն դա կարևոր չէ, որովհետև անհրաժեշտ գումարը կա, և երկրորդ՝ գործողությունը կատարվում է միայն Ֆրանսիայում և ԱՄՆ-ում: Կլինիկաների անունները ես իմացել եմ, բայց նրանց հետ հարկավոր է կապվել, ինչը ես չեմ կարող անել:

Ահա թե ինչ: Հիմա արդեն կարծես ամեն ինչ պարզ է դառնում: Նախ փակվում են փողի հետ կապված հարցերը: Փողը ոչ ենթակա է վերադարձվելու, ոչ էլ առավել ևս կիսվելու: Եվ խնդիրն ամենևին մարդկայնությունն ու բարությունը չէ: Որևէ մեկը աշխարհում չի կարող ստիպել այս կորյունին հրաժարվել իր ուզածից: Նա քաջ է, վեհանձն և ուժեղ: Նա պատրաստ կլինի դիմելու ցանկացած միջոցի, որպեսզի պաշտպանի իր կիսաստծուն: Եվ հիարկե պետք է օգնել նրան:

– Մինչև քո հարցին անդրադառնալը կուզեի, որ դու մի կարևոր բան հասկանաս, Սարգի՛ս,– ասացի ես,– նախ պետք է լուծել փողի հետ կապված խնդիրը: Դու մոռանում ես, թե ումն է այն իրականում և ինչ պայմաններում է հայտնվել քեզ մոտ: Եվ գլխավորը՝ մոռանում ես իմ պարագան: Փողի իրական տիրոջ հիմնական թիրախը հիմա ես եմ: Նա համոզված է, որ ես ինչ-որ բան գիտեմ, և հետապնդում է ինձ՝ կիրառելով բավակա-

նաչափ չոր մեթոդներ: Մինչև այսօր ես կռիվ էի տալիս նրա հետ՝ համոզված լինելով, որ ճիշտ եմ: Բայց հիմա արդեն ճիշտը նա է, որովհետև ես իսկապես գիտեմ, թե ում մոտ է իր փողը: Որքանո՞վ հեշտ կլինի պահել գաղտնիքը: Կարծում եմ, ես պատրաստ եմ տղամարդավարի քեզ օգնելու, բայց կան տեխնիկական հարցեր, որոնք չափազանց բարդ են: Ինձ իսկապես հետապնդում են և ամեն վայրկյան կարող են նորից անհանգստացնել: Անգամ հնարավոր է, որ հիմա դրսում մեզ սպասողներ կան: Հուսանք, որ այդպես չէ: Ուրեմն արի նախ մտածենք այս հարցի շուրջ: Իհարկե, հաշվի առնելով այն, որ առայժմ քո մասին ոչ ոք ոչինչ չգիտի, դու կարող ես պարզապես չերևալ իմ շրջակայքում, և քեզ վրա դուրս չեն գա: Բայց դա այն դեպքում, եթե ես ինքս կարողանամ այս ամենի տակից դուրս գալ: Դե ինչ, ի՞նչ կարծիքի ես այս ամենի մասին:

Իմ խոսելու ողջ ընթացքում Սարգիսը զբաղված էր ուտելով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկուսս էլ այդ օրը չէինք ճաշել՝ ես մսաբլիթներ էի պատվիրել՝ թվով ութը, և մինչ ես խոսում էի, տղան զարմանալի արագությամբ ոչնչացրեց դրանցից վեցը և դեռ մնացածն էլ կուտեր, եթե ես ժամանակին խոսքը չփոխանցեի նրան: Սարգիսը թևքով մաքրեց բերանը և մի կողմ հրեց ափսեն:

– Մենք մի շուն ունենք՝ Ատա անունով: Ատան հորս շունն էր, և հայրս սիրում էր նրան: Մի օր գայլերի հոմակը դաժանորեն վիրավորեց Ատային անհավասար մարտում, երբ շունը հսկում էր մեր ոչխարները: Հայրս նրան արյունաքամ գտավ վաղ առավոտյան և որոշեց չթողնել, որ կենդանին տանջվի: Տարավ նրան սարերը, կրակեց և վստահ, որ շունը սատկել է, արցունքն աչքերին վերադարձավ տուն: Մինչդեռ իրականում փամփուշտը դիպել էր կենդանու ազդրին: Որոշ ժամանակ անց հարևան գյուղից մեկը գտավ Ատային հոգեվարքի մեջ: Նա կապեց նրա վերքերը և սկսեց խնամել ու համբերատար բուժել շանը: Երկու ամիս անց Ատան կազդուրվեց և փախավ՝վերադառնալով հորս մոտ: Հետո հայրս հիվանդացավ:

Սարգիսը որոշ ժամանակ լռեց, հետո ասաց.

– Չգիտեմ ինչու հիշեցի Ատային: Նախ ինձ օգնիր վիրահատության հաշվով, հետո նրանց ասա, որ փողն ինձ մոտ է, ես չեմ նեղանա:

– Հիմարություն,– ասացի ես:

– Երբ տեսա պայուսակը «Մերսեդեսի» հետևի նստատեղին,– շարունակեց Սարգիսը,– համոզված էի, որ այնտեղ փող է և հենց այնքան, որքան ինձ հարկավոր է: Քաղաք գալիս ես մտադրվել էի չվերադառնալ, մինչև չլուծեմ ինձ հուզող հարցը: Ես պատրաստ էի ամեն ինչի: Իմացա բոլոր բարեգործական կազմակերպությունների հասցեներն ու հերթով այցելեցի դրանք: Բայց անօգուտ, լսելով հիվանդության անունը՝ ինձ ասում էին, որ ոչնչով օգնել չեն կարող, կամ լավագույն դեպքում առաջարկում էին օգնել դեղերով: Միայն թե դեղերով Տիկին Սեթյոնը մեզ արդեն օգնել է, և դա հարցի լուծում չէ: Հետո որոշեցի թալանել մեկնումեկին: Բայց որտեղի՞ց ճարեի մարդ, ո՞ւմ մոտ կլիներ այդպիսի գումար: Թանգարանի մոտակայքում կա մի ռեստորան, ուր գալիս են թանկարժեք մեքենաներով: Ես կոտրեցի մի քանի մեքենաների ապակիները՝ ինքս էլ հասկանալով, որ ներսում ոչինչ չեմ գտնելու: Հետո միացավ հաջորդ մեքենայի ազդանշանը, և ես ստիպված էի փախչել: Վազեցի դեպի այգին ու թաքնվեցի այնտեղ: Որոշեցի դարանակալել, հարձակվել հարուստ անցորդների վրա և խլել մոտները եղած փողը: Միայն թե այս մեկը չկարողացա անել, ոչ թե որ վախենում էի բռնվելուց, այլ պարզապես չկարողացա: Հետո լսեցի վքարի ձայնը, շտապեցի այդ կողմ և... Մնացածը դու գիտես:

Երանի թե չիմանայի այդ մնացածը: Ամեն ինչ եղած լիներ նույնությամբ, Սարգիսը վերցրած լիներ պայուսակը, բայց ես ներկա եղած չլինեի դեպքին և ոչինչ չիմանայի: Բայց իրականությունն այլ էր, և հիմա պետք էր մտածել ճիշտ քայլեր անելու ուղղությամբ:

– Ահա թե ինչ եմ մտածում,– ասացի տղային,– մենք կդիմենք Տիկին Սեթյոնին, կասենք, որ վիրահատության համար անհրաժեշտ գումարը կա և կխնդրենք նրան զբաղվել հորդ ԱՄՆ տեղափոխելու և վիրահատությունը կազմակերպելու հարցերով: Դու կգնաս գյուղ և

այլևս չես երևա այս կողմերում:

– Իսկ դո՞ւ:

– Իսկ ես կուտեմ այս մսաբլիթները, որ դու մեծահոգաբար թողել ես ինձ:

5 նոյեմբերի, 1999

Երեկոյան իմ հյուրանոցի ռեստորանը լիքն էր բազմապիսի գիտնականներով, որոնք մասնակցում էին այստեղ անցկացվող ինչ-որ սիմպոզիումի: Ես իջել էի ընթրելու, իսկ հետո պիտի գնայի երկաթուղային կայարան՝ մեկնելու ծովափնյա Բուրգաս քաղաքը, որտեղ պիտի շարունակվեր ցուցահանդեսը: Ազատ սեղան չգտնելով՝ արդեն պատրաստվում էի դուրս գալ, բայց մոտեցավ ծանոթ մատուցողը և ասաց, որ կտեղավորի ինձ մի սեղանի մոտ, որը թեև պատվիրված է, բայց պատվիրողները չեն եկել: Ես մեկ անգամ ևս համոզվեցի, որ թեյավճարների հաշվով պետք է առատաձեռն լինել: Միայն թե մատուցողն ակնհայտորեն շտապել էր: Չէի հասցրել դեռ կտրել ախորժաբույր կոտլետի առաջին կտորը, երբ նա մոտեցավ՝ պոչից չորս հոգի, և բացատրեց, որ վերջիններս հենց սեղանը պատվիրողներն են և պիտի նստեն ինձ հետ: Ես ինքս առարկություն չունեի, բայց պարզվեց, որ դեմ է եկածներից մեկը՝ նիհարակազմ, խիստ բարձրահասակ մի սկանդինավ՝ սմոքինգով և թիթեռնիկով:

– Ես հրավիրել եմ հյուրերիս եզրափակիչ ընթրիքի,– ասաց նա մի լեզվով, որ կարելի էր համարել բոլոր լատինական լեզուների խառնուրդը,– իսկ դուք ինձ եք ներկայացնում այս կոտլետով մարդուն:

Ես քաղաքավարությամբ վեր կացա և հիմար մատուցողին ասացի, որ ընթրիքս ուղարկի իմ համարը:

– Սպասեք,– ասաց սկանդինավը,– մենք պետք է քայլեր ձեռնարկենք, որ այս անփույթ տղան անհապաղ հեռացվի աշխատանքից:

Նա նկատի ուներ մատուցողին, որը գլխիկոր կանգնել էր, ինչպես դասից փախած աշակերտը փողոցում պատահաբար հանդիպած դասղեկի առջև:

– Կարիք չկա,– ասացի,– նա կարծում էր, որ դուք չեք գա:

– Ի՞նչ,– զայրացավ բարձրահասակը,– նա իրավունք չունի կարծել, նա պիտի անի այն, ինչ նրան պատվիրում են:

– Նա ուզեցավ ինձ լավություն անել, և ես չեմ կարող նրան մատնել:

– Դուք պարտավոր եք, այլապես ես կմտածեմ, որ սա ծրագրված քայլ էր մեր սիմպոզիումի մասնակիցների դեմ:

– Մտածեք ինչ ուզում եք, պարոն, միայն թե ես զգուշացնում եմ, որ եթե դուք բողոքեք այս տղայի դեմ, ես կասեմ, որ նստել եմ ձեր սեղանին հակառակ նրա առարկության:

– Միևնույնն է, նա իրավունք չուներ սպասարկել:

Ես ուզում էի շարունակել, թեպետ վեճը կարող էր այնքան երկարել, որ ուշանայի գնացքից, բայց հանկարծ մի բան հիշեցի:

– Ներեցեք, դուք երկրաբա՞ն եք,– հարցրի սկանդինավին:

– Ես երկրաբանական գիտությունների դոկտոր եմ, Նորվեգիայի Թագավորական ակադեմիայի անդամ, Նյու Յորքի...

– Բավական է,– ընդմիջեցի ես ու դարձա մատուցողին,– հավաքիր իրերդ, նա, միևնույնն է, իր ուզածին կհասնի:

Ես ճանաչում էի մի երկրաբանի, որը ստիպեց ուղղաթիռի օդաչուին վայրէջք կատարել թռիչքից շատ չանցած, որովհետև կարևոր բան էր մոռացել օդակայանում: Այս դեպքը պատահեց Սիբիրում, ուր ուղղաթիռը պատրաստվում էր Տոմսկից թռչել Մալախովո փոքր ավանը: Գեդեոն Սեմյոնովիչը, որ դատելով հագուստից և մոտն ունեցած սարքավորումներից՝ վստահաբար երկրաբան էր, նստած էր իմ առջև և կարդում էր «Իզվեստիայի» վերջին համարը՝ գնված

Տոմսկի օդակայանում: Թռիչքից տասը րոպե հետո Գեդեոնը հանկարծակի ցատկեց տեղից ու սկսեց գոռալ՝ «Վասյայի կերը, Վասյայիս կերը»: Հետո սկսեց կոտրել օդաչուների խցի դուռը՝ աղերսելով վերադառնալ օդակայան: «Վասյան կմեռնի, իմ Վասիլյոկը կմեռնի»,– գոռում էր նա: Օդաչուներից մեկը բացեց դուռը և բացատրեց, որ նրա խնդրանքն անհնար է կատարել: Ապա սկսվեց իսկական ներկայացում: Երկրաբանը հերթով մոտենում էր ուղևորներից յուրաքանչյուրին և օգնություն խնդրում: Վերջիններս, այդ թվում և ես, կարծելով, թե Վասյան նրա որդին է, և հասկանալով, որ դժվար է մանկական կեր գտնել փոքր ավանում, մեկ մարդու պես միացանք երկրաբանին ու սկսեցինք նախ խնդրել, ապա սպառնալ օդաչուներին: Վերջապես մեր պահանջը բավարարվեց, և ուղղաթիռը վայրէջք կատարեց նույն օդակայանում, որտեղից թռել էր քիչ առաջ: Գեդեոն Սեմյոնովիչը վազեց դեպի շենքը և քիչ անց վերադարձավ «Փեդիգրիի» մի հսկա տուփով: Ուղևորներն ու օդաչուները բնականաբար հայհոյանքներ չխնայեցին ոչ երկրաբանի, ոչ էլ, առավել ևս, Վասյա անունով նրա շան համար:

5 Նոյեմբերի, 1999

Գնացքի պատուհանները կարծես աշնանային բնանկարների շրջանակներ լինեն: Մեկում մի կաչաղակ է պոկվել փայտե հոսանքասյունից և գնացքին համընթաց, մինչև մյուս հոսանքասյունին նստելը, աներևույթ ու անջնջելի մի գիծ քաշել հարթավայրին իջած ջինջ հորիզոնին: Երկրորդում սոճիների անտառն է, և հեռվում՝ ծառերի արանքից երբեմնակի հրդեհվող մայր մտնող արեգակը: Ապա՝ երկաթգծերին մոտիկ, փոքր խմբերով թախծող եգիպտացորենի խամրած ցողունները՝ այն, ինչ հունձքից հետո մնացել է արտեզրին: Հետո՝ մրսած գետակը, երկաթյա կամուրջն ու կրկին՝ արեգակը, որն արդեն արտացոլվում է խրճիթների երկնագույն ապակիներում:

Հետաքրքիր է դիտել աշնանային բնանկարների այս ցուցահանդեսը, որոնք, թվում է, նկարիչը երկնել է մենակությունից ու տխրությունից:

Պատուհանի մոտ կանգնած՝ ես տեսնում եմ վայրի սագերի այս չուն: Ես մոռացա, որ մենակ չեմ այս օտար երկրում:

– Ստարա Զագորայում կկանգնենք տասնհինգ րոպե,– միջանցք դուրս գալով՝ հայտարարում է շիկահեր ուղեկցորդուհին:

Փոքր, հրաշալի այս քաղաքն ինձ ծանոթ է: Երկու տարի առաջ ես այստեղ հյուրընկալվել եմ իմ հայրենակից Մարատ Աբաբեկյանի տանը:

Քառորդ ժամվա ընթացքում, մինչ վագոններից դուրս կթափվեն թարմ կարկանդակի ու գարեջրի ախորժակ պահած Սոֆիա-Բուրգաս գնացքի ուղևորները, մինչ տխուր նկարիչը կդպավորվի նոր աշնանային մոտիվներով ու կփորձի փարատել իր վիշտը կառամատույցի թոհուբոհում, կարելի է մտովի տեղափոխվել կայարանի շենքից այն կողմ՝ եղևնիների պուրակում տեղավորված իմ հայրենակցի առանձնատունը:

Ատամնաբուժական սարքավորումների ու դեղամիջոցների գործարանի փոխտնօրեն Մարատ Աբաբեկյանի հետ ծանոթացա երկու տարի առաջ Սոֆիայի դեղորայքի առք ու վաճառքով զբաղվող մի կազմակերպության գրասենյակում: Ես արդեն ստորագրել էի «Ակրելօքսիդի» մի խմբաքանակի գնման ակտը և սպասում էի պահեստապետին: Սակայն Մարատը փոխեց դեպքերի ընթացքը: Առանց ինձ որևէ բան ասելու, նա նախ ճանապարհեց վերջապես բարեհաճած պահեստապետին, ապա ծալեց ու գրպանը դրեց ակտը և, մինչ ես կհասկանայի, թե ինչ է տեղի ունենում, փաստորեն չեղյալ հայտարարեց գործարքը: Հետո անշտապ ավարտեց իր գործերը, ինձ թևանցուկ դուրս տարավ և տեղեկացրեց, որ մեկնում ենք Ստարա Զագորա: Ես բացատրեցի, որ հաջորդ օրվա համար ինքնաթիռի տոմս ու-

նեմ, բայց նա արդեն բացել էր մեքենայի դուռը և վրաս հառել այնպիսի մի հայացք, որն ի զորու էր ինքնաթիռների չվերթեր փոխել:

Թեմայից շատ չշեղվելու համար ասեմ, որ ես արդեն գլխի էի ընկել, թե ինչ է տեղի ունենում: Ատամնաբուժական դեղամիջոցները, որ պատրաստվում էի գնել Սոֆիայի կազմակերպությունից, արտադրում էր Ստարա Զագորայի գործարանը, և Մարատը, լինելով դրա փոխտնօրենը, ինքն էր հանձնում այդ դեղամիջոցները կազմակերպություններին: Հիմա մենք մեկնելու էինք գործարան, և Մարատն իմ վճարելիք միևնույն գումարի դիմաց պահեստից դուրս էր գրելու գրեթե կրկնակի ապրանք:

Սակայն դեղորայքի առք ու վաճառքը մեծ գլխացավանքների հետ է կապված և, բացի այդ, ուղևորներն արդեն վերադառնում են վագոնները:

Երկու տարի առաջ ես խոստացա դեղորայքը վաճառելուց հետո անմիջապես վերադառնալ՝ նոր խմբաքանակ տանելու, բայց չափազանց եկամտաբեր թվացող գործը գլխովին տապալվեց, և ես չկարողացա կատարել խոստումս: Մինչ այդ ուրիշ տեղից գնածս դեղորայքը, պարզվեց, որ ժամկետանց է, և ստիպված եղա դրանք նետել աղբարկղն ու հաշվել պարտքերս: Պետք էր Մարատին բացատրել, որ ատում եմ դեղորայքը, առևտուրն ու հատկապես ամեն տեսակ բացատրություն: Ստարա Զագորայում առանձնատուն գնելուց առաջ նա ստիպված է եղել մեկընդմիշտ հրաժարվել ատամնաբույժի իր մասնագիտությունից:

Ինչպե՞ս է դա լինում: Ինչպե՞ս է լինում, որ իմ հայրենակիցները ստիպված հրաժարվում են իրենց մասնագիտություններից: Ատամնաբույժները դառնում են գործարանների փոխտնօրեններ, իսկ փոխտնօրեններն ու նույնիսկ տնօրենները՝ ատամնաբուժական դեղամիջոցներ ներմուծողներ: Ի՞նչ դեղեր կլլեց Հայաստանը անցած այս մի քանի տարիներին: Գիտահետազոտական, գիտափորձարարական, գիտամատչելի մեր անկախության գրպաններն այնքան բարեգործական աղբ խցկեցին, որ բժշկությունը, կարծեմ, իրեն էշից

ընկածի պես է զգում: Վիրավորանքն իր հերթին, բայց ցավերն այնքան անտանելի էին, որ ստիպված էին դեղատոմսեր գրել բարեգործականների հայեցողությամբ:

Երևանի իր սեփական տանը տեղադրված Մարատի ատամնաբուժական մեքենան 92-ին հոսանքի տատանումների հետևանքով շարքից դուրս է եկել՝ մտքով իսկ չանցկացնելով, որ մի օր, շատ հնարավոր է, նույնիսկ ատամնաբույժի կինը ատամնացավ ունենա: Մասնագիտական պատվախնդրությունը թույլ չի տվել Մարատին կնոջը տանել ուրիշ ատամնաբույժի մոտ: Առավոտյան նա հավաքել է իրերը և Սոֆիայի ինքնաթիռի տոմս գնել, որտեղի պոլիկլինիկաներից մեկում նրան վաղուց ատամնաբույժի բազկաթոռ էին առաջարկում: Տիկնոջ ատամնացավի ճիչերը հնչել են ինչպես հրաժեշտի երգ: Մինչ այդ հոսանքի տատանումներից արդեն շարքից դուրս էին եկել սառնարանը, հեռուստացույցը, նյարդերը, մի խոսքով՝ նրա համբերությունը:

Սոֆիայում կնոջն ու էլի շատերին բուժելուն զուգահեռ Մարատն աշխատել է ատամնաբուժական նոր մեքենայի, դեռևս Երևանում սկսած իր նախագծի վրա և ավարտելով՝ ներկայացրել Ստարա Զագորայի գործարանին: Ապա գործարանում աշխատելու առաջարկ է ստացել և նախագծային բաժնի աշխատակցից հասել է մինչև փոխտնօրենի պաշտոնին:

Ատամնաբուժական դեղամիջոցները երկու տարի առաջ Մարատն ինձ տվեց գործարանային գներից ավելի էժան և գիշերն ինձ հյուրընկալեց իր տանը: Հաջորդ օրը ճանապարհելիս նա ինձ մի ծրար տվեց՝ խնդրելով Երևանում փոխանցել ծնողներին:

Նրանց Երևանի տունը ինձ թվաց Ստարա Զագորայի տան շարունակությունը, ավելի ճիշտ՝ հակառակը: Մարատի մորը խնդրեցի ցույց տալ որդու աշխատատեղը:

– Այստեղ ոչնչի ձեռք չենք տվել,– բացատրեց մայրը՝ բացելով փոքրիկ աշխատասենյակի դուռը,– մտածում ենք, որ մի օր կգա ու

նորից կգբաղվի իր գործով: Քանի տարի է անցել, բայց Մարատի հաճախորդները նրան չեն մոռացել:

Օրարի մեջ, որը ես բերեցի, բնականաբար, փող էր: Հոսանքի տատանումները Մարատի տանն այլևս փչացնելու բան չունեն: Բայց սեփական տատանումից մաշվում են ծնողների սրտերը:

Համենայն դեպս, Մարատի Ստարա Զագորայի տան դուռը ես հիմա չեմ թակի: Նկարչի վիշտն այդպես էլ չփարատվեց, և կտավի վրա ոչ մի պայծառ երանգ չավելացավ: Մինչդեռ գնացքն արդեն շարժվում է՝ դանդաղ ու ալարկոտ, և բեռնասայլին լծված պառավ ու ուժասպառ ձիերի հևոցի պես խուլ հնչում է շչակը:

Շիկահեր ուղեկցորդուհին կանգառից հետո բացում է զուգարանները և, վագոն մտնելով, փնտրում նկարչին, որը կարկանդակից ու միօրինակ գորշությունից սրտխառնուք ուներ:

Մի քանի ժամից Բուրգասն է:

13 նոյեմբերի, 1999

Երեկոյան՝ Ֆլիպ վան Վիլետի հետ «Պիոներ» բարից դուրս գալուց հետո, ես ինձ այնպես էի զգում, կարծես ձեռնակապով կապված եմ ինձ բռնած ոստիկանին, որն ինձ ման է տալիս հանցագործության վայրերով, ուր սակայն բոլորովին ուրիշն է հանցանք գործել: Եվ որպեսզի տպավորությունս էլ ավելի չխորանա, առաջարկեցի Ֆլիպին երեկոն շարունակել մենակ կամ ուրիշ մեկի հետ՝ պատճառաբանելով, որ ինձ լավ չեմ զգում և պետք է տուն գնամ: Ֆլիպը, որ մինչ այդ բոլորովին լուռ էր, հավանաբար տարված իր մտքերով, ինձ լսելուց հետո ուշքի եկավ և կտրուկ փոխվեց:

– Եվս մի տեղ,– խնդրեց նա մի այնպիսի տոնով, որ հասկացա՝ չեմ կարողանա մերժել,– ուզում եմ խմել, ատում եմ մենակ խմելը:

– Լավ,– համաձայնեցի ես,– բայց պայմանով, որ անկեղծորեն կասեք երկու բան. ի՞նչն է ձեզ մտահոգում, և ի՞նչ է սպասվում մեր գործին, մանավանդ այսօրվա զարգացումներից հետո:

– Առաջին հարցիդ կարող եմ պատասխանել հենց հիմա: Ինձ մտահոգում է Լիզան: Իսկ գործի հաշվով առայժմ ոչինչ չեմ կարող ասել, որովհետև դեռ որոշում չեմ կայացրել,– նա բացեց «Վիլիսի» դուռը,– դու գալի՞ս ես ինձ հետ խմելու, թե՞ ոչ:

Մենք գնացինք «Պոպլավոկ»: Չգիտեմ ինչու: Միշտ էլ այդպես է եղել: Երբ քեզ նարինջ պետք չէ, ամեն քայլափոխի նարինջ են վաճառում, բայց երբ նարնջի ախորժակ ունես, ոչ մի կերպ չես ճարում: Երբ մեքենայի անիվը ծակվում է, հիշում ես, որ նախորդ օրը տասը տեղ վուլկանացում ես տեսել, բայց հատկապես որտեղ, չես հիշում: Երբ խմել չես ուզում, շուրջբոլորդ սրճարանների ու բարերի լուսային ազդագրեր են, երբ ուզում ես, հիշում ես միայն «Պոպլավոկը»:

Եվ հենց այստեղ էլ մենք հանդիպեցինք երկու մարդու, որոնց ամենևին պարտադիր չէր, որ հանդիպեինք:

Առաջինը Էդուարդն էր՝ Լիզայի այդ ժամանակվա ոչ այն է ընկերը, ոչ այն է ընտրյալը: Ավելի ճիշտ կլինի ասել՝ կավալերը, որին, ես գիտեի, աղջիկը լրջորեն սիրահարված էր: Ասենք, դա կարելի էր հասկանալ. Էդուարդը չափազանց համակրելի տղամարդ էր, անգամ կարելի է ասել՝ գեղեցիկ: Բարձրահասակ, ձիգ մարմնով, տրենաժորային դահլիճում աճեցրած մկաններով, խնամված սպիտակ մաշկով և հորթի լիզած սև մազերով: Այդ ամենը իհարկե ակնառու էր, բայց կար նաև ակնառու մեկ այլ բան, որ այդ երեկո նրա կողքին նստած գեղեցկուհին բոլորովին էլ Լիզան չէր: Հենց այդ պատճառով էլ, մեզ տեսնելով՝ Էդուարդը ցնցվեց: Ցավալին այն էր, որ նրան ճանաչում էի ոչ միայն ես, այլև Ֆլիպը և հենց Լիզան էր նրան ներկայացրել Ֆլիպին հասկացնել տալու համար, որ իր սիրտն ազատ չէ, և Ֆլիպը հավանաբար

դա հասկացել էր, ինչպես նաև այն, որ այսպիսի մրցակցի հետ անիմաստ է ոտք գցելը:

Երբ Գեդեոն Սեմյոնովիչը ուղղաթիռ վերադարձավ «Փեդիգրիի» հսկա տոպրակով, միակ մարդը, որ նրան չէր հայհոյում, Մարիո Ֆասսինին էր: Մարիոյին ես նկատել էի դեռ թռիչքուղում՝ ուղղաթիռ նստելուն սպասելիս: Պատճառը նրա արտաքինն էր, որ ինձ հիշեցրեց տղամարդ մոդելներին օծանելիքի գովազդներից: Նա շրջում էր առանց գլխարկի -30 աստիճանին, հավանաբար չփչացնելու համար սանրվածքը: Մենք ծանոթացանք ավելի ուշ՝ Մալախովոյում, և ես իմացա , որ Մարիոն ոչ թե մոդել է, այլ լուսանկարիչ, որին Սիբիր է գործուղել մի ամերիկյան ամսագիր: Նա խոստովանեց, որ երբեք չէր համաձայնի այս գործուղմանը, եթե իմանար, որ այստեղ իսկապես այսքան ցուրտ է: Մենք երկու օր մնացինք Մալախովոյում, և նա ոչ մի անգամ դուրս չեկավ մեզ հյուրընկալած ուսուցչի տնից և չարեց ոչ մի լուսանկար: Բայց և այնպես, Մարիոյի դեմքը դեռ երկար կրեց Սիբիրի սառնամանիքի հետևանքները: Նա միացավ ինձ Մոսկվա վերադառնալիս, և մենք մի քանի օր միասին ճամփորդեցինք գնացքով: Առաջին երկու օրերին նա զբաղված էր երկու բանով. ջանադրաբար տրորում էր դեմքն ինչ-որ քսուքներով և պատմում իր դոնժուանական արկածների մասին: Երրորդ օրը Պերմում մեր կուպե եկան նոր ուղևորներ: Դենիսը և Վառվառան ամուսիններ էին, որ մեկնում էին Մոսկվա՝ ման գալու: Ես որսացի Մարիոյի հայացքը, երբ Վառվառան հանեց մորթե գլխարկը և արձակեց ոսկի մազերը: Այն նման էր մսոտ ճնճղուկին ուղղված քաղցած կատվի հայացքի: Իսկ կատուն իսկապես քաղցած էր: Վառվառան ընդունեց հայացքը չարաճճի մի ժպիտով, իսկ ամուսինը, բոլորովին անտարբեր, ճամպրուկից հանեց օղու շիշը և հարցրեց, թե ով կդնի հաջորդը, երբ այն վերջանա:

Առաջարկը դուրեկան էր, և աստիճանաբար սեղանին շշերի մի շքերթ սկսվեց, և մեկ այլ՝ ոտքերի շքերթ՝ սեղանի տակ: Մինչ բաժակը լցվում էր բաժակի հետևից, և շիշը վերջանում էր շշի հետևից, Վառվառայի թաթը ավելի ու ավելի վերև էր մագլցում Մարիոյի ոտքի վրայով և վերջապես հանգրվանեց մի տեղ, ուր ոչ մի լուրջ բան տեղի չէր ունեցել հարաբերականորեն երկար ժամանակ: Երբ հերթական շշից հետո Դենիսը քնեց, Վառվառան ծածկեց ամուսնուն նրա վերարկուով և նստեց Մարիոյի մոտ կամ, ավելի ճիշտ, Մարիոյի վրա: Վերջինս, չնայած նույնպես խմած էր, բայց ակնհայտորեն վախեցավ և փորձեց խուսափել անխուսափելիից: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես Ռուսաստանում ճամփորդելու բավականաչափ փորձ ունեի և գիտեի, որ եթե կինն այդքան վստահ է իր վրա, ապա պետք չէ ամուսնուց վախենալ: Ուստի ես որոշեցի նրանց մենակ թողնել և գնալ վագոն-ռեստորան՝ շարունակելու իմ սեփական շքերթը: Բայց դժբախտաբար կուպեի դուռը բացվեց շրխկոցով, և Դենիսն արթնացավ: Նա բացեց աչքերը, բարձրացրեց գլուխը և տեսավ կնոջն իտալացի լուսանկարչի հետ համբուրվելիս, որին ճանաչում էր մի քանի ժամ: Լացակումած ձայնով ասաց. «Եթե մուժիկն ինչ-որ բան շատ է ուզում, ապա նա պետք է հասնի իր ուզածին»: Եվ քնեց: Ես դրսից փակեցի դուռը, այս անգամ կամաց, և հայտնվելով վագոն-ռեստորանում ու ևս մի բաժակ խմելով, հասկացա, թե որքան շատ եմ սիրում ռուսական գնացքները:

13 նոյեմբերի, 1999

Երկրորդ անցանկալի մարդը, որ այդ երեկո «Պոպլավոկում» էր, Օիտ Կոստոն էր: Նրան նկատեցի մի քիչ ուշ, երբ արդեն նստել էինք, և Ֆլիպը պատվիրել էր իր օղին, իսկ ես՝ իմ ռոմը, այլապես կարելի էր մի պատճառ գտնել և չմնալ այստեղ: Բանն այն է, որ ես պատկերացում չունեի, թե ինչ կլինի այն բանից հետո, երբ պատգամավորն ինձ տեսնի այստեղ: Վստահ չէի, որ նա իրեն թույլ չի տա որևէ սխալ արտահայտություն կամ շարժում, իսկ եթե այդպես լիներ, վստահ չէի, որ կտիրապետեմ ինձ: Հիմնական մտավախությունս այն էր, որ կարող եմ տհաճ պատմության մեջ ընկնել Ֆլիպի ներկայությամբ: Պատգամավորը նստած էր մի քանի սեղան այն կողմ, իր պես երկու հոգու հետ, որոնցից մեկը, գիտեի, որ բարձրաստիճան զինվորական է: Քանի դեռ իմ նորընծա թշնամին ինձ չէր նկատել, ես համենայն դեպս աթոռս շրջեցի այնպես, որ թիկունքով լինեմ նրան: Թիկնապահներ կարծես թե չկային, և գոնե դա ինձ մխիթարում էր:

Երբ բերեցին խմիչքը, հոլանդացին մի կում արեց և դիմեց ինձ.

– Ես երկընտրանքի առջև եմ. մի կողմից գտնում եմ, որ տղամարդավարի չի լինի, եթե Լիզային որևէ բան ասենք մեր տեսածի վերաբերյալ, բայց նաև կարծում եմ, որ նա պարտավոր է իմանալ, որ այս սրիկան իրեն խաբում է:

Նա հարցական հայացքով նայեց ինձ, բայց ես ոչինչ չասացի: Եթե ասեի, պիտի ասեի, որ հիմա ինձ շատ ավելի հետաքրքրում է մեկ այլ «ծիտ», բայց Ֆլիպը դա չէր հասկանա:

– Լիզան ազնիվ աղջիկ է և ունի շատ ուրիշ արժանիքներ,– շարունակեց նա,– և ես չէի ուզենա, որ նա դժբախտ լիներ:

– Ես նույնպես սրտանց կամենում եմ նրան երջանկություն,– ասա-

ցի՝ հույս ունենալով, որ հոլանդացին վերջապես կփոխի թեման:

Իրականում ես վիրավորված էի Լիզայից: Վստահ էի, որ նա նույն միամիտ ու հիմար դավադրության մեջ է Վլադիմիրի հետ, և չէի հասկանում, թե ինչն է նրան ստիպել ինձ դավաճանել: Միակ կասկածանքս այն էր, որ Լիզային թվացել է, թե ես իրեն, եթե կարելի է այդպես ասել, զոհաբերում եմ հոլանդացուն՝ իմ գործի հաջողության համար: Այդ դեպքում նա իրավունք ուներ ինձանից վրեժխնդիր լինելու: Բայց մի՞թե ես շիտակ և անկեղծ չէի եղել նրա հետ: Մի խոսքով, անհասկանալի բաներ կային, և կարելի կլիներ հենց այդ պահից անհանգստանալ և մի քիչ դիվանագիտություն խաղալ Ֆլիպի հետ, եթե չլիներ Օիտ Կոստոյի ներկայությունը: Մինչդեռ հիմա ես ոչ միայն ինձ ասեղների վրա էի զգում, այլև ինձ թվում էր, որ ուր որ է ինչ-որ մեկը հետևից ինչ-որ բանով կխփի գլխիս, և անկախ ինձանից՝ որպես մեկ շրջվում էի: Եվ հերթական անգամ, երբ շրջվեցի, տեսա, որ Օիտ Կոստոյենց սեղանին է մոտեցել ծորի հանդիպումից ինձ ծանոթ այն մարդը, որ նման էր ինժեների և որ այդ հանդիպման ժամանակ խոսեց միայն վերջում և ինձ ժամանակ տվեց մտածելու: Նա ինձ նկատեց և գլխով արեց: Ես նույնպես գլխով արի և շրջվեցի՝ այլևս համոզված, որ սկանդալն անխուսափելի է: Բարձրացրի բաժակս և դիմեցի Ֆլիպին.

– Խմե՞նք:

– Խմենք,– չառարկեց նա:

Մենք խփեցինք բաժակները, խմեցինք, և ես չէի հասցրել ցած դնել իմը, երբ զգացի մեկի ձեռքը ուսիս: Շրջեցի գլուխս և տեսա Օիտ Կոստոյի ընկերոջը՝ «ինժեներին», որ ժպտում էր սիգարետը շրթունքներից կախված:

– Անուշ լինի,– ասաց նա:

Քաղաքավարության կանոնները պահելով՝ վեր կացա և բարևեցի նրան:

– Ծանոթացեք,– ասացի,– պարոն վան Վիլետը իմ գործընկերն է,

նա հայերեն չի խոսում:

– Սերոբ Սերոբյան,– ներկայացավ նա՝ ձեռքը մեկնելով տեղից վեր կացած Ֆլիպին,– «Գոստ» կոնցեռնի գործադիր տնօրեն:

Ես թարգմանեցի և Ֆլիպի հետ միաժամանակ հրավիրեցի նրան նստել:

– Շնորհակալ եմ, ես չեմ խմում,– ասաց նա կոտրված անգլերենով և, ինձ նայելով, շարունակեց հայերեն,– վաղը ժամը մեկին եղիր այստեղ, զրուցենք:

Ապա գլխով հրաժեշտ տվեց մեզ և հեռացավ:

6 նոյեմբերի, 1999

Բուրգասի կայարանում ինձ դիմավորեց Բուլղարիայի էթնոգրաֆիկ թանգարանից իմ գործընկերը, որ եկել էր նախորդ օրը մեքենայով՝ ցուցահանդեսի բացման հետ կապված գործերն ավարտելու: Ըստ ծրագրի՝ ես պետք է մեկնած լինեի նրա հետ, բայց գերադասել էի մեկ օր ավել մնալ Սոֆիայում, չնայած հետո կրկին վերադառնալու էի այնտեղ: Հիմա էլ, երբ մենակ թափառում էի դատարկ ու տխուր աշնանային քաղաքով, որ ամառային բուռն սեզոնից հետո նիրհում էր, ինչպես նոր կթված կովը, ինձ թվում էր, թե այստեղ են միայն ոտքերս: Մարդիկ, որ անցնում էին կողքովս, նստած էին սրճարաններում կամ սպասում էին ավտոբուսի, նույնպես տխուր էին, մռայլ ու կարծես ինձ պես ոտանի: Ես ժպտացի գնումներով տուն վերադարձող մի տիկնոջ, բայց նա շրջեց գլուխը, ժպտացի իր կրպակի մոտ կանգնած ժամագործին, բայց նա ավելի մռայլվեց և ինչ-որ բան փնթփնթաց, ժպտացի տաքսի կանգնեցնող մի օրիորդի, և նա ինձ

կոպտեց: Մոտեցա մի տաքսոֆոնի և, գրպանիցս հանելով ծոցատետրս, հավաքեցի Մարուսյայի համարը:

– Ո՞ւր ես կորել,– ասաց նա,– ամբողջ օրը զանգում եմ հյուրանոց, դու այնտեղ չես:

– Դու ինձ փնտրե՞լ ես,– զարմացա ես:

– Մտածեցի, որ կարող ենք մի տեղ գնալ:

– Հրաշալի է,– բացականչեցի ես,– արի գնանք...

Ու հանկարծ հիշեցի, որ մենք իրարից վեց հարյուր կիլոմետր հեռավորության վրա ենք: Բայց անմիջապես էլ աչքովս ընկավ փողոցի գովազդային վահանակը՝ «Ռեստորան «Ծովային Ֆորտունա»՝ ամենահամեղ ու բազմազան ծովային կերակուրը»:

– Արի գնանք «Ծովային Ֆորտունա», այնտեղ տալիս են ամենահամեղ ծովային կերակուրը:

– Ես սիրում եմ ծովային կերակուր,– ոգևորվեց Մարուսյան,– որտե՞ղ է այդ ֆորտունան:

– Բուրգասում:

Գծի հակառակ կողմում լռություն տիրեց, և ես արագ շարունակեցի.

– Բայց պետք չէ, որ դու կրկնես իմ սխալը և գաս գնացքով, գնացքը հասնում է տասներկու ժամում, մինչդեռ եթե դու հիմա տաքսի նստես, այստեղ կլինես հինգ ժամից, այսինքն՝ յոթին, և ես քեզ համար պատվիրած կլինեմ լավագույն ձկները:

Տաքսոֆոնի խցից դուրս գալով ես ժպտացի շան հետ զբոսնող մի ծերունու. երկուսն էլ ժպտացին ի պատասխան:

Ես գիտեմ, որ կան ժպտացող և չժպտացող քաղաքներ: Օրինակ՝ ամերիկյան քաղաքներ մեկնելուց առաջ ամենակարևորը ժպտալ սովորելն է: Եթե նույնիսկ դուք աշխարհում ամենաշատ պրոբլեմներ ունեցող մարդն եք, եթե նույնիսկ դուք տխուր եք, եթե նույնիսկ ձեր բերանում ատամ չկա, դուք պարտավոր եք

ժպտալ իմանալ: Դա իսկապես կարևոր է, որովհետև դուք մեկնում եք ժպտացողների քաղաք:

Այստեղ բոլորը ձեզ ժպտալու են: Ծանոթ, անծանոթ, սևամորթ, մեքսիկացի, ծերունի, գեղեցկուհի... Եվ ժպտալու են անկեղծորեն: Հերիք է, որ ձեր հայացքները հանդիպեն: Եվ դուք պարտավոր եք անկեղծորեն ժպտալ ի պատասխան: Ծանոթին և անծանոթին, սևամորթին և մեքսիկացուն, ծերունուն և մյուսներին:

Ինձանից մեկ օր պահանջվեց դա հասկանալու համար, երբ առաջին անգամ այստեղ էի: Մինչ այդ նախ մտածում էի, որ ինձ ժպտացող մարդկանց հետ գուցե ծանոթ եմ, հետո ինձ թվաց, թե այստեղ հիմնականում խելագարներ են ապրում, հետո աչքիս տակով նայեցի խանութի պատուհանում իմ արտացոլանքին՝ ծիծաղելի բան փնտրելով արտաքինիս մեջ: Բայց ամեն ինչ կարգին էր, և մարդիկ շարունակում էին ժպտալ:

Ամեն ինչ տեղն ընկավ այն բանից հետո, երբ ես առաջին անգամ ժպտացի ինձ ժպտացող սևամորթ տիկնոջը: Նա հենց նոր մտել էր վերելակ:

– Հա՛յ,– ասաց տիկինը, ինչը նշանակում է բարև, և շարունակեց ժպտալ:

– Հա՛յ,– ասացի ես, ինչը նույնպես նշանակում է բարև, և շարունակեցի ժպտալ:

Այդպես ժպտացինք իրար, մինչև վերելակը կանգնեց առաջին հարկում: Հետո ժպտալով իրար հրաժեշտ տվեցինք և բաժանվեցինք:

Եվ ես հասկացա, որ չափազանց ուշ էի հասկացել չափազանց պարզ բանը: Բայց ես մեղավոր չէի: Չէ՞ որ ես եկել էի տխուր երկրից, և ժամանակ էր պետք տխրությունը դեմքիցս թափ տալու: Թեկուզ ժամանակավոր, թեկուզ մինչև վերադարձս: Հետո արդեն հայրենիք վերադառնալով՝ գիտեի, որ ժա-

մանակ կպահանջվեր, որպեսզի թափ տայի դեմքիցս ժպիտը և հագնեի տխուր մարդու դիմակը, որովհետև անկարելի է անընդհատ ժպտալ մի տեղ, ուր շուրջդ բոլորը տխուր են:

Իսկ այն սևամորթ տիկինը, որ ինձ վերելակում ասաց «հայ» ու ժպտաց, փաստորեն բացեց աչքերս: Ամբողջ երկու ամիս ես ժպտում էի ինձ պատահող յուրաքանչյուր մարդու և ասում՝ «հայ»: Դա ստացվում էր արդեն ինձանից անկախ, ամենևին կարիք չկար ջանք գործադրելու:

Միացյալ Նահանգներից Երևան վերադառնալիս իմ չվերթը անցնում էր Մոսկվայով, ուր ուղևորները օդանավ փոխելու համար ստիպված են սպասել յոթ ժամ: Հայերի համար դա սովորական է: Մեր ժողովուրդը սովոր է սպասել: Նույնիսկ սիրում է: Որովհետև, եթե սպասելիք կա, դա արդեն մեծ բան է մեզ համար: Ես ինքս, դժբախտաբար, գործ ունեի Մոսկվայի կենտրոնում և զրկվեցի հայրենակիցներիս հետ յոթ ժամ ճամպրուկների վրա նստած սպասելու հաճույքից:

Դեկտեմբեր էր, Մոսկվան սառած էր և սպասում էր Պետական դումայի ընտրություններին: Ես ավարտել էի գործս և մոսկովյան գազանանոցի պարիսպների մոտով քայլում էի դեպի մետրոյի մոտակա կայարանը: Պարիսպներին ամրացված էին կուսակցությունների և դաշինքների նախընտրական ցուցանակները՝ ամենաաներևակայելի խոստումներով, և թվում էր, թե բոլոր պատգամավորության թեկնածուները ներսում են՝ գազանանոցում, և պատրաստ են տարբեր կերպ վարվել, եթե դու համաձայն չես այդ խոստումներին. արջերը՝ շրջել պարիսպը և խեղդել քեզ իրենց արջի թաթերում, կապիկները՝ բարձրանալ պարսպին և ճաղերի արանքից քաշել մազերդ, իսկ հարյուրամյա անգղերը՝ թառել պարսպին և սպասել, մինչև որ իրենց հակառակորդների հարձակումից հետո հնարավորություն կունենան գործ ունենալ այլևս լեշի հետ:

Ինչևէ, գազանանոցի մուտքը հակառակ կողմում էր, և ես չգիտեի՝ արդյո՞ք այն բաց է: Թեպետ, եթե անգամ բաց լիներ, մտնելու ժամանակ չէի ունենա, որովհետև երբ վերջապես հասա մետրոյի կայարանին և նայեցի ժամացույցիս, հասկացա, որ ուշանում եմ թռիչքից: Ստիպված էի տաքսի փնտրել:

Մայթեզրին՝ մի ծոխ «Ջիփի» մոտ կանգնած էր մուշտակով և մորթե գլխարկով մի հարյուր տոկոսանոց հայ և ուշադիր նայում էր աչքերիս: Կողքով անցնելիս ես, անկախ ինձնից, ժպտացի և բարևեցի: Գուցե դա բոլորովին չզարմացներ անծանոթ տղամարդուն, եթե ես բարևած լինեի հայերեն կամ առնվազն ռուսերեն: Բայց, հավատացնում եմ՝ կրկին անկախ ինձանից, բարևեցի անգլերեն ավելի ճիշտ՝ ամերիկերեն և ժպտալով ասացի՝ «հա՛յ»:

– Հայ եմ, ախպեր,– զարմացավ տղամարդը,– ի՞նչ կա:

Ես կծեցի շրթունքս՝ հասկանալով, որ հիմար վիճակի մեջ եմ ընկել: Հարկավոր էր ինչ-որ բան ասել: Եվ ես ասացի երկրորդ հիմարությունը.

– Չգիտե՞ս, ախպե՛ր,– հարցրի,– գազանանոցը բա՞ց է:

Մուշտակով տղամարդուն ակնհայտորեն դուր չեկավ իմ հարցը:

– Չհասկացա,– վրդովվեց նա,– գազանանոցի պահա՞կն եմ, ինչ է:

Ես ներողություն խնդրեցի և ուզում էի հեռանալ, բայց տղամարդը կանգնեցրեց ինձ:

– Մի րոպե,– ասաց նա,– ինչի՞դ է պետք գազանանոցը:

Ես ասացի, որ առանձնապես պետք չէ, պարզապես ուզում էի իմանալ:

– Չէ՛ եթե հարցնում ես, ուրեմն պետք է,– եզրակացրեց նա:– Իսկ եթե պետք է, կիմանանք: Իմ լավ ախպերը գազանանոցի մոտ «օբյեկտ» ունի, զանգենք հարցնենք:

ես ոչ մի կերպ չկարողացա նրան հետ կանգնեցնել այդ մտքից, և նա գրպանից հանեց հեռախոսն ու զանգեց:

– Բարև, Սըմոն,– ասաց նա՝ դիմելով, ըստ երևույթին, «օբյեկտի» տիրոջը,– որտե՞ղ ես:

Չգիտեմ, թե ինչ պատասխանեց Սըմոն, բայց, ամենայն հավանականությամբ, նա «օբյեկտում» չէր, որովհետև տղամարդն այսպես շարունակեց.

– Կարո՞ղ ես զանգել իմանալ՝ գազանանոցը բաց է, թե չէ,– ասաց նա և մի պահ ընդհատեց խոսքը, որովհետև, ըստ երևույթին, Սըմոն հարցրեց, թե նրա ինչի՞ն է պետք գազանանոցը:– Այստեղ մի լավ ախպեր կա, ուզում է իմանալ:

Չգիտեմ ինչ էր մտածում իմ մասին «Ջիփով», մուշտակով և մորթուց գլխարկով այդ տղամարդը, բայց մի բան պարզ էր, որ որոշել էր ինձ օգնել: Հեռախոսը նորից գրպանը դնելով՝ ասաց.

– Մի քիչ սպասենք, Սըմոն կիմանա՝ կզանգի:

Բայց խնդիրն հենց այն էր, որ ես չէի կարող սպասել: Տոմսերի հաշվառումը պետք է արդեն սկսված լիներ, իսկ Մոսկվայի կենտրոնից մինչև «Շերեմետևո» օդանավակայան առնվազն մեկ ժամվա ճանապարհ է: Միայն թե ի՞նչ կարող էի ասել իմ ակամա բարերարին: Որ ուշանում եմ ինքնաթիռի՞ց: Այդ դեպքում ինչո՞ւ եմ հետաքրքրվում գազանանոցով: Ասեի, որ ուշանում եմ գազանանոցի՞ց: Այդ դեպքում նա վստահաբար ինձ գազանանոց կտաներ: Եվ ես ոչինչ չասացի: Փոխարենը մենք վերջապես ծանոթացանք: Տղամարդու անունն էր Ժոռ, և պարզվեց, որ մետրոյի շրջակայքի առևտրի կրպակների մեծ մասը նրանն են: Ժոռն ինձ անվերջ հարցեր էր տալիս, ես պատասխանում էի աչքի տակով նայելով ժամացույցիս, իսկ Սըմոն համառորեն չէր զանգում:

– Ի՞նչ կա-չկա Հայաստանում,– հնչեց Ժոռի հերթական հարցը:

Այստեղ ես թույլ տվեցի երրորդ սխալը: Ասացի, որ եկել եմ Լոս Անջելեսից, որպեսզի խուսափեմ պատմել, թե ինչ կա-չկա Հայաստանում: Պետք էր տեսնել Ժոռի դեմքը, երբ նա լսեց Լոս Անջելես անունը:

– Ի՞նչ,– բացականչեց նա,– ինչպե՞ս թե Լոս Անջելեսից:

Քիչ էր մնում կասկածեի, որ իսկապես Լոս Անջելեսից եմ եկել, մինչև որ նա չշարունակեց.

– Իմ բոլոր լավ ախպերները Լոս Անջելեսում են: Գուգոն, Գագոն, Վզգոն, Վալոդը...– Նա երկար թվեց Լոս Անջելեսի իր լավ ախպերների անունները և դեռ երկար կթվեր, եթե բարեբախտաբար այդ պահին չզանգեր Սըմոն:

Ժոռը որոշ ժամանակ խոսեց նրա հետ, ապա, առանց հեռախոսն անջատելու, դարձավ ինձ.

– Ախպե՛ր, գազանանոցը փակ է,– ասաց նա,– բայց եթե պետք է, կարող ենք բացել տալ:

Մնացածը հետաքրքիր չէ: Ես իհարկե չհամաձայնեցի, որ գազանանոցը բացել տան, և բարեբախտաբար չուշացա ինքնաթիռից:

14 նոյեմբերի, 1999

Երբ մենք նախապատրաստվում էինք պարոն վան Վիլետի այցին, և ես հավաքում էի մեր թիմը, ինձ թվում էր, որ բավական է հաշվի առնել մարդկանց պրոֆեսիոնալիզմը: Եվ ամեն ինչ կարծես գերազանց էր ընթանում: Ոչ նեղ մասնագիտական առումով, որ վերաբերում էր լրագրությանը, ոչ տեխնիկական առումով, որ վերաբերում էր բարձր

տեխնոլոգիաներին, ոչ իրավաբանական, ոչ ֆինանսական առումներով և ոչ էլ, առավել ևս, ժամանցին վերաբերող մասով մենք ոչ միայն թերացումներ չունեցանք, այլև ամեն ինչ կազմակերպվեց բարձր մակարդակով: Ավելին՝ հոլանդական կողմին տրվեցին երաշխիքներ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, և, կարծես թե, որևէ խանգարող բան չկար, որ բանակցությունները հաջող ավարտ ունենային: Ճիշտն ասած՝ դրան ես հիմա էլ չէի կասկածում, և այն, որ «Իվենթս» ընկերությունը տարածաշրջանի իր մասնաճյուղը բացելու է հենց Հայաստանում, ես համարում էի այլևս եղելություն: Այն, որ այդ մասնաճյուղի հիմնադիրը և բաժնետերը հայկական կողմից լինելու է «Շաբաթ» ՍՊԸ-ն, նույնպես գրեթե կասկած չէր հարուցում: Բայց կար մի ցավալի հանգամանք: Ես տեսնում և հասկանում էի, որ պարոն վան Վիլետի համար մենք, այո՛, պրոֆեսիոնալ ենք, վստահելի, բայց այլևս ամուր թիմ չենք, և նա շատ լավ գիտակցում է, որ իրադրության տերն ամբողջովին ինքն է և կարող է առանց տատանվելու առաջադրել իր պայմանները թե՛ մեր լիազորությունների ու պարտականությունների շրջանակի, թե՛, որ ամենակարևորն է, փայաբաժինների մասով: Պարոն վան Վիլետը, որ խմում և զվարճանում էր երեկոները, ցերեկները բոլորովին ուրիշ մարդ էր՝ իր գործին հրաշալի տիրապետող խելացի և ճկուն բիզնեսմեն: Ես համոզված էի, որ այս մի քանի օրերի ընթացքում նա ըստ արժանվույն գնահատել է մեր կարողություններն ու կապերը և դրանք հաշվի առնելով՝ եկել է այն եզրակացության, որ իր իսկ ընկերության շահերից ելնելով գերադասելի է մասնաճյուղը բացել հենց Երևանում: Բայց նա դեմ չէ նաև հետագայում այստեղից գերօգուտ ստանալուն, ինչը կդրսևորվի մեր կողմի բաժնետերերին հնարավորինս քիչ բաժնեմասեր տրամադրելով և ընկերության ապագա աշխատակիցներին հնարավորինս քիչ վճարելով: Եվ հիմա արդեն, տեսնելով հակասությունները մեր թիմի ներսում, նա կարող է հեշտությամբ օգտագործել դրանք և հանձինս մեզ ունենալ ոչ միայն պրոֆեսիոնալ և վստա-

հելի, այլև ենթարկվող և կամազուրկ գործընկերներ:

Այլ հարց է, թե ինչը տեղի տվեց հակասությունների մեր ներսում, և ինչու մենք հանկարծ խոցելի դարձանք հոլանդացու համար: Ես դույզն-իսկ կասկած չունեի, որ Ֆլիպն ինքը, լինելով հմուտ դիվանագետ, անմիջապես հասկացել էր, որ կուռ թիմը իրեն այնքան էլ ձեռնտու չէր և որոշել էր կիրառել *բաժանիր, որ տիրես* սկզբունքը: Նա նախ փնտրել և գտել էր մեր աքիլլեսյան գարշապարը և խուտուտ տվել Վլադիմիրի ոտնատակը: Գուցե սեփական ոտնատակը կամ չգիտես թե էլ ինչը հոժարակամ դեմ էր տվել հենց ինքը՝ Վլադիմիրը, բայց դրանից ոչինչ չէր փոխվում: Համենայն դեպս բանակցությունների երրորդ օրը՝ առավոտյան, նա կրկին ժամանակից շուտ էր եկել և հյուրանոցի մուտքի առջև սպասում էր ինձ: Հավանաբար ճիշտ կլիներ բարևելու փոխարեն հասցնել նրա մռութին, և այդ դեպքում գուցե դեպքերն այլ ընթացք ստանային: Բայց նա այնքան մեղավոր ու վախեցած տեսք ուներ, որ ինձ թվաց, թե զղջացել է նախորդ օրվա իր արածի համար:

– Կարևոր բան ունեմ ասելու, կարո՞ղ ենք խոսել,– հարցրեց նա:

– Գիտեմ, թե ինչ ես ասելու,– չոր պատասխանեցի ես,– լսել անգամ չեմ ուզում: Իմ դիրքորոշումը դու կիմանաս քիչ հետո, բոլորի ներկայությամբ:

– Ի՞նչ դիրքորոշում:

Ես ոչինչ չասացի ու մտա հյուրանոց: Բայց նա քայլեց հետևիցս և թևանցուկ արեց ինձ:

– Մի րոպե, նա այնտեղ է:

– Ո՞վ:

– Մկոն, նա շուտ է եկել և քեզ է սպասում:

– Ի՞նչ կապ ունի Մկոն:

– Ես կարծում եմ, որ մենք պետք է անհապաղ հեռացնենք նրան մեր թիմից:

Ես ուշադիր նայեցի Վլադիմիրի դեմքին, որովհետև ինձ թվաց, թե

նա ցնդել է:

– Ես քեզ նախօրոք զգուշացնում եմ,– անվրդով շարունակեց նա,– Մկոն փչացնելու է ողջ գործը: Նա սխալ բաներ է անում, և պարոն վան Վիլետը կարող է սխալ պատկերացում կազմել մեր մասին:

Չհասցրեցի որևէ կերպ արձագանքել, որովհետև այդ պահին սրահում հայտնվեց ինքը՝ Մկոն: Նա արագ քայլերով մոտեցավ մեզ և առանց բարևելու ասաց.

– Շուտ նայեք վերելակի կողմը, տեսեք՝ ինչ ոտքեր ունի այն աղջիկը:

Վլադիմիրը ճպացրեց ու հեռացավ: Ես համենայն դեպս նայեցի աղջկա կողմը, որն իսկապես լավ ոտքեր ուներ: Այսինքն՝ Մկոյի ճաշակին ես չէի էլ կասկածում, բայց հիմա դրա ժամանակը չէր: Ի՞նչ էր տեղի ունեցել այս երկուսի միջև: Այն, որ Մկոն առիթը բաց չէր թողնում Վլադիմիրին ծաղրելու, ես նկատել էի վաղուց, բայց գիտեի, որ նա դա անում էր կատակով, և լուրջ չէի վերաբերվում:

– Լսի՛ր, Մկո՛, ի՞նչ է եղել քո ու Վլադիմիրի միջև,– հարցրի ես:

– Իմ ու դրա՞,– զարմացավ նա,– իսկ ի՞նչ կարող է լինել: Չլինի՞ կարծում ես՝ փոխել եմ սեռական կողմնորոշումս:

– Ես լուրջ եմ ասում:

– Ոչինչ էլ չի եղել, իսկ ի՞նչ պիտի լիներ:

– Չգիտեմ, գուցե կոպտել ես նրան, ինչ-որ բան ես ասել:

– Միշտ էլ կոպտում եմ ու բան եմ ասում:

Ես ուզում էի լրիվ ուրիշ բան ասել, բայց անկախ ինձանից բերանիցս թռավ.

– Եվ լավ էլ անում ես:

Երբ բոլորը հավաքվեցին, Ֆիլիպը հայտարարեց, որ բանակցությունները մտել են վճռական փուլ, և Հոլանդիայի իր բաժնետերերի հետ խորհրդակցելուց հետո ինքն արդեն որոշումներ է կայացրել ու պատրաստ է դրանց հետ մեզ ծանոթացնել:

5 մարտի, 1996

Երբ Սլավա Չինովիևիչ Կացմանը որոշեց գալ Մոսկվա, Սինսինատիում գտնվող աղբի վերամշակման իր գործարանը հանձնեց օգնական Ջեյմսին, Կոլորադոյում գտնվող իր ռանչոն՝ երեք հարյուր կովերով, վաթսուն ձիերով և երկու ջորիով, հանձնեց օգնական Դրյուին, ռանչոյի մոտակայքում վերջերս հիմնած յոգուրտի արտադրամասը հանձնեց օգնական Ռոջերին, Նյու Ջերսիում գտնվող նավագնացական ընկերությունը երկմտանքով հանձնեց տիկնոջը, հագավ հատուկ այս նպատակով գնած մուշտակը և մեկնեց օդանավակայան՝ գրպանում ունենալով Սինսինատի - Նյու Յորք - Մոսկվա - Նյու Յորք - Սինսինատի չվերթի ինքնաթիռի տոմսը: «Շերեմետևո» օդանավակայանի ավտոմեքենաների վարձույթի սրահ Սլավա Չինովիևիչը և ես մտանք գրեթե միաժամանակ ու միաժամանակ մոտեցանք աշխատակցուհուն: Հետո սկսեցինք փոխադարձ սիրալիրություններ ցույց տալ՝ իրար զիջելով հերթը: Ես համառորեն հետ էի քաշվում՝ հաշվի առնելով տղամարդու տարիքը, իսկ նա, չգիտես ինչու, որոշել էր, որ ես առաջինն եմ եկել: Մինչ մենք վիճում էինք, աշխատակցուհին ապարդյուն փորձում էր մեզ ինչ-որ բան ասել: Վերջապես նա չդիմացավ ու գոռաց, որ վարձույթի ծառայությունում ընդամենը մի մեքենա է մնացել: Հետո լռեց ու սկսեց ժպտալ՝ սպասելով, որ մեր վեճի ուղղությունը կտրուկ կփոխվի:

Այդպես էլ եղավ: Երկուսս էլ, տարիք ու հերթ մոռացած, արագ հանեցինք մեր անձնագրերն ու արագ մեկնեցինք աշխատակցուհուն: Չգիտեմ դեպքերն ինչ ընթացք կստանային, եթե

այդ պահին ես չնկատեի, որ իմ՝ հիմա արդեն մրցակցի անձնագիրը ռուսական չէր: Դա անմիջապես նկատեց նաև աշխատակցուհին:

– Դուք ԱՄՆ-ի քաղաքացի՞ եք,– հարցրեց նա ու, դրական պատասխան ստանալով, մի հայացք նետեց վրաս, որը նշանակում էր, թե հարցը փակված է:

Ամերիկացին ինձ մեկնեց ձեռքն ու ներկայացավ:

– Իմ ինքնաթիռը վայրէջք կատարեց կես ժամ առաջ, իսկ ես հայրենիքում չեմ եղել քսաներեք տարի, հասկանո՞ւմ եք:

– Հասկանում եմ,– ասացի ես, սակայն չհարցրի, թե դա ի՞նչ կապ ունի ավտոմեքենայի հետ և, դատելով ազգանունից, ի՞նչ կապ ունի Ռուսաստանը նրա հայրենիքի հետ:

Մինչդեռ աշխատակցուհին արդեն սկսել էր լրացնել թերթիկը՝ ըստ ամերիկացու անձնագրի տվյալների:

– Ձեր կրեդիտ քա՛րտը,– դիմեց նա տղամարդուն:

Իսկ ես արդեն պատրաստվում էի կռիվ սարքել, առանց իմանալու, որ այստեղ ավտոմեքենա վարձելու համար պետք է կրեդիտ քարտ ունենալ, որը ես չունեի: Իմ հայրենիքում կրեդիտ քարտերը այդ ժամանակ նույնն էին, ինչ Ամերիկայում՝ գութանը: Եվ եթե իմ հայրենիքում գութանով հող վարողներն իմանային, որ Ամերիկայում կրեդիտ քարտերով ոչ միայն ավտոմեքենա են վարձում, այլև խանութում կարտոֆիլ են գնում...

Բայց մի որպե, կարծես այստեղ վեճ է առաջացել: Ի՞նչ, այս ամերիկացի՞ն էլ չունի կրեդիտ քարտ: Նա ասում էր, որ կվճարի կանխիկ:

– Ի՞նչ է նշանակում՝ ձեզ մոտ կանխիկ չեն վճարում: Այդպիսի կարգ չկա: Ես ատում եմ կրեդիտ քարտերը: Վերցրեք այս փողը և տվեք մեքենայի բանալիները:

– Շատ եմ ցավում, բայց չեմ կարող,– աշխատակցուհին քիչ էր մնում լաց լիներ:

– Այդպիսի կարգ չկա,– պնդում էր ամերիկացին,– կանչեք տնօրենին:

Երբ տնօրենը եկավ, և կրքերը հանդարտվեցին, աշխատակցուհին դիմեց ինձ.

– Հիմա կարող եք վերցնել մեքենան:

– Ոչ մի դեպքում,– ասացի,– ես միանում եմ պարոն Կացմանին ու հրաժարվելով մեքենայից՝ արտահայտում եմ իմ բողոքը ձեր ֆիրմայի դեմ:

Հետո Սլավա Զինովիևիչի հետ մենք Մոսկվա վերադարձանք տաքսիով: Ճանապարհին նա ինձանից խորհուրդ էր հարցնում, թե որ հյուրանոցում կարելի է հաստատվել: Ասաց, որ այստեղ շատ քիչ ծանոթներ ունի:

– 1973-ին, երբ ես հեռանում էի, հեռանում էի մի քաղաքից, որն ինձ չէր հասկացել, և որից նեղացած էի, և հիմա տեսնում եմ, որ ես ճիշտ էի:

Նա ճակատը հենել էր տաքսու դռան ապակուն: Ես հասկանում էի, որ իմ հարցերի ժամանակը չէր: Սակայն ի՞նչ էր տեսնում այս ամերիկացին իր ծննդավայրում, որ նաև համարում էր իր հայրենիքը, քսաներեք տարվա բացակայությունից հետո: Նա երբեմն շրջվում էր ու զարմացած նայում վարորդին, կարծես ուզում էր ասել՝ այս ո՞ւր եք ինձ տանում, ես ձեզ ասել եմ՝ Մոսկվա:

Իսկ իմ գլխում շարունակում էին նորանոր հարցեր ծագել, որոնց պատասխանները չգիտեի, որ ստանալու էի ինքնաբերաբար: Այդ պահին կարելի էր ընդամենը կռահել: Կարելի էր կռահել, թե ինչու նա ոչ մի անգամ չի եկել հայրենիք Խորհրդային Միության փլուզումից առաջ, նույնիսկ կարելի էր կռահել, թե ինչու չի վերադարձել փլուզումից հետո՝ այդ հինգ տարիների ընթացքում: Սակայն ոչ մի կերպ չէր կարելի կռահել, թե ինչ կար այդ մարդու սրտում այդ պահին, երբ նրա հայացքը տաքսու պատուհանից փնտրում էր իր ծննդավայրը ու գտնում մի

կիսաածանոթ քաղաք:

Մի բան էր միայն հաստատ: Որ Սլավա Զինովիևիչը, ավելի ճիշտ՝ պարոն Կացմանը, ամերիկացի է: Հարյուր տոկոսանոց ամերիկացի: Օդանավակայանի ավտոմեքենաների վարձույթի սրահում նա ինձ ասաց, որ քսաներեք տարի չի եղել հայրենիքում: Իսկ ես այդ ժամանակ չմտածեցի, որ քսաներեք տարի հայրենիքում չեղած մարդը անմիջապես մեքենա չի վարձում, երբ նրա ինքնաթիռը կես ժամ առաջ է կտրել բաժանման այդ ժամանակահատվածը:

Պարոն Կացմանը արձակել էր մուշտակի կոճակները: Մեքենայի մեջ շոգ էր: Նա նույնիսկ քրտնել էր ու գրպանից հանել հսկա թաշկինակը: Նրա շնչառությունից քրտնել էր նաև ապակին, որին հենել էր ճակատը: Բայց նա չէր իջեցնում մեքենայի պատուհանը: Հասկանալի է՝ միջանցահովիկը վտանգավոր է ամերիկացու համար, մանավանդ երբ նրա քրտնելու պատճառը բոլորովին էլ շոգը չէր:

– Ես չգիտեմ ուրիշ մի այնպիսի քաղաք, ուր առանձնահատուկ ճաշակ է պետք ժամանակից շուտ չծերանալու համար,– շարունակեց մեր զրույցը պարոն Կացմանը: Ճիշտ կլիներ ասել՝ ի՛ր զրույցը կամ մենախոսությունը, որովհետև ինձ համար որևէ բան ասելու անհրաժեշտություն գրեթե չեղավ: Նրան բացարձակապես չէր հետաքրքրում իմ կարծիքը, ոչ էլ՝ ինձ ինչ է հետաքրքրում, ինչ եմ ուզում իրենից իմանալ:

Բոլոր դեպքերում ես հանդիպել էի վաթսունը նոր բոլորած հետաքրքիր մի մարդու, որը, անկախ հրեա լինելով, մի քիչ իրեն հայ էր համարում, որովհետև ճակատագրի կամոք նրան վիճակվել էր հոգեզավակը դառնալ հրեատյաց մի հայի: Բայց չէի ուզենա դրան անդրադառնալ: Միայն բացատրեմ, թե ինչ ասել է անկախ հրեա: Դա իր բնորոշումն է ու ըստ իրեն՝ նշանակում է ոչ մի հրեայից կախում չունեցող: Նա եղել էր աշխարհի գրեթե բոլոր

նավահանգստային քաղաքներում, տեսել էր աշխարհի գրեթե բոլոր նավահանգստային քաղաքների անծիր ճանճրույթը... Իր բառերով՝ հավիտենական նաև:

– Սա ո՞ր փողոցն է,– հարցրեց պարոն Կացմանը տաքսու վարորդին:

– Վառվառկա:

– Ես ո՞ր հյուրանոցում եմ ապրելու,– դիմեց նա ինձ:

– «Ռոսիա»:

– Փողոցը չգիտեմ, բայց հյուրանոցը հիշում եմ:

Երեկոյան ես քսան րոպե կանգնեցի «Ռոսիա» հյուրանոցի մուտքի մոտ: Ամերիկացի ֆերմերը ուշանում էր: Բաժանվելիս մենք պայմանավորվեցինք հանդիպել երեկոյան՝ միասին մի բաժակ խմելու: Մինչ այդ նա ասում էր, որ ինքնաթիռում երկար թռիչքի ընթացքում չի կարողացել քնել, որ ժամային գոտիների փոփոխությունը բացասականորեն է ազդել վրան, և հյուրանոցում տեղավորվելուց հետո պատրաստվում է քունն առնել:

Ստիպված էի ներքևում հարցնել ամերիկացու սենյակը:

– Պարոն Կացմանը խնդրեց զգուշացնել, որ ինքը գնում է «Բոլշոյ տեատր»,– ասաց պորտյեն:

Ամերիկացի ֆերմերը կամ նավագնացությամբ զբաղվող բիզնեսմենը, կամ աղբ վերամշակողը՝ «Բոլշոյ տեատրում»: Հետաքրքիր էր զարգանում հայրենի քաղաքում նրա առաջին օրվա գրաֆիկը:

Սակայն այն դեռ զարգանալու տեղ ուներ: Դրանում ես պիտի համոզվեի, երբ երկու ժամ անց «Ռոսիա» հյուրանոցի «Մանհեթեն էքսփրես» գիշերային ակումբում հանդիպեի պարոն Կացմանին մերկ ոտքերով մի աղջկա հետ:

Վայրէջք՝ ժամային գոտիների փոփոխության հետևանքով առաջացած գլխապտույտի ազդեցության տակ, վարձու ավտոմեքենայի փնտրտուք, քուն, բալետ, աղջիկ... Գրաֆիկի հետա-

գա զարգացման մասին կարելի էր ենթադրություն անել:

Պարոն Կացմանը ինձ նկատել էր և քայլում էր իմ կողմը.

– Ա՜, երիտասարդ: Այս ի՞նչ հյուրանոց հրամցրիք ինձ: Սենյակի համար վճարած երկու օրվա փողով կարող եմ մեկ հատ կով գնել:

Ես հրավիրեցի նրանց նստելու ու հարցրի, թե ինչպես էր ներկայացումը:

– Թատրոն չգնացի, ուզում էի գնալ, բայց չգնացի, ի՞նչ թատրոն,– նա գլխով ցույց տվեց աղջկան,– մեր կյանքն առանց այդ էլ թատրոն է, մե՜ծ, փո՜քր:

Հիմա նոր գլխի ընկա, որ պարոն Կացմանը հարբած է:

– Թատրոնով հարց չի լուծվում, երբ դու քսաներեք տարի չես եղել հայրենիքում: Դա իհարկե չի նշանակում, որ ես թատրոն չեմ գնալու: Կգնա՛մ: Ինչո՞ւ վիսկի չեն բերում:

Կբերե՛ն: Ուզում էի ասել, որ հիմա արդեն հասկանում էի այդ մարդուն: Կարելի էր վստահ լինել, որ նա չէր կարողացել քնել ու առավոտվանից խմում էր մինչև հիմա: Ոչինչ, որ նա չներկայացավ մեր հանդիպմանը: Երբ նա պորտյեին խնդրել էր ինձ զգուշացնել, որ գնում է «Բոլշոյ տեատր», արդեն խմած էր եղել: Իսկ թե ինչու տեղ չէր հասել, կարելի էր դատել՝ նայելով աղջկան, ու կարևոր չէր, թե քանի կով կարող էր գնել պարոն Կացմանը աղջկան տված փողի դիմաց:

Ծագումով հրեա, ծնունդով ռուսաստանցի ու ամերիկացի դարձած բիզնեսմենը վիսկի էր խմում: Սովորության հարց է: Օդին ավելորդ հիշողություններ կառաջացներ: Կամ սրտխառնուք: Իսկ շամպայնը բավականաչափ պինդ չէր՝ դրոշմելու համար նրա վերադարձի փաստը:

Աղջիկը ոգևորված լցնում էր հաճախորդի բաժակը և այնպես էր ինձ ժպտում, կարծես ամբողջ միջոցառման ֆինանսավորողը ես էի: Մինչդեռ իսկական ֆինանսավորողը հանել էր պի-

ջակն ու արձակել վերնաշապիկի կոճակները՝ մոռացած միջանցահովիկների սպառնացող վտանգի մասին: Նա շրջել էր աթոռը դեպի պարահարթակը, ուր պտտվում էին շիկահեր գեղեցկուհիները:

Ես դեռ չգիտեի, որ ստիպված էի լինելու նրան շալակած իր սենյակը տանել...

Եվ որ գլխավորն է՝ չգիտեի, որ նրան կրկին հանդիպելու էի երեք ու կես տարի հետո Բուրգասում:

6 նոյեմբերի, 1999

Երբ գտա «Ծովային ֆորտունա» ռեստորանը, ժամը հինգն էր: Մարուսյայի հետ խոսելուց անցել էր երեք ժամ, և եթե անգամ ընդունեի, որ նրա տաքսին կսլանար միջինը ժամում հարյուր հիսուն կիլոմետր արագությամբ, նույնիսկ այդ դեպքում այստեղ կլիներ միայն վեցին, այնպես որ ես ամենապակասը մեկ ժամ շուտ էի եկել:

Մտա ռեստորան և հարցրի, թե ո՞րն է նրանց ունեցած ամենահին գինին: Պարզվեց՝ ութսունինը թվականի «Կարնոբատը», որն էլ պատվիրեցի ինձ ծանոթ ու անծանոթ մի քանի ձկների և այլ ծովային կենդանիների հետ: Չմոռացա նաև պատվիրել, որ ծաղկամանում վարդերի մի փունջ լինի: Խնդրեցի, որ սեղանը պատրաստ լինի վեցից, և դուրս եկա:

Ռեստորանը ծովափին էր, այնտեղ, ուր ավարտվում էին լողափերը, և սկսվում էր նավահանգիստը, որի ուղղությամբ էլ քայլեցի: Հսկա բեռնանավերի ծխնելույզներն ու այս ու այն կողմ շարժվող վերամբարձ կռունկները, սակայն, այնքան մոտ չէին, որքան թվում էին:

Բավականին երկար տևեց, մինչև որ հասա նախ հսկա պահեստներին, ապա մաքսատան անհյուրընկալ շենքին և, վերջապես, կառամատույցին, ուր բեռնակիրները մի թուրքական բեռնանավից դատարկում էին մակարոններով արկղերը: Անձրև էր սկսվել, և նրանք ակնհայտորեն շտապում էին: Քիչ այն կողմ կանգնած երկու կանայք փորձում էին անգլերենով ինչ-որ բան բացատրել բազրիքին թառած բեռնանավի նավաստուն: Ես ակամա ստանձնեցի նրանց թարգմանչի դերը և թարգմանեցի այնքան, մինչև հասկացա, որ մարմնավաճառներ են:

– Եվ դուք պատրաստ եք այս թուրքի համա՞ր,– հարցրի ես:

– Դա պարտադիր չէ,– պատասխանեց նրանցից մեկը,– կարող ենք և անպատրաստ:

«Եվ ի՞նչ են մտածում բուլղար ազգայնականները»,– մտածեցի ես, և, փաստորեն, հայ ազգայնականները նույնպես: Չէ՞ որ սրանք իրենց մարմնի հետ վաճառում են մեր հայրենիքները, որ առանց այդ էլ դարերով ոտնատակ են տրվել այս նավաստու պապերի կողմից: Ո՞վ պիտի սովորեցնի հային և բուլղարին, որ նրանք իրենց զավակներին, իրենց եղբոր և հարևանի զավակներին հացի ու ջրի հետ մի քիչ էլ ազգային դաստիարակություն տան, որ եթե նրանք ազգին պիտանի էլ չդառնան, գոնե չծախվեն իրենց ազգի թշնամիներին: Բայց դա չի լինելու, քանի դեռ մեր հայրենակիցների մեծամասնության պատկերացրած ազգային դաստիարակությունը սահմանափակվում է «Վույ մեր ինքնիշխան, մեր անկախ Հայաստան» հայտնի երգով:

– Քսան դոլար երկուսին միասին,– գոռաց թուրք նավաստին:

Ես թքեցի նավի վրա և հեռացա:

Նավահանգստի վարչական շենքից դուրս եկավ սև երկար վերարկուով մեկը՝ մի ձեռքին՝ սև պորտֆելը, մյուս ձեռքին՝ սև անձրևանոցը, և քայլեց դեպի սև «Ռեյնջ Ռովերը»: Ես նրան ճանաչեցի անմիջապես և ձայն տվեցի, քանի դեռ չէր նստել մեքենան:

– Պարո՛ն Կացման:

Նա շրջվեց դեպի վարչական շենքը՝ կարծելով, թե կանչն այնտեղից էր, և ես արագ մոտեցա նրան:

– Պարո՛ն Կացման, ինչո՞ւ ենք մենք միշտ հանդիպում տրանսպորտային հանգույցներում՝ պատահաբար:

– Կացե՛ք,– նա ոտքից գլուխ չափեց ինձ,– կացե՛ք և ոչինչ չասե՛ք, ես ձեզ հիշում եմ:

Ես սպասեցի: Նա նախ բացեց մեքենայի հետևի դուռը, տեղավորեց պորտֆելն ու անձրևանոցը, ապա ձեռքը մեկնեց ինձ.

– Մոսկվա, 1996 թվական, մարտ. մենք հանդիպեցինք օդանավակայանում, ապա՝ գիշերային ակումբում: Դա կյանքումս առաջին և միակ օրն էր, երբ ես հարբեցի:

– Ես տարին և ամիսը չեմ հիշում, իսկ ինչ վերաբերում է խմելուն, ապա առաջարկում եմ կրկնել:

– Դե՛, ո՛չ,– փնթփնթաց նա,– դրան ես կտրականապես դեմ եմ, բայց եկեք նստենք մեքենան, ես չեմ պատրաստվում թրջվել անգամ հանուն ինձ հարբած տեսած աշխարհում միակ ծանոթի:

Նա կարծես մի քիչ ուրիշ էր, քան իմ մեջ տպավորված Սլավա Զինովիևիչը:

– Հուսով եմ, ոչ ոքի չեք պատմի այդ միջադեպի մասին,– շարունակեց նա արդեն մեքենայում,– ես վաղուց մոռացել էի դրա մասին:

– Ի՞նչն է ձեզ անհանգստացնում,– չհասկացա ես,– ի՞նչ մի միջադեպ էր որ:

– Ես ընտանիք ունեմ, հասկանո՞ւմ եք, և գործընկերներ, և ժուժկալ ու պարկեշտ մարդու համբավ:

– Ես չեմ հիշում, որ դուք որևէ վատ բան արած լինեք, պարո՛ն Կացման:

– Համենայն դեպս կխնդրեի, որ դա մնա մեր մեջ,– կրկին փնթփնթաց նա,– բայց ի՞նչ եք անում այստեղ, ես չեմ հիշում, որ դուք բուլղարացի լինեիք:

– Դուք ճիշտ եք հիշում, ես հայ եմ:

– Հայերը...

Նա միացրեց մեքենայի շարժիչը և քշեց՝ բոլորովին հաշվի չառնելով իմ ներկայությունը մեքենայում: Միայն, երբ դուրս եկանք փողոց, նա հիշեց, որ մեքենայում եմ, և հարցրեց, թե ուր եմ գնում: Ես նայեցի ժամացույցին: Վեցից պակաս էր հինգ րոպե: Խնդրեցի ինձ հասցնել «Ծովային ֆորտունայի» մոտ՝ պատճառ բերելով անձրևը: Նա նույնպես նայեց ժամացույցին:

– Այնտեղ համեղ ձկներ են պատրաստում,– ասաց,– կընթրենք միասին: Կարող եմ վճարել երկուսիս փոխարեն, եթե դուք հրաժարվեք վճարել ձեր փոխարեն: Կարծեմ ես ձեզ մի հյուրասիրություն եմ պարտք:

– Դա ամենևին պարտադիր չէ, ես այնտեղ սեղան ունեմ:

– Իսկապե՞ս:

Պարոն Կացմանին ինձ հետ տեսնելով՝ չեմ կարող ասել, թե մատուցողը չշփոթվեց: Նա ուղեկցեց մեզ իմ պատվիրած սեղանի մոտ և վերցրեց բաճկոնները՝ չթաքցնելով քթի տակի ժպիտը: Սեղանի կենտրոնում, ճապոնական մոտիվներով նկարազարդված ծաղկամանի մեջ դրված էր ալ վարդերի մի մեծ փունջ:

Ամերիկացի բիզնեսմենը, սակայն, այն չնկատեց կամ գոնե ուշադրություն չդարձրեց: Մինչ կբերեին հիմնական ճաշատեսակները, նա սկսեց կլանված ուտել Մարուսյայի համար պատվիրված սալաթները և խմեց Մարուսյայի համար պատվիրված գինին, չնայած դեռ հինգ րոպե առաջ կտրականապես դեմ էր խմելուն: Մինչ նա զբաղված էր իր ծովամթերքներով, ես անընդհատ անհանգիստ նայում էի ժամացույցիս: Երկու անգամ ներողություն խնդրեցի և դուրս եկա՝ շատ լավ իմանալով, որ Մարուսյան այսքան շուտ չէր հասնի:

Թերևս աստիճանաբար կշտանալով՝ պարոն Կացմանը, որ կրկին մոռացել էր իմ մասին, հիշեց և, հավանաբար, հիշեց այն, որ ինքը հյուրասիրվողի դերում է:



– Դուք չասացիք, թե ինչ եք անում այստեղ, ինձ չի թվում, որ հիմա հանգստանալու սեզոն է:

Ես պատմեցի ցուցահանդեսի մասին:

– Ինքս էլ մի քիչ հայ եմ,– ասաց հրեա բիզնեսմենը,– ես մեծացել եմ ինժեներ Հակոբովի ընտանիքում, ուր հայկական կարծես ոչինչ չէր մնացել, բացի ատելությունը՝ հանդեպ հրեաները: Նա վաղամեռիկ հորս ընկերն էր, նրա մասին խոսելիս ասում էր «այդ ջհուդ սրիկան», իսկ ինձ ասում էր «ջհուդի ճուտ»:

Մատուցողը սեղանին դրեց ձկներով ափսեները և գինի ավելացնելով բաժակների մեջ՝ հեռացավ միևնույն հեգնական ժպիտը բերանի անկյունում:

– Իսկ կարելի՞ է իմանալ, թե ինչ եք անում դուք այս երկրում,– հարցրի սեղանակցիս:

– Զարգացնում եմ բիզնեսս:

Ես չխնդրեցի մանրամասնել՝ թողնելով, որ նա ուտի իր, ավելի ճիշտ՝ Մարուսյայի համար պատվիրված ձուկը, բայց պարոն Կացմանը բացատրեց առանց իմ լրացուցիչ հարցի.

– Երկու տասնամյակների բացակայությունից հետո Ռուսաստան վերադառնալով՝ ես տեսա, որ այնտեղ բիզնեսի դաշտը լայն է և մեծամասամբ՝ բաց: Նիժնի Նովգորոդի մարզում հիմնեցի մի մեծ ֆերմա և կաթի վերամշակման գործարան: Ես ունեմ նաև ծովային բեռնափոխադրումներով զբաղվող մի ընկերություն ԱՄՆ-ում: Որոշեցի ծավալվել դեպի Ռուսաստան և գրասենյակներ բացեցի Արխանգելսկում և Նովոռոսիյսկում: Ապա՝ ուկրաինական Օդեսայում և հիմա էլ այստեղ եմ, որպեսզի իմ ընկերությունը ծավալվի դեպի Արևելյան Եվրոպա: Ուրի՞շ ինչ է Ձեզ հետաքրքրում:

Տեսնելով, որ չեմ պատասխանում, նա վերջապես անդրադարձավ իր ձկանը:

Բայց կար մի բան, որ ինձ հետաքրքրում էր: Հիշում էի, որ Մարուսյան մի անգամ ասել էր, որ Իգնատ Լոսկին ի թիվս այլ բիզնեսների ունի նաև նավագնացությամբ զբաղվող բիզնես և, որ կարևորն է, հենց Բուրգասում: Արդյո՞ք այստեղ որոշ բաներ չէին համընկնում...

Օգոստոս, 1994

– Ես կարող եմ թվարկել տասնյակ հայտնի մոսկվացի հրեաների անուններ, որոնք իրենց հայրենիքը համարում են Ռուսաստանը,– ասաց Ալեքսանդր Գաբլերը,– այդ մարդկանցից շատերը մեկնել են Իսրայել՝ իբր վերջապես իրենց հայրենիքում ապրելու, բայց չեն կարողացել այնտեղ երկար դիմանալ ու շուտով վերադարձել են:

Գեղանկարիչ Ալեքսանդր Գաբլերը միայն վերջերս էր հնարավորություն ստացել արվեստանոց վարձելու՝ շնորհիվ մի մանկական հատորյակի ձևավորումից ստացած հոնորարի: Մինչ այդ, նա ստիպված է եղել նկարել տանը՝ խոհանոցում, և յուրաքանչյուր երկրորդ նկարում ինքնաբերաբար պատկերել է կնոջը՝ երբեմն աման լվալիս, երբեմն ձվածեղ եփելիս, երբեմն էլ իր վրա բարկանալիս: Իսկ կնոջը պատկերող մեկ այլ կտավ, որը նկարիչն անվանել է «Իմ հավաքարարուհին», երկար ժամանակ շրջել է Մոսկվայի ցուցասրահներով:

– Ինձ համար առանձնապես կարևոր չէ, թե որտեղ են ծնվել իմ ապուպապերը: Ես ծնվել եմ Մոսկվայում և ապրում եմ Մոսկվայում: Մարդ ապրում է այնտեղ, որտեղ իրեն լավ է զգում: Ավելի ճիշտ, մարդ պե՛տք է ապրի այնտեղ, որտեղ իրեն լավ է զգում: Միշտ չէ, որ դա ստացվում է: Համենայն դեպս ինձ ոչ ոք չի կա-

որող ասել, որ ես սխալ տեղ եմ ապրում: Ու հետո էլ, նրանից, որ քո պապերը ծնվել են մի տեղ, իսկ դու ապրում ես մեկ ուրիշ տեղ, դու ավելի լավ կամ վատ նկարիչ չես դառնում: Պապերիդ ծննդավայրը նաև չի ավելացնի քո խելքը, չի զարգացնի քո ճաշակը և վերջապես՝ չի կերակրի ընտանիքդ: Հարյուրավոր աշխարհահռչակ հրեա արվեստագետներ ճանաչված են որպես ամերիկացիներ, լեհեր, ռուսներ... Եվ ինչո՞ւ միայն արվեստագետներ: Հարյուր տարի հետո, երբ իմ նկարները կախեն Տրետյակովյան թանգարանում, ազգանվանս կողքին չեն գրելու՝ հրեա:

Ճիշտն ասած, ինձ համար ցավալի էր, որ Ալեքսանդրն այդպես էր մտածում: Նախ և առաջ, որովհետև նրա նկարներն ինձ դուր էին գալիս: Ու հետո էլ նա համակրելի երիտասարդ էր, համակրելի կին ուներ՝ դատելով արվեստանոցի պատերից կախված նկարների միջի հավաքարարուհիներից ու խոհարարուհիներից, խելք ուներ և հարգում էր հյուրասիրության կանոնները:

– Իհարկե, ես դեմ չէի լինի տեսնել Իսրայելը: Նույնիսկ, եթե արձակուրդներիս որևէ երկիր մեկնելու ընտրություն ունենամ, անպայման կընտրեմ Իսրայելը: Ցավոք, չեմ կարծում, թե դա կլինի այս ամառ, բայց դա այնքան էլ կարևոր չէ: Պետք չէ տարվել զգացմունքներով: Համենայն դեպս, այն ժամանակ, երբ մոլբերտի առջև չես: Իմ հայրենիքն իմ արվեստանոցն է:

Ալեքսանդր Գաբլերից բացի աշխարհում ուրիշ ոչ ոք վարձով հայրենիք չուներ: Համենայն դեպս, եթե իրոք մարդիկ հարյուր տարի հետո պետք է տեսնեն Ալեքսանդր Գաբլերի կտավները Տրետյակովյան կամ որևէ այլ թանգարանում, ապա պետք է իմանան, որ նա հրեա է եղել:

Հետո մենք գնացինք նրանց տուն: Անյուտան առանց գոգնոցի էր, բայց էլի չէր տարբերվում արվեստանոցի նկարների մեջ պատկերված կանանցից: Նույն հրապուրիչ արտաքինը, նույն

սլացիկ ու ձիգ մարմինը: Ասենք, լավ նկարչի կինը չի կարող գեղեցիկ չլինել: Սակայն պարտավոր չէ լավ բորշչ եփել: Ու համեղ ճտի տապակա: Եվ պարտավոր չէ սեղմել ամուսնու ոտքը, երբ վերջինս մոռացել ու դատարկ է թողել հյուրի բաժակը:

Ճաշից հետո Անյուտան քնեցրեց ինը ամսական որդուն, հետո մեզ սուրճ տվեց, իսկ ավելի ուշ կարդաց իր բանաստեղծությունները: Այդ բանաստեղծությունների յուրաքանչյուր բառը Ռուսաստանն էր: Անյուտան ռուս էր, ծնվել էր հրաշալի Սիզրան քաղաքում՝ Վոլգա գետի ափին: Ալեքսանդրի հետ ծանոթացել էր Մոսկվայի համալսարանում սովորելու տարիներին: Սակայն այդ տարիները Անյուտայի բանաստեղծություններում կարծես թե չկային: Սառցափայլ Վոլգա գետն էր, Սիզրանի ոսկեգմբեթ եկեղեցիները, Պովոլժյեի ձյունե դաշտերն ու անծայրածիր անտառները:

Երբ Մաշան կարդաց իր նոր բանաստեղծությունը, տեսա, թե ինչպես էր Ալեքսանդրը լսում՝ շունչը պահած: Ու չնայած, «իր հավաքարարուհու» այս բանաստեղծությունում էլ ինքը չկար, նկարիչը չկարողացավ թաքցնել իր հավանությունը:

Գուցե, Ալեքսանդր Գաբլերը ուրիշ բան նկատի ուներ, երբ արվեստանոցում ասաց, որ մարդ պետք է ապրի այնտեղ, որտեղ իրեն լավ է զգում...

Երբ փոքրիկն արթնացավ, պարզվեց, որ նրան պետք էր տանել դուրս:

Հաճելի էր մասնակցել երիտասարդ այդ ընտանիքի զբոսանքին: Ես վաղուց արդեն հասկացել էի, որ ամուսինները ամբողջովին պատկանում են մեկը մյուսին, իսկ միասին պատկանում են իրենց զավակին: Դժվար չէր հետևություն անելն ու հասկանալը, որ նրանք երջանիկ էին:

Ուրեմն ի՞նչ նկատի ուներ Ալեքսանդրը: Նա ասաց, որ իր հայրենիքն իր արվեստանոցն է: Ես նրա հետ համաձայն չէի: Իսկ

համաձայն կլինեի, եթե նա ասեր, որ իր հայրենիքն իր տունն է, իր որդին...

Գուցե դա մի բոլորովին ուրիշ դեպք էր՝ ինձ համար անհասկանալի: Ես գիտեի, որ կա մարդկանց մի տեսակ, որոնց հայրենիքն աշխարհն է: Այդ մարդկանց շատ հեշտ է ճանաչել ամբոխի մեջ: Նրանց հայացքն անմիջապես կհանդիպի ձեզ ու միաժամանակ մեկ ուրիշին: Նրանք իրենց պես թափառող հայացք ունեն, նրանց աչքերը տեսնում են ամեն ինչ: Այդ մարդիկ անցնում են քաղաքից քաղաք, երկրից երկիր ու իրենց հետ տանում իրենց ողջ ունեցածը, այնքան քիչ բան, որ հեշտությամբ տեղավորվում է նրանց ուսապարկերում: Յուրաքանչյուր կայարանից սկսվում է նրանց սեփական քաղաքը, յուրաքանչյուր գնացք, ինչ ուղղությամբ էլ գնա, նրանց տանում է տուն: Իսկ նրանք տանում են իրենց սրտերը, և, եթե ամբողջ աշխարհը պատկանում է նրանց, ապա նրանց սրտերը պատկանում են ամբողջ աշխարհին: Իսկ նրանց հայացքները տերերն են ամեն արժեքավորի: Ժամանակավոր տերերը, մինչև նրանց տեսածները չեն փոխանցվի մեզ՝ հասարակ մահկանացուներիս, մի նկարի, մի երգի կամ մի բանաստեղծության տեսքով:

Նայում էի երկնագույն, տարօրինակ սայլակի մեջ պառկած մանկիկին ու փորձում հասկանալ նրա հորը: Արդյո՞ք նա պատկանում էր վերը նշված մարդկանց տեսակին: Գուցե նա ավելի շուտ էր անցել նրանց անցնելիք ողջ ճանապարհը ու հանգրվանել Անյուտայի գրկում: Կամ գուցե պարզապես շեղվել էր ճանապարհից: Արդյո՞ք հնարավոր է մի ճիշտ ճանապարհից շեղվելով գտնել երկրորդ ճիշտ ճանապարհը:

Ալեքսանդրը վերմակի տակ մտցրեց որդու ձեռքը, մանկիկը նորից ազատեց այն: Սայլակը շարունակում էր ճռռալ: Այն իսկապես շատ տարօրինակ տեսք ուներ: Նույնիսկ մտածում էի, որ Ալեքսանդրն ինքն էր այն պատրաստել, բայց պարզվեց՝

գաղտնիքն ուրիշ է:

– Երբ պետք է գնեինք այս սայլակը, մեզ մոտ մնացել էր վերջին հազար ռուբլին,– պատմեց Անյուտան,– ամուսինս երկու ամիս ոչ մի նկար չէր վաճառել, իսկ ես չէի աշխատում: Խանութներում սայլակները թանկ էին և ստիպված էի հարմար տարբերակ փնտրել թերթի հայտարարությունների մեջ: Մի տեղ գրված էր՝ վաճառում եմ գեղեցիկ մանկական սայլակ՝ անհավանական էժան գնով: Զանգահարեցի: Վաճառողը բացատրեց իր տան տեղը, այն մոտիկ էր, և ես գնացի երեխայի հետ: Ծեր ամուսիններ էին: Ցույց տվեցին սայլակը, ու մինչ ես կհասցնեի զարմանալ, բացատրեցին, որ այն հիսուն տարեկան է: Ընդամենը երկու հարյուր ռուբլի էին ուզում: Բացատրեցին, որ այն իրենց դստեր սայլակն է եղել, վերջերս գտել են նկուղից ու որոշել են վաճառել: Ես ներողություն խնդրեցի ու հեռացա: Ճիշտն ասած շատ էի հավանել սայլակը, բայց չգնեցի, որովհետև վախենում էի՝ Սաշան կծիծաղի վրաս: Ոչինչ չպատմեցի նրան: Մինչդեռ հաջորդ օրը Սաշան թերթում հանդիպում է նույն հայտարարությանը, գնում ծերունիների տուն ու, իր ասելով, առանց մի վայրկյան տատանվելու, վերցնում սայլակը... Հետո մենք այն մի լավ լվացրինք, կարեցինք քանդված տեղերը, միայն մինչև հիմա անիվները չենք յուղել, և սայլակը ճռռում է:

Անյուտան խորամանկ հայացքով նայեց ամուսնուն:

Սայլակն անպայման պետք էր յուղել, որովհետև համոզված էի՝ իրենց հաջորդ որդուն կամ դստերն էլ էին Գաբլեր ամուսինները ման ածելու դրանով: Մինչ այդ Ալեքսանդրը երկու գիրք էլ ձևավորած կլիներ, կամ՝ հինգը, նկարներ կվաճառեր, սակայն սայլակը կմնար նույնը: Ու նույնը կմնար նրա փիլիսոփայությունը: Եվ այդ սայլակի պատմությունը, դժբախտաբար, պատասխան չտվեց իմ հարցերին: Նույնիսկ հակառակը՝ այն ավելացրեց մի վարկած Ես. Ալեքսանդր Գաբլերի հայրենիքն այդ սայլակում էր:

6 նոյեմբերի, 1999

Մարուսյան եկավ ժամը ութին: Ես արդեն հոգնել էի դուրսուներս անելուց և սպասում էի նրան ռեստորանի մուտքի մոտ կանգնած: Պարոն Կացմանը գնացել էր մեկ ժամ առաջ, և քանի որ նրանից հետո մեր սեղանին մնացել էին միայն ձկների և հսկա ծովախեցգետնի կմախքներն ու տասնամյա «Կարնոբատի» դատարկ շիշը, մատուցողին պատվիրել էի ամեն ինչ կրկնել նույնությամբ:

– Նա մոռացավ ծաղիկները,– ասել էր մատուցողը:

– Հիմար,– ասել էի ես,– ծաղիկները նրա համար չէին:

Հետո, սկզբում կում առ կում, ապա բաժակ բաժակի հետևից դատարկել էի երկրորդ գինին և մեկ ժամվա ընթացքում ծխել մեկ տուփ սիգարետ: Մարուսյան ուշանում էր:

Այդ ժամանակ Սոֆիայում աշխատող բացառապես դեղին տաքսիների մեջ գերակշռում էին գերմանական և ֆրանսիական մեքենաները. տասը, տասնհինգ տարվա «Օփելներ», «Ֆոլքսվագեններ», «Պեժոներ» և «Ռենոներ»: Կային նաև սոցիալիստական շրջանը հիշեցնող ռումինական «Դաշիաներ» և ռուսական «Ժիգուլիներ», ու կարծեմ մեկ «Մոսկվիչ» 1971 թվականի արտադրության, որն էլ հենց բերեց Մարուսյային: Բայց վարորդը բացահայտորեն ջանք չէր խնայել. կապոտի տակից գոլորշի էր բարձրանում, իսկ անիվներից վառված ռեզինի հոտ էր գալիս: Թվում էր, որ սա «Մոսկվիչի» վերջին ճամփորդությունն էր: Բայց դա կարևոր չէր: Մարուսյան եկել էր:

Մեզ տեսնելով՝ հիմար մատուցողն այնպիսի դեմք ընդունեց, կարծես իմ հետ ոչ թե իմ ընկերուհին էր, այլ իր կինը:

– Ուրիշ սեղաններին ծաղիկներ չկան,– ասաց Մարուսյան:

– Իսկ քեզ ուրիշ սեղանների մո՞տ էլ են սպասում:

Մարուսյան կերավ Կացմանից ոչ պակաս ախորժակով և խմեց ինձանից ոչ պակաս: Վերջում ես շամպայն պատվիրեցի: Լավ նորություն ունեի հայտնելու Մարուսյային:

Սլավա Զինովիևիչ Կացմանը, պարզվեց, պատրաստվում էր գնել Իգնատ Լոսկուն պատկանող նավագնացական ընկերությունը: Ես խնդրել էի հրեա բիզնեսմենին ինձ մի լավություն անել: Բացատրել էի, որ ընկերուհիս պայմանագրով կապված է Լոսկուն պատկանող մեկ այլ ընկերության հետ, և հատուկ շեշտել էի, որ գործարքն անազնիվ է: Պարոն Կացմանը, որոշ ժամանակ մտածելուց և որոշ հարցեր ինձ տալուց հետո խոստացել էր, որ ամեն ինչ կկարգավորի: Նա թողել էր իր այցեքարտը և ասել, որ զանգահարեմ հաջորդ օրը: Մնացած մանրամասները կարևոր չեն: Չգիտեմ, թե ինչն էր պատճառ հանդիսացել: Գուցե հրեայի երկյուղածությունը այն հանգամանքից, որ տարիներ առաջ ես ականատեսն էի եղել իր շեղման, գուցե նրա շնորհակալ լինելը իմ ճոխ հյուրասիրությունից, գուցե ուրիշ մի բան:

Մարուսյան, սակայն, հեշտությամբ չհավատաց լսածին: Ամբողջ ճիշտ, մինչև վերջ էլ չհավատաց՝ պնդելով, որ Լոսկին տեղի տվողը չէ:

– Սպասենք և կտեսնենք,– ասացի ես:

– Սպասենք և կտեսնենք,– համաձայնեց նա:

Երբ դուրս եկանք ռեստորանից, քիչ այն կողմ տեսանք Մարուսյային բերած «Մոսկվիչը»:

Կապոտը բաց էր, և վարորդը անձրևի տակ կանգնած ինչ-որ բան էր քանդում:

– Լո՞ւրջ գործ է,– հարցրի վարորդին:

– Այնքան էլ չէ, պարզապես շարժիչս մեռավ,– պատասխանեց վարորդը:

15 նոյեմբերի, 1999

Հոլանդիայի իր բաժնետերերի հետ խորհրդակցելուց հետո, ինչպես ինքը ներկայացրեց, բայց իրականում ինքնուրույն, տեսածներն ու լսածները վերլուծելով՝ Ֆլիպ վան Վիլետը եկել էր հետևյալ եզրակացության.

Երևանում հիմնել "Events" ընկերության ներկայացուցչություն, որը պիտի հրատարակեր worldinevents.ru ռուսալեզու ինտերնետային կայքը և համակարգեր ընկերության մոտ քսան երկրներում սեփական թղթակիցների աշխատանքը: Ներկայացուցչությունը, սակայն, պիտի հանդես գար իբրև առանձին իրավաբանական անձ, որի հիմնադիրները և բաժնետերերը պիտի լինեին մի կողմից ինքը՝ Ֆլիպ վան Վիլետը, և մյուս կողմից՝ ևս երեք անձինք՝ Վլադիմիրը, Լիզան և այս պատմության հեղինակը: Փայաբաժինները բաշխվելու էին համապատասխանաբար յոթանասունհինգ և յոթ, յոթ, յոթ տոկոսներով: Գրասենյակի վարձակալության, սարքավորումների գնման և այլ ծախսերի համար անհրաժեշտ գումարն ամբողջությամբ ներդրվելու էր առաջին փայատիրոջ կողմից, որը նաև հոգալու էր ընկերության բյուջեն, մինչև ընկերության շահութաբեր դառնալը: Այս ամենը իրավաբանորեն կամ կիսաիրավաբանորեն: Այլապես կարելի է ասել, որ մեզ խաբեցին, ինչպես հեծանիվ երազող մանչուկին խաբում են պաղպաղակով կամ լավագույն դեպքում՝ գնդակով:

Մինչդեռ ես նախատեսել էի և լրիվ իրավունք ունեի ակնկալել բոլորովին այլ բան: Կարծում էի, որ մենք կհասնենք նրան, որ համատեղ ընկերության հիմնադիրներ և փայատերեր կհանդիսանան

"Events" ընկերությունը և «Շաբաթ» ՍՊԸ-ն՝ համապատասխանաբար հիսունմեկ և քառասունհինգ տոկոս փայաբաժիններով: Թե ինչպես կտնօրինեի հետո Վլադիմիրի, Լիզայի և մեր թիմի մյուս անդամների եկամուտ ստանալու հարցերը, հոլանդացու գործը չպիտի լիներ: Բայց պարզվեց, որ իմ վստահությունը անտեղի էր: Այսինքն՝ այն մասով, որով ես վստահել էի ոչ թե սեփական հոտառությանս, այլ քթիս տակի մարդկանց:

Ո՞րն է ավելի վատ՝ քաղցած գա՞յլը, թե՞ փորի միջի ճիճուն: Ճիճուն, որ բոլորովին էլ վախենալի չէ, ուտում է ոչ իր փայը: Գայլը, որից կարելի է վախենալ կամ չվախենալ, համենայն դեպս կուտի իր փայը և ներառյալ ճիճուն: Ահա այսպես, պարոնա՛յք Վլադիմիր և Ֆլիպ:

Ծիտ Կոստոյին պատկանող «Գոստ» կոնցեռնի գլխավոր տնօրեն Սերոբ Սերոբյանը նստած էր սրահի վերջում՝ բեմի կողքին դրված սեղանի մոտ, և թեյ էր խմում: Նա այնպիսի ագահությամբ էր կում անում բաժակից, ասես հենց նոր առել էր հեռավոր արևելքի թեյի անխտիր բոլոր պլանտացիաների ոչնչացման լուրը: Ես ինձ համարձակ պատվիրեցի:

– Ինչի՞ց սկսենք,– խոսեց «ինժեները»:

Ես թոթվեցի ուսերս:

– Քեզ պետք է մի բան ասեմ,– նա մոտեցրեց աթոռն ինձ,– ես փորձում եմ քեզ օգնած լինել: Դու դա հասկանո՞ւմ ես:

Չպատասխանեցի, և նա շարունակեց.

– Ես հասկացա, որ դու ուրիշ աշխարհի մարդ ես: Իմ հորեղբայրը նույնպես արվեստագետ-նկարիչ էր: Նրա նման մարդը չէր կարողանալու գտնել պարոն Բալյանի հետ: Ես դա գիտեմ: Դրա համար էլ ասացի, որ ինքս կկարգավորեմ այս հարցը: Նրանք քեզ ուղղակի կուտեին:

«Նույնպես արվեստագետ նկարիչ էր»-ի վրա ես ժպտացի, բայց ոչինչ չասացի: Նույն հաջողությամբ նրա հորեղբայրը կարող էր թավջութակահար եղած լինել, կամ թատրոնի դերասան, կամ բանաստեղծ, որովհետև նրանք բոլորն էլ այս մարդկանց համար «արվեստագետ-նկարիչներ» են:

– Ես ամենայն անկեղծությամբ ուզում եմ քեզ օգնած լինել,– շարունակեց Սերոբյանը,– բայց դու էլ ինձ պետք է օգնես, դու պետք է խոսես:

– Ուրեմն խոսե՞մ,– հարցրի ես:

– Դե՛ իհարկե,– նա հասկացրեց մատուցողին, որ էլի թեյ բերի:

Պարզ էր, որ «ամենայն անկեղծությամբ» նա ուզում է ոչ թե ինձ օգնել, այլ մտերմություն խաղալով՝ շահել վստահությունս և խոսեցնել: Բայց դա կարևոր չէր. ես արդեն որոշել էի անելիքս ու դատարկել ռոմի բաժակը՝ ոչինչ չխառնելով:

– Ինձ համար արդեն կարևոր չէ, դուք կամ մնացածներն ինձ կհավատաք թե ոչ, բայց ամեն դեպքում կրկին և վերջին անգամ ասում եմ՝ ես ոչ մի պայուսակ չեմ տեսել: Փոխարենը տեսել եմ ուրիշ բան,– զգացի, թե ինչպես Սերոբյանը լարվեց, և դիտմամբ շարունակեցի հապաղումով,– տեսել եմ վքարը, վքարի հետևանքները և, որ գլխավորն է, Կոնստանտին Բալյանի սիրուհիներին:

– Չեմ հասկանում... – փորձեց ընդմիջել ինձ՝ ես:

– Խնդրում եմ լսեք ինձ մինչև վերջ: Դուք սխալվում եք, ես նկարիչ չեմ, այլ լրագրող: Եվ ունեմ բազմաթիվ լրագրող ընկերներ, որոնցից երկուսին իմ ապահովության համար պատմել եմ այս պատմությունը՝ խնդրելով նրանց այն հրապարակել և հասարակական հնչեղություն տալ, եթե ինձ շարունակեք անհանգստացնել, և մանավանդ, եթե ինձ հետ ինչ-որ բան պատահի: Հուսով եմ՝ հասկանում եք սա: Հասարակությունը սիրում է օլիգարխներին վերաբերող պատմությունները:

– Դուք... Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ եք ասում,– կմկմաց «ինձ՝ ները»՝ ակամա անցնելով «Դուք»-ի:

– Ես ուրիշ տարբերակ չունեի: Դուք, փոխանակ ինձ շնորհակալություն հայտնեք իմ արածի համար, մեղադրում եք ինձ մի բանի մեջ, որ չեմ արել և դեռ ավելին՝ բռնանում եք: Ուրիշ ի՞նչ կարող էի ես անել: Այնուամենայնիվ, եթե խոստանաք, որ վերջ կտրվի այս ամենին, ես էլ կխոստանամ, որ ուրիշ որևէ մեկն այս մասին չի իմանա, հակառակ դեպքում կարդացեք վաղվա մամուլը:

Չգիտեմ՝ որքանով էր իմ արածը տղամարդկայնորեն ճիշտ կամ գոնե ընդունելի: Փաստորեն ես սպառնում էի իմ հակառակորդներին նրանով, որ կմատնեմ նրանց գաղտնիքը: Չնայած պետք է ասել, որ դա ընդամենը սպառնալիք էր, որը եթե չգործեր իր ազդեցությունը, այսինքն՝ նպատակին չծառայեր, ես իմ ասածը չէի անելու: Ոչ թե նրա համար, որ կգիտակցեի դրա սխալ լինելը, այլ պարզապես գլուխ չէի դնի: Համենայն դեպս ուրիշ ելք, պայքարելու այլ ձև չէի տեսնում: Եթե չլիներ Սարգսի պարագան, գուցե կարելի լիներ այլ կերպ վարվել, կլիներ դա կռիվ տալը, թե զիջումների գնալը, բայց Սարգսի պարագան կար, և ինձ թվում էր, որ այն ամենը, ինչ հնարավոր է անել նրան օգնելու համար, պետք է արվի: Այլ հարց էր, թե ինչ հետևանք կունենար սա: Կվախենա՞ր արդյոք պարոն օլիգարխը հրապարակային պայքարից: Կարելի էր հուսալ, որ՝ այո: Դրա օգտին կար երկու հանգամանք. նախ այն, որ նա ընտանիք ուներ, և կխուսափեր սիրուհիների պատմությունը երևան հանելուց: Եվ երկրորդը, որ նա վստահ չէր, որ ես իսկապես տեղյակ եմ պայուսակի մասին, այսինքն չուներ որևէ ապացույց դրա վերաբերյալ, և պետք է որ հասկանար, կամ գոնե նրան կհուշեին, որ եթե անգամ նա շարունակի, դա կարող է անօգուտ լինել՝ փողը վերադարձնելու առումով:

Իսկ ի՞նչ փող էր դա: Հարյուր հազար դոլար: Գումար, որ կարող էր մարդու կյանք փրկել: Եվ գումար, որ կարող էր վերածվել պարոն օլիգարխի հերթական շքեղ մեքենայի: Ո՞րն էր ավելի կարևոր: Եվ ի՞նչ մատնության մասին էր խոսքը: Ինչ որ ես արել էի՝ հարյուր անգամ լավ էի արել:

Իշխ. Նեզբ ձրցացուցակի չիսուրամ ելնդ.ելամ ամրաիկ ամանոտ

Ես հայտարարում ու ցանկանում եմ ասել, որ ես ոչ մի դեպքում չեմ ուզում ինձ դարձնել ինչ-որ մի բան, որ ես չեմ։ Ես ուզում եմ ապրել ինչպես ինքս եմ։ Ես ուզում եմ ապրել ինչպես ինքս եմ։ Ես ուզում եմ ապրել ինչպես ինքս ե

1996

Երբ հազար ինն հարյուր իննսունվեց թվականի մարտի վեցին Մոսկվայի «Շերեմենտևո» օդանավակայանում պարոն Կացմանին ու ինձ չհաջողվեց մեքենա վարձել, հաջորդ օրը Պոդմոսկովյե մեկնելու համար ստիպված եղա բավարարվել երկաթուղու ծառայություններով: Պիտի հանդիպեի գաղթականների մասին իմ կիսատ մնալիք գրքի հերթական հերոսին:

Իմ հին ծանոթ վրացի վարսավիր Գիան, իր վարսավիրանոցի հայելու միջից ինձ տեսնելով, քիչ էր մնում կտրի սափրվելու նստած հաճախորդի վիզը:

Առաջին և վերջին անգամ մենք հանդիպել ենք երեք տարի առաջ, երբ ես եկել էի այստեղ՝ մերձմոսկովյան Պոկրով՝ մի կապոց փոխանցելու իմ հայրենակից հյուսն Աբոյին:

Գիան բոլորովին չէր փոխվել և, ինչպես երեք տարի առաջ, հիմա էլ խմած էր և առանց վարսավիրի խալաթի: Նա թողել էր հաճախորդին նստած՝ փրփուրը դեմքին, և փորձում էր մկրատով բացել օդու շիշը:

– Ի՞նչ կա-չկա Կովկասում,– հարցրեց ու առանց պատասխանի սպասելու շարունակեց,– հարյուր տարեկան մարդիկ՝ հարյուր տարվա մորուքներով, նռան պես կարմիր գինի և արև: Ճիշտ չե՞մ ասում:

Ես հարցրի, թե ինչպես է վարպետ Աբոն:

–Չի երևում: Նրա մազերը միշտ ես եմ կտրում, բայց արդեն մի ամիս է, չի եկել: Սակայն մի անհանգստացիր, նրան ոչինչ չի

պատահի: Վարպետը լեռան պես մարդ է: Դու ավելի լավ է պատմիր, թե ինչ կա Կովկասում:

Կապոցում, որ բերել էի վարպետ Աբոյին երեք տարի առաջ, հայաստանյան մրգեր էին՝ դեղձ ու տանձ: Դրանք ուղարկել էր Հայաստանում ապրող վարպետի դուստրը: Հյուսնն այստեղ ամուսնացել էր մի ռուս կնոջ հետ և վաղուց չէր տեսել դստերը: Իմ բերած մրգերն այնպես հուզեցին վարպետին, որ նա երկար արտասվեց ապա երկար խմեց ու հետո քնեց՝ գլուխը սեղանին դրած, և ես ստիպված էի հեռանալ՝ առանց հրաժեշտ տալու: Բայց ազնվագույն մարդու մի կերպար մնաց նոթատետրումս:

– Կարող ես հանել վերարկուդ, այստեղ տաք է,– ասաց Գիան ու դարձավ հաճախորդին,– մի բաժակ կխմես, Գերման Պալիչ:

Գերման Պալիչն ինչ-որ բան մռթմռթաց՝ թքոտելով շրթունքներին հավաքված փրփուրը: Իհարկե, կխմի, դա ի՞նչ հարցնելու բան է:

– Կայարանի սլաքավարն է, հանճարեղ ծերուկ,– ներկայացրեց նրան Գիան ու մի լիքը բաժակ մեկնեց:

– Դու Աբոյի բարեկա՞մն ես,– հարցրեց հանճարեղ ծերուկը՝ օդին կուլ տալով:

Ես գլխով արի: Դա այդպես չէր, բայց կարիք չկար բացատրելու սլաքավարին, որ ամեն ոք, ում անունը գրված է նոթատետրումս ուղիղ տառերով, իմ բարեկամն է:

Համենայն դեպս ես չհանեցի վերարկուս, չնայած Գիան լցրել էր երկրորդ բաժակը, իսկ սեղանի վրա՝ մկրատների, սանրերի, սրիչների ու «Գվոզդիկա» օդեկոլոնի կողքին, չգիտես որտեղից, կես սև հաց ու մի գլուխ սոխ էր հայտնվել: Վարսավիրն անընդհատ խոսում էր, մի վայրկյան չէր լռում, իսկ փրփուրը դեմքին սլաքավարը լուռ սպասում էր, թե երբ իրեն կտան հաջորդ բաժակը: Փոքրիկ վարսավիրանոցի պատի մի հսկա նկարից ժպտում էր ամբողջ հասակով կանգնած Վախթանգ Կիկա-

բիձեն: Այդ վրացին, որը միշտ խորհրդանշել է ժողովուրդների բարեկամությունը, հիմա էլ կանգնած էր իր ինտերնացիոնալ դիրքերում ու կարծես ասում էր՝ տղե՛ր, ինչո՞ւ ինձ էլ մի բաժակ չեք լցնում:

Երբ երեք տարի առաջ եկա վարպետ Աբոյի տուն, մուտքի մոտ ինձ դիմավորեցին նրա կատուները: Ավելի ուշ, սեղանի շուրջ, վարպետը երկար նայում էր ինձ խղճահարույց ժպիտով: Նրա ռուս կինը սեղանին էր դրել իմ բերած մրգերը, և վարպետը մի դեղձ էր վերցրել: Նա այդպես էլ չկերավ այն և երկար լռությունից հետո քնեց՝ դեղձը ձեռքին, և խղճահարույց ժպիտն այդպես էլ մնաց: Դա չտեսնված տխուր տեսարան էր: Հիմա կատուները չկային, և ես զարմանքով նկատեցի, որ մուտքի մոտից մաքրված չէր ձյունը: Այն վերածվել էր ցեխի, իսկ փոքրիկ պարտեզի ցանկապատը ծռված էր: Տան պատերը կեղտոտ էին ու անհյուրընկալ:

Վարպետի կինը անմիջապես ճանաչեց ինձ:

– Ամուսինս այստեղ չէ, նա վերադարձել է Հայաստան,– ու հանկարծ սկսեց լաց լինել,– նա այլևս չի վերադառնա: Իմ Աբոն երբեք չի վերադառնա...

Ահա նրանք, վրացի Ռամազը՝ խաչմերուկի կրպակ-դեղատան տերը, որը երդվել է երբեք ոչ մեկի պարտքով ապրանք չտալ, Ցմփոր Սուլեյմանը, որը նախանցյալ տարվա օգոստոսին իր հայրենի Ուզբեկստանից բերել էր տասնհինգ տոննա սեխ ու հիմա հարավամերիկյան բանանի առևտուր է անում, ադրբեջանցի «փիլիսոփա» Յուսուֆը, որը կանացի ներքնաշորեր է վաճառում՝ ալլահի օրհնությամբ ու Ֆրոյդի հորդորներով, օսուհի էլյան, փոքրիկ «Վեչերոկ» սրճարանի թմբլիկ տիրուհին ու միաժամանակ մատուցողուհին, որն անթաքույց հովանավորում է

մարմնավաճառներին և անկյունում միշտ մի ազատ սեղան պահում նրանց համար, գեղեցկուհի Ալյոնան՝ Բելառուսից եկած ամազոնուհին, աֆրիկացի սևամորթ Նգոյեն, որն աշխատում է կողքի բենզակայանում և եկել է նրբերշիկ ուտելու, ու որին Ալյոնան այդպես էլ չսիրեց:

Ահա նրանք՝ Մոսկվայի հյուրերն ու տերերը, կառուցողներն ու քանդողները, բարեկամներն ու թշնամիները: Ահա նրանք, որ սիրով, ատելությամբ կամ էլ պարզապես նստած են «Վեչերոկում» և լուռ ծամում են օսուհու համբերությունն ու գթասրտությունը:

Չկա միայն հայազգի Սահակը՝ գետնուղու ծխախոտի կրպակներից մեկի վարձառուն, որի գործերը լավ չեն, և որը տիկին էլյային պարտք է մոտ հազար ռուբլի:

Մետրոյի կանգառի մոտ, այս փոքր Բաբելոնում վաղուց արդեն *վեչերոկ* է: Բոլոր այս պատժվածների հետ ես ծանոթ եմ, նույնիսկ՝ գեղեցկուհի Ալյոնայի, որը երբեմն գնացուցակից դուրս ժպիտներ է ինձ նվիրում:

Մետրոյի կանգառից մինչև իմ վարձած բնակարանը յոթ րոպեի քայլելու ճանապարհ է, և ամեն անգամ այդ ճանապարհը սկսվում կամ վերջանում է «Վեչերոկում», նայած որ կողմից եմ գալիս: Եվ ամեն անգամ ինձ թվում է, թե ավելին ինձ պետք չէ, որովհետև այն, ինչ փնտրում եմ Մոսկվայում, այս սրճարանում է:

Երեկ տիկին էլյան ինձ պատմեց պատերազմում զոհված իր որդու մասին, և ես, ճիշտն ասած, լավ չհասկացա, թե խոսքը որ պատերազմի մասին էր: Երկու բաժակ խմեցի օսուհու հետ, հետո իմացա, որ որդին բանակ է զորակոչվել երկար չարչարանքների գնով Ռուսաստանի քաղաքացիություն ստանալուց հետո ու զոհվել Չեչնիայում: Տիկինը հիմա օգտվում է որոշ արտոնություններից, բայց մենակ է, սոսկալի մենակ, այն աստիճան, որ

գիշերները հաճախ է տուն տանում անհաճախորդ մնացած աղջիկներին:

Մնացածներն առայժմ Ռուսաստանի քաղաքացիություն չեն ստացել, բայց չեն էլ հուսահատվել:

Մինչև այստեղ մտնելս, երբ, ամեն օրվա պես, ծխախոտ էի գնում Սահակի կրպակից, պատահաբար նրա ձեռքին տեսա ՌԴԿԿ կանոնադրությունը:

– Ուզում եմ կոմունիստ դառնալ, մտնել ՌԴԿԿ շարքերը,– ի պատասխան իմ զարմանքի բացատրեց քսանամյա Սահակը,– այս իշխանություններին մեկ տարի է մնացել:

Ես ասացի, որ դրա համար հարկավոր է Ռուսաստանի քաղաքացի լինել, բայց նա վստահեցրեց, որ կանոնադրությունը կարդալը բավական է: Հետո խոստացավ ինձ ծանոթացնել հորեղբոր հետ, որը կանոնադրությունից բացի կարդացել է նաև կուսակցության ծրագիրը:

Տիկին Էլյայի կատուն, որի պոչը Նոր տարվա գիշերը պոկել են զբոսանքի դուրս եկած «Բոլշայա Վոլոկոլամսկայա» փողոցի շները և որը քիչ առաջ միզել է տիկնոջ ճտքակոշիկների մոտ ու մնացել առանց ընթրիքի, հիմա պտտվում է սևամորթ Նգոյեի ոտքերի շուրջ ու, նրա հանդեպ տածած իր մեծ սիրո դիմաց, քառորդ նրբերշիկ պահանջում: Մանավանդ որ Նգոյեն վաղուց արդեն կորցրել է ախորժակը, և նրբերշիկը միայն պատրվակ է նրա այստեղ գալու համար: Մտամոլոր աֆրիկացին երկու անգամ ինչ-որ բառ է արտասանում, որը, հավանաբար, «փըշտի» պես մի բան է, ապա, տեսնելով, որ կատուն չի հեռանում, որոշում է զրուցել հետը. «Ես երեք շաբաթ փող եմ հավաքում, ինձ զրկում եմ գրեթե ամեն ինչից, մինչդեռ այս աղջիկը չի ուզում նույնիսկ ինձ լսել»: Հետո Նգոյեն այնուամենայնիվ մի նրբերշիկ է նետում կատվին ու շարունակում. «Հիմարություն էր այստեղ գալը: Նախ՝ ունեցածս ողջ փողով վերարկու գնեցի, ապա փող հավաքեցի՝ տաք կոշիկ գնելու, հետո վարձածս սենյակից վռնդեցին, որովհետև օրումեջ ոստիկաններ էին գալիս՝ թմրանյութ փնտրելու, հետո ստիպված եղա նույն սենյակի համար կրկնակի վճարել... Բավական է, սկսում եմ փող հավաքել ինքնաթիռի տոմսի համար: Տուն եմ ուզում գնալ»:

Բայց կատուն արդեն հեռացել է Ռամազի մոտ՝ առնելով հենց նոր մատուցված հավի տապակայի բուրմունքը: Վրացին աչքի տակով նայում է նրան, մի պահ տարակուսում, հետո սկսում է արագ ուտել հավը, որ չլինի՝ հանկարծ նորից տարակուսի: Միայն թե նա էլ է ստիպված բացատրություն տալ կատվին, իհարկե՝ ափսեն դատարկելուց հետո: «Ի՞նչ ասեմ, գենացվալե, ես, իհարկե, կարող էի քեզ մի կտոր տալ, բայց որքա՞ն կարելի է տալ. պարտքով դեղ եմ տալիս հիվանդ ռուսներին, փող եմ տալիս առողջ վրացիներին, տալիս եմ հարկայինին, տալիս եմ դրամաշորթներին: Իսկ ի՞նչ է մնում ինձ... Չէ, գենացվալե, սա կյանք չէ, հավաքվել է պետք ու գնալ»:

«Տալի՜ս եմ, տալի՜ս եմ»՝ մռլտում է կատուն ու հուսահատ մոտենում Սուլեյմանին: Բայց ուզբեկը թեյ է խմում և ինչ-որ հաշվարկներ անում տետրում: «Դու էիր մնացել պակաս»՝ նա ոտքով մի կողմ է հրում կենդանուն: «Ինչպես ուզում ես շրջիր, տասը ռուբլի պակասում է: Համարյա մեկուկես կիլոգրամ: Աշխարհի ամենահիմար միրգն է բանանը: Մի հատ ավելացրու, երկու հատ պակասեցրու, իհարկե, կշփոթվես: Ամենաճիշտը սեխն է: Ինչ կշիռ էլ կանգնի՝ վերջնական է, ինչքան էլ ուտես՝ չես կշտանա: Հասկանո՞ւմ ես, կատո՛ւ: Ասենք, որտե՞ղից հասկանաս, դու սեխ չես ուտում: Ամբողջ օրը կանգնիր սառնամանիքին, որպեսզի վերջում տասը ռուբլի պակասի: Եվ հանուն ինչի՞: Այս մի բաժակ թեյը Սամարղանդում էլ կարելի է խմել»:

Սուլեյմանը որոշում է մեկ անգամ էլ հաշվել և ավելի կոպտորեն է հրում կատվին՝ վերջնականապես վիրավորելով նրա ինք-

նասիրությունը և ստիպելով քայլել դեպի Յուսուֆի սեղանը:

Հագուստեղենի ադրբեջանցի վաճառականը պելմեններ է ուտում և, տեսնելով անպոչ հյուրին՝ մի պահ դադարեցնում է ծամելը: «Չկծի՞ հայվանը: Սրանցից ամեն ինչ կարելի է սպասել: Հեռու մնա, թե չէ կկանչեմ էլյային: Դուք՝ կատուներդ, անօգուտ կենդանիներ եք: Մուկ բռնելը մեծ բան չի: Ինչպես կասեր մի փիլիսոփա... Մի քսվիր, օղռա՛շ»...

Յուսուֆը վախեցած վեր է թռչում տեղից, կատուն վախեցած փախչում է Ալյոնայի մոտ: Ամազոնուհին ցած է դնում սուրճի բաժակն ու գրկում կենդանուն: «Քեզ նեղացնո՞ւմ են, անուշս: Այդպես է, անպաշտպաններին միշտ նեղացնում են: Սրտիդ մոտ մի ընդունիր, այդպիսին է մեր կյանքը, ուշ է որևէ բան փոխելը: Ինձ երեկ այնպես ապտակեցին, որ մինչև հիմա ականջիս մեջ սուլոց եմ լսում: Եվ ինչի՞ համար. ընդամենը հրաժարվեցի թափթփված սենյակը հավաքել: Մարդիկ վճարում են և չգիտեն, թե ինչի համար են վճարում: Հրաժարվեցիր՝ կարող են խփել, հայհոյել, վռնդել: Ու ոչ ոք չի պաշտպանի: Ինչ արած, մենք այստեղ օտար ենք: Տանը՝ Գոմելում, կարծում են, թե ես այստեղ օծանելիք եմ վաճառում: Աստվա՜ծ իմ, ե՞րբ եմ վերադառնալու տուն»:

Սակայն կատուն կարծես համաձայն չէ Ալյոնայի հետ: Թերևս համաձայն չէ, որ ինքն օտար է: Մի քանի ամիս առաջ, երբ ինքը դեռ պոչ ուներ... Լավ, դա կարևոր չէ: Համենայն դեպս, ինքը բոլորին այստեղ ճանաչում է և ավելի լավ, քան իրենք իրենց: Սա ընդամենը մի հերթափոխն է, մեկ ժամ առաջ այստեղ էին ուրիշ սուլեյմաններ ու ռամազներ, մեկ ժամ հետո կգան ուրիշները: Հետո նորից ու նորից: Մինչդեռ ինքն անընդհատ այստեղ է և այստեղ կմնա գիշերն էլ, եթե իհարկե տիրուհին սոսկալի մենակությունից իրեն հետը տուն չտանի: Սա արդեն սովորական է: Այսքանից հետո ասեք, որ ինքն այստեղ օտար է:

Սահակն այդպես էլ չեկավ: Էլյան մի օր էլ կհամբերի, հետո ինքը կգնա նրա մոտ: Հազար ռուբլին մեծ փող չէ, բայց փողոցում էլ թափված չէ: Այդ Սահակը հաճելի երիտասարդ է, բայց միշտ ուշացնում է պարտքը: Ինքը՝ Էլյան, հասկանում է, որ նրա գործերը լավ չեն ու դրա համար էլ չի նեղսրտում, երբ տղան հաշիվը չի փակում: Բայց գոնե սնվի այստեղ անիրավը: Միայն խմում է և հետն էլ ուրիշներին հյուրասիրում: Իսկ ո՞ւմ գործերն են լավ: Այստեղ եկողներից ինքը որևէ մեկին չգիտի, որի գործերը լավ լինեն: Համենայն դեպս, իրենք այդպես են ասում: Տարօրինակ մարդիկ են այս հարավցիները: Խնդրեմ, այս ուզբեկը: Ամեն անգամ գալիս է, մի բաժակ թեյ վերցնում ու ժամերով նստում: Կարծես չի կարող իր հաշիվները տանը անել: Եվ եթե իրոք նրանց գործերն այդքան վատ են, ի՞նչ են անում այստեղ, թող վերադառնան իրենց երկրները: Ինքը՝ Էլյան, իր գործերից չի դժգոհում, վաղուց արդեն ամեն ինչ կարգավորվել է, միայն թե մենակ է, դաժանորեն մենակ... Վաղուց արդեն հայրենիքում չի եղել: Այսինքն՝ այն օրվանից, ինչ որդու հետ եկավ այստեղ: Դա իր կյանքի ամենամեծ սխալն էր, և հիմա ոչինչ աչքին չի երևում: Որքան դաժան է այս ամենը: Գիշերը կատվին կտանի տուն:

Հերթափոխն աստիճանաբար փոխվում է: Սուլեյմանին փոխարինում է Մուսթաֆան, Ռամազին՝ Թենգիզը, Յուսուֆին՝ ալլահը, որ եկել է վերջինիս հաշիվները կատվի հետ ճշտելու: Մինչդեռ Նգոյեն տեղից չի շարժվում: Նգոյեն, որին մի բան է պահում այս ցուրտ ու անհյուրընկալ երկրում: Իսկ նա, ով պահում է աֆրիկացուն, հիմա մի ականջում լսում է հայրենիքի ու տան կանչը, իսկ մյուսում՝ երեկվա ապտակից մնացած սուլոցը:

Բայց մի՞թե միայն Ալյոնային են ապտակել: Մի՞թե այդ սուլոցը բոլոր այս մարդկանց ականջներում չի լսվում:

Ահա նրանք՝ իռլանդացի դարբին Դաֆը, որ արդեն կես տարի աշխատանքի թույլտվության է սպասում այստեղ՝ ինտենսիվորեն ծախսելով իռլանդական իր խնայողությունները իռլանդական վիսկիների վրա, ռուս գործարար Բոգդանը, որ զբաղված է ռուսական էժան աշխատուժ ներկրելով, նարնջագույն մազերով սերբ ուսանողուհի Միլենան, որ հյուրանոցային սպասարկում է ուսանում այստեղի քոլեջներից մեկում, է՛լ ավելի նարնջագույն մազերով իտալացի Սեբաստիանը, մոտակա ակումբի դիսկ-ժոկեյը, որի համար էլ հատկապես գալիս է Միլենան, և Նորին գերազանցություն Կառլոսը, բարմեն Սալվադորի թութակը, որին իր մեքսիկացի տերը երեկոները բաց է թողնում վանդակից՝ իհարկե, նախապես փակելով սրճարանի դուռը: Ահա նրանք՝ Հոլիվուդի այս միջին հյուրանոցի ժամանակավոր բնակիչները, որ երեկոները հաճախ հավաքվում են Սալվադորի սրճարանում խմելու և ամերիկյան բիլիարդ խաղալու: Չկա միայն հայազգի Մուկուչը, որը երեկ չէ առաջին օրը Դաֆին պարտվել է քառորդ շիշ "Jack Daniels" ու չքվել:

Նորին գերազանցություն Կառլոսը թառել է բիլիարդի սեղանի եզրին և սպասում է, թե ովքեր են առաջինը խաղալու: Նրան անպայման կքշեն սեղանից և ստիպված կլինի թառել դաշնամուրին, եթե, իհարկե, մինչ այդ Դաֆը որոշած չլինի նվագել, ինչը նա հաճախ է անում, իսկ եթե այդպես լինի, Կառլոսը կսկսի իր սիրելի խաղը՝ նախ կթառի Դաֆի ուսին, քանի որ վերջինս չի առարկում, ինչպես ասենք սրիկա Բոգդանը, որն այնպես է վախենում իրենից, կարծես նա ոչ թե սովորական ջամայկյան թութակ է, ճիշտ է իսպանական հնչեղ անվամբ, այլ երկգլխանի ռուսական արծիվը, որ եկել է ազգադավ սրիկային իր զույգ կտուցներով կտցահարելու: Ուրիշ է Դաֆը և ուրիշ են այս նարնջագույն գլուխները: Առաջինը երբեք դեմ չէ, երբ թութակը նստում է

իր ուսին: Անգամ երբ բիլիարդ է խաղում: Ժպտում է թռչունին և շոյում գլուխը. անմիջապես հասկանում ես, որ մարդն այստեղ է եկել ազնիվ նպատակներով: Ինչ վերաբերում է նարնջագույն գլուխներին, ապա Կառլոսը նրանց շատ է սիրում, հիմնականում այն պատճառով, որ մեծ նմանություն է տեսնում նրանց և իր միջև: Դե, իսկ Սալվադորը իրեն կուտ է տալիս:

Բայց այսօր բիլիարդի սեղանին ոչ ոք չի մոտենում: Բոլորը նստած են առանձին, տարօրինակորեն լուռ ու տարբեր բաներ են խմում: Ոչ ոք Կառլոսի վրա ուշադրություն չի դարձնում, և թռչունը ձանձրանում է: Ցատկում է բիլիարդի սեղանից, մի պտույտ անում ստվարաթղթե ջահի շուրջն ու վայրէջք կատարում Դաֆի ուսին ճիշտ այն պահին, երբ իռլանդացին իրեն վիսկի է լցնում: «Կխմե՞ս, բարեկամ,– ժպտում է Դաֆը,– դու համարձակ թռչուն ես: Գիտե՞ս, որ իմ նախնիները բազեներ էին վարժեցնում: Իմ նախնիները համարձակ մարդիկ էին: Նրանք սիրում ու պաշտպանում էին իրենց երկիրը: Իմ երկիրն Իռլանդիան է, որը ես չեմ տեսել կես տարի: Ու չգիտեմ՝ կտեսնե՞մ արդյոք նորից: Ինձ ուրիշ բան է վիատեցնում: Բայց դու դա չես հասկանա և առհասարակ ինձ այսօր հանգիստ թող, ես պետք է խմեմ մի քիչ»: Դաֆը թափ է տալիս ուսը, և թութակը զարմացած լքում է նստատեղը՝ հավանաբար չհասկանալով, թե ինչ պատահեց այս մարդուն: Եվ ինչո՞ւ են այսօր բոլորն այսչափ տխուր: Կառլոսն էլի մի քանի պտույտ է տալիս ու թառում Սեբաստիանի ուսին: Իտալացին ննջում է՝ գլուխը թևերին, կողքը մի շիշ գինի: «Եկա՞ր, սատանա,– ուշքի է գալիս նա,– ի՞նչ ես ուզում: Քո ճաշակով երաժշտություն ես չունեմ: Եվ այսօր ես դիջեյ չեմ: Եվ առհասարակ ես հոգնել եմ: Տեսնո՞ւմ տես, գինի եմ խմում. իտալական գինի: Ես գինի չեմ սիրում, բայց այսօր գինի եմ խմում: Որովհետև կարոտել եմ հորս, կարոտել եմ մորս, մեր խաղողի այգին և մեր փոքրիկ ավանը, որ կոչվում է Մուլինո:



Այնտեղից ես հեռացա ուղիղ երեք տարի առաջ՝ իննսունվեցի աշնանը, երբ մեր այգիներում արդեն հավաքում էին խաղողը: Այդ տարի բերքն այնքան շատ էր, որ հայրս ստիպված էր հավաքելու համար մարդ վարձել: Մինչդեռ ուրիշ տարիներին գործը գլուխ էինք բերում մեր ընտանիքի անդամներով՝ ծնողներս, երեք քույրերս և ես. ճիշտ է, ես մի քիչ աշխատելուց հետո պառկում էի թփերի տակ ու կիթառ նվագում՝ նայելով գլխավերևումս կախված գունեղ ողկույզներին, որոնք, հիմա եմ հասկանում, ինքնին երաժշտություն էին: Համենայն դեպս, ես համաձայն չէի հորս ծրագրերի հետ, հայրս ուզում էր, որ ես գինեգործություն սովորեմ: Ես կիթառ էի նվագում ու մի օր էլ սկսեցի ինքս երգեր գրել: Եվ իննսունվեցի աշնանը հավաքեցի ճամպրուկս ու մեկնեցի Մուլինոյից: Նախ՝ Նեապոլ, հետո՝ Միլան, ուր կես տարի քարշ եկա՝ այս ու այն սրճարանում նվագելով: Բայց կարողացա փող հավաքել ու տպել իմ երգերի ձայնասկավառակը, որը պարզվեց ոչ ոքի պետք չէ: Հետո մի ամերիկացի զբոսաշրջիկ ինձ խորհուրդ տվեց վերցնել երգերս ու գնալ Հոլիվուդ, և ահա ես այստեղ եմ, միայն թե ձայնասկավառակներս մինչև հիմա մնացել են ճամպրուկումս, և արդեն մեկ տարի է՝ չեմ երգում: Մազերս ներկել եմ նարնջագույն ու պտտեցնում եմ ուրիշների երգերը, և զզվել եմ դրանից ու այս ամենից: Եվ ահա գինի եմ խմում ու հիշում մեր խաղողի ողկույզների երաժշտությունը: Հասկացա՞ր, թութակ, իսկ հիմա թռիր այստեղից, ես գինի եմ խմում»:

Եվ Կառլոսը վեր է թռչում Սեբաստիանի կտրուկ շարժումից՝ հավանաբար մտածելով, որ սա էլ է ցնդել, և շարունակելով չհասկանալ, թե ինչ են լսել այսօր այս մարդիկ: Կառլոսը թևածում է դեպի Միլենան և նրբորեն իջնում սերբուհու ուսին: Աղջիկը նստած է բազմոցին՝ մի ոտքը ծալած տակը և իր պես երկարոտն բաժակից ինչ-որ կոկտեյլ է խմում, հավանաբար իր սիրածը: «Ողջո՛ւյն, սիրելի՛ս,– նա շոյում է թութակի կտուցը: – Ինչո՞ւ այդ տղան քեզ քշեց: Շատ ինքնահավանն է: Բայց մռութը սիրուն է և սիրուն երգեր է երգում: Իսկ ես հոգնել եմ նրա հետևից վազել: Հավանաբար, նա ուրիշ մե-

կին է սիրում, և ես իզուր մազերս նարնջագույն ներկեցի: Ի՞նչ կասեր Ստանիսլավը. Ստանիսլավն իմ ընկերն է և ինձ իսկապես սիրում է: Նա հիմա Բելգրադում է: Իմ այստեղ գալն ի~նչ ողբերգություն էր նրա համար: Ես խոստացա, որ հավատարիմ կմնամ նրան, և նա հավատում է: Ամեն օր ինձ նամակ է գրում և չգիտի, որ ես մազերս ներկել եմ նարնջագույն՝ որ նարնջագույն մազերով մի իտալացի ուշադրություն դարձնի վրաս: Ի՞նչ հիմարն եմ ես. ի՞նչ մենակ եմ ես. ինչպե՞ս եմ ուզում թողնել ամեն ինչ ու վերադառնալ Բելգրադ»: Միլենան հանկարծ վեր է կենում տեղից, մի կողմ հրում սեղանը և վազում դեպի դուռը: Թութակը խուճապահար թռչում է նրա ուսից և հավասարակշռությունը կորցրած՝ թևածում սենյակում՝ առաստաղին, մերթ պատերին, անկախ իրենից հայտնվում է Միլենայի հետևից բաց մնացած դռան մոտ, հետո դռնից դուրս և անկախ իրենից թռչում է այն ուղղությամբ, ուր Ջամայկան է:

17 նոյեմբերի, 1999

Բոլոր դեպքերում կարելի էր համարել, որ մենք գործը գլուխ բերեցինք: Երբ հինգ օր առաջ Վլադիմիրի ու Մկոյի հետ օդակայանում դիմավորում էինք պարոն վան Վիլետին, մտավախություն ունեինք, որ կարող է ոչինչ չստացվել:

Մեր մտավախությունը ուներ պատճառներ:

Այն, որ մեր պետական այրերը թմբկահարում էին, թե մեր երկրում առկա է հրապուրիչ ներդրումային դաշտ, նույնն է, ինչ Դեղին ծովի շնածկները հրապուրվեն Արմավիրի արհեստական լճերի կարմրախայտերով, ինչը կարող է պատահել, սակայն մերոնք շնածկներից պահածոներ կսարքեն մինչև նրանց հրապուրվելը և պահածոների

պիտակներին անպայմանորեն կավելացնեն «ոսկե» կամ «թագավորական» բառերը: Բացի այդ, բիզնեսում հայտնի խոսք կա՝ սնանկ մարդու հետ գործ չեն բռնում: Առավել ևս, երբ նա հենց նոր է սնանկացել: Անկասկած, մեզ մոտ առկա էին ինդուստրիալ փղեր և փղիկներ, որոնց, սակայն, մենք մորթազերծ արեցինք ու վաճառեցինք և հետո միայն արտասահմանցի վարժեցնողներին խնդրեցինք զբաղվել արդեն չեղածով: Եվ ամենագլխավորը. նրանք, ովքեր, այնուամենայնիվ, պիտի գային այստեղ իրենց փողերով, լավ չէին պատկերացնում, թե ինչ կամայականությունների պիտի հանդիպեն՝ սկսած օդակայանի բեռնակրից մինչև պետության «բեռը կրողները»:

Մեր գործի պարագան թեև մի քիչ տարբեր էր, և վերոնշյալ խառնաշփոթը կարելի էր շրջանցել, այնուամենայնիվ, նույնն էր իրականությունը, որի շրջապտույտում մեր հոլանդացի շնածուկը պիտի իրեն հայտնաբերեր: Եվ պետք է նշել, որ մենք հնարավորինս ջանադրեցինք նրան զերծ պահելու պահածոյացվելուց և ուրիշ մանր ու միջին ձկների կամայականություններից: Եվ դա մեզ հաջողվեց:

Բայց և այնպես, երբ այդ օրը ճանապարհում էինք պարոն վան Վիլետին, օդակայանում մեզ հետ չէր Մկոն: Վլադիմիրին և Լիզային հաջողվել էր համատեղ ջանքերով նրան դուրս թողնել խաղից և հիմա նրանք իրենց շատ լավ էին զգում: Առհասարակ, ես ինձ այլևս դրության տերը չէի զգում: Ընդամենը «Իվենթս Հայաստան» ընկերության յոթ տոկոս բաժնետեր էի ու, չնայած հիմնական բաժնետեր հանդիսացող հոլանդական կողմը ինձ էր վստահել ընկերության տնօրենի պարտականությունները, գիտեի, որ դա ընդամենը հավասարակշռություն պահելու համար է, և իմ խոսքը որոշիչ է լինելու լավագույն դեպքում «կենցաղային» հարցերում: Իսկ ընկերությունը կայացնելու և շահութաբեր դարձնելու համար դեռ աշխատել էր պետք:

18 Նոյեմբերի, 1999

– Դ. Մարկոսյանը գրում էր բնապահպանական հոդվածներ մեր շաբաթաթերթի համար: Նա միայնակ ապրող ծեր գիտնական էր: Ամեն նոր հոդված բերելիս խնդրում էր տպագրել այն առաջին էջում և տեղեկացնել իշխանություններին պրոբլեմի մասին: Նրան բացատրում էին, որ թերթի ֆորմատը թույլ չի տալիս հոդված տպել առաջին էջում, բայց նա, միևնույն է, վիճում էր ամբողջ օրը և միաժամանակ զբաղեցնում հեռախոսը՝ խմբագրության անունից զանգելով իշխանություններին: Նրա բարձրացրած խնդիրներն իրապես շատ կարևոր էին, բայց չարչարվել էր պետք նրա հոդվածները խելքի բերելու համար: Սակայն ոչ այն պատճառով, որ Դ. Մարկոսյանը վատ էր գրում: Խնդիրը նրա չափազանցություններն էին: Քաղաքի էկոլոգիական հիմնահարցերի մասին իր հոդվածները նա կարող էր վերնագրել՝ «Աշխարհի վերջը», կամ մի գործարանի արտանետումների մասին հոդվածը նա կարող էր սկսել այսպես՝ «Արևելյան Եվրոպայի ողջ բնակչությունը կարող է թունավորվել մի քանի օրում...»: Մի օր՝ ընդմիջման ժամին, խուճապահար գիտնականն իրեն ներս գցեց խմբագրություն և բռունցքը սեղանին խփելով՝ սկսեց ինչ-որ բան ասել, որ անկարելի էր հասկանալ: Աշխատողները ստիպված էին ջուր տալ նրան ու հանգստացնել, ինչից հետո միայն նա խոսեց ավելի հասկանալի. «Մինչ դուք այստեղ ուտում եք, զինվորները մասսայական բռնաբարություն են իրականացնում փողոցում»: Նրան հարցրին, թե ում են բռնաբարում: «Բռնաբարում են ողջ փողոցը և շուտով կանցնեն ողջ աշխարհին»,– բացատրեց Դ. Մարկոսյանը և վերցրեց հեռախոսը՝ զանգելու իշխանություններին: Բոլորը վազեցին դեպի փողոց՝

տեսնելու, թե ինչ է կատարվում: Զինվորներն ընդամենը կտրտում էին ծառերի սերտաճած ճյուղերը՝ բոլորովին չկասկածելով, որ գիտնականների կողմից կարող են մեղադրվել բռնաբարության մեջ:

– Ի՞նչ կապ ունի այս ամենը մեր գործի հետ,– հարցրեց Սերոբ Սերոբյանը:

– Մի քիչ համբերություն,– ասացի ես ու շարունակեցի,– չմոռանամ ասել, որ այդպիսի բաներ, ցավոք, լինում են:

– Ինչե՞ր են լինում, ինչի՞մասին եք դուք խոսում,– Սերոբ Սերոբյանը ակնհայտորեն նյարդայնանում էր:

– Բռնաբարության. N զորամասի հրամանատարը մի անգամ ինձ պատմեց երկու զինվորի և մի սերժանտի մասին, որոնք բռնաբարել են ... էշի: Մի օր, թաքուն մի շիշ խմելուց հետո, սերժանտը հրավիրել է ընկերներին զվարճանալու: Ուղեկցել է նրանց գյուղամերձ դաշտերը և ցույց տվել ծառից կապած էշին: Երբ ընկերները զարմացած նայել են նրան, նա բացատրել է, որ էշ քշելը չէ իր նկատի ունեցածը: Բնականաբար, ընկերները տատանվել են, և խնդրել են սերժանտին գնալ առաջինը: Սերժանտը մոտեցել է երկարականջին հետևից և ոգևորված արձակել շալվարը: Բայց պարզվել է, որ էշը կամ տրամադրություն չունի, կամ չի հավանում նրան: Սերժանտը խնդրել է ընկերներին օգնել: Երբ վերջապես նրանց հաջողվել է հանգստացնել համառ կենդանուն, և սերժանտը սկսել է իր գործը, էշը ձգել է մկանները և սկսել վազել դեպի գյուղը՝ հեծյալը մեջքին: Զինվորներն ի վերջո կարողացել են կանգնեցնել զույգին, բայց դա եղել է գյուղի կենտրոնում՝ անհայտ զինվորի հուշարձանի մոտ, ուր այդ պահին անց էր կացվում բնակչության տարեկան հավաքը:

– Ի՞նչ կապ ունի այս ամենը մեր գործի հետ,– կրկին հարցրեց Սերոբ Սերոբյանը:

– Զինվորների մասին այս պատմությունը ոչ մի կապ չունի, պարզապես հիշեցի դա: Կապ ունի իմ բարեկամ գիտնական Դ. Մարկոսյանը: Բանն այն է, որ նա վաղուց արդեն յուրովի պայքար է տանում ձեր ղեկավարին՝ Կոնստանտին Բալյանին պատկանող գործարանների դեմ, որոնք, ըստ նրա, աղտոտում են շրջակա միջավայրը:

– Ախ այդ նա՞ է հոդվածներ գրում թերթերում:

– Նա է: Միայն թե նրա հոդվածները նպատակին չեն ծառայում: Բայց վստահ եմ, եթե նա իմանա մեզ հայտնի միջադեպի մասին, հարցն այլ կերպ կդնի:

– Դուք շարունակում եք ինձ սպառնալ, առանց իմանալու մի կարևոր բանի մասին:

– Ի՞նչ կարևոր բան:

– Այն, որ թյուրիմացություն է եղել իսկապես: Պորտֆելը գտնվել է: Այսինքն՝ այն չէր էլ կորել: Պարզապես Պարոն Բայանը այդ ահավոր դեպքից հետո շփոթվել էր: Հիմա նա ինձ խնդրել է ձեզանից շնորհակալություն հայտնել իրեն օգնելու համար և մոռանալ տհաճ պատմությունները: Եվ խնդրել է ձեզ փոխանցել, որ եթե հանկարծ մի օր այդ պատմություններն ի հայտ գան... Դե՛, դուք հասկանում եք:

6 նոյեմբերի, 1999

Այնտեղ, ուր ավարտվում էր լողափը, սկսվում էին ժայռերը, որ տեղ-տեղ մխրճվում էին ծովի մեջ, սև էին ստվերում և երկնագույն՝ լուսնի լույսի տակ, երբեմն մարդկային կիսադեմ էին հիշեցնում, երբեմն էլ նման էին ամպերի՝ ծով-երկնքի ֆոնին: Ավազի փոխարեն արդեն փոքր ու մեծ քարեր էին ու ծովախխունջների պատյաններ, որ փայլում էին մինչև ոտատակ ընկնելն ու փշրվելը: Փայլում էր նաև ծովը՝ սառն ու անհրապույր, և ալիքներն ափ էին բերում հասկանալի մի տխրություն ու սառը մի բուրմունք: Կարծես այստեղ էր անսկիզբ ու անվերջ, չհայտարարված ու չհաստատված, հավանաբար պատահական սիրո հանգրվանը: Համենայն դեպս, համբուրվելու համար ավելի լավ տեղ անկարելի էր գտնել:

Շապիկի լուսանկարը՝ Խաչիկ Թյուրաբյանի

Հրատարակչության տնօրեն՝ Է. Ս. Մկրտչյան
Սրբագրիչ՝ Ն. Ն. Փարսադանյան
Ձևավորումը և շապիկի համակարգչ. մշակումը՝ Ժ. Ա. Հակոբյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60/84: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 12 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

«Զանգակ-97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
375051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28,
ֆաքս՝ (+374 10) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am,
էլ. կայք՝ www. zangak.am, www. book.am

www.zangak.am www.book.am